

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ

ԱԾԽԱՐՅԱԳՐՈՒԹՅՈՒՆ

373
Մ-43

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1938

373

Մ-43

48

ՄԵԹՈԴԱԿԱՆ
ՈԳՆՈՒԹՅՈՒՆ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ
ԱԾԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

57.685

27 JUN 2013



2815
38

Ա Շ Խ Ա Ր Հ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

(Վուչ րիվ միջնակարգ դպրոցների համար)

Կրկնութունը աշխարհադրության դասավանդման ընթացքում ունի բացառիկ մեծ նշանակություն. նրան պետք է հասկացնել անհրաժեշտ տեղ ժամանակի տեսակետից և մեծ ուշադրություն՝ դասատուի կողմից: Կրկնութունն ապահովում է աշակերտության գիտելիքների հաստատությունն ու նիստեմատիկությունը:

Ընդգծելով կրկնության նշանակությունը՝ Լուսժողովուրդի Ժրադրերը դրա համար հատուկ ժամանակ են առանձնացնում՝ յուրաքանչյուր դասարանի համար տարվա ընթացքում 12-17 փամ: Ամեն մի դասատու իր աշխատանքները պլանավորելիս պետք է նախատեսի այդ ժամանակը կրկնության համար:

Բայց ժամանակի առանձնացումը դեռ չի ապահովում կրկնության վերահին ու արդյունավետությունը: Դասատուից պահանջվում է մանրազնին կերպով նախապատրաստվել կրկնության համար վոչ պակաս չափով, քան յուր դասը տալու համար:

Դպրոցական պրակտիկայում կրկնության համար առանձնացված ժամերն ըստ մեծի մասին ողտադործվում են կամ նոր նյութ անցնելու վրա, կամ հաճախ հարցնելու վրա:

Այն դեպքում, յերր կրկնությունը տարվում է հարցերի ձևով, այդ հարցումները պետք է կադմակերպվեն ու մշակվեն անպես, վոր հարցերին մասնակցեն դասարանի բոլոր աշակերտները:

Այդ հաջողվում է նախ՝ հարցն ամբողջ դասարանին ուղղե-
լով, յերկրորդ՝ աշակերտութեան համար հարցի նոր ձևի դրու-
մով: Իհարկէ նոր պետք է լինի ինքը՝ հարցը և նրա տվյալ ձևա-
կերպումը, իսկ այդ հարցի պատասխանը պետք է աշակերտնե-
րին ծանոթ լինի ընթացիկ աշխատանքի ժամանակ և հարցի բո-
վանդակութունը չպետք է ավելի բարձր լինի, քան համապա-
տասխան դասարանի աշակերտութեան դիտելիքների մակարդակը:

Այսպիսով խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի ուսուց-
չի կողմից նախորդ կազմված հարցերով մոբիլիզացիայի յենթար-
կենք աշակերտների ունեցած դիտելիքները, ամբայնենք նրանց
նոր կապակցութուններով (յերբեմն այստեղ զուգահեռ կերպով
կարող են տրվել նաև նոր, լրացուցիչ տեղեկութուններ):

Ուսուցիչը հարցն ուղղում է ամբողջ դասարանին: Փոքրիկ
դադարի ընթացքում բոլոր աշակերտները պատրաստում են
պատասխանը, վորից հետո ուսուցիչը մեկն ու մեկին հարցնում
է: Պատասխանի մասին մտածում են բոլորը, վորովհետև
ուսուցիչը կարող է հարցնել ամեն մեկին: Պետք է աշխատել
բոլորին ընդգրկել հարց ու պատասխանի այդ աշխատանքնե-
րում, դժվար տեղերում ներգրավելով ուժեղ աշակերտներին,
բայց անուշադիր չթողնելով և միջակներին՝ սովորաբար նման
դեպքերում լուսկյաց աշակերտներին:

Հարցերը պետք է տրվեն վորոշակի սխտեմով, և դասի
վերջին աշակերտները կվերականգնեն իրենց մտքում կրկն-
վող թեմայի բոլոր հիմնական մոմենտները:

Աշակերտների ակտիվութունն ու ուշադրութունը ուժե-
ղանում են մի այլ ձևով ևս. յերբ աշակերտներից մեկը հրա-
վիրված է պատասխանելու, մյուսները լսում են լուռ, մաս
չբարձրացնելով: Յեթե պատասխանողը սխալ է կատարում,
մյուսներն այդ մասին ազդանշան են տալիս՝ ձեռք բարձրացնե-
լով: Սխալը պետք է ուղղի ինքը՝ պատասխանողը: Յեթե նա չի
կարող, դասատուն հարցնում է ձեռք բարձրացնողներից մեկին,
վորն ասում է, թե ինչումն է սխալը և տալիս է ճիշտ պատաս-
խանը:

Աշակերտներից նրանց, վորոնք ժամանակին և ճիշտ

ուղղումներ ու լրացումներ են կատարում մյուսներին հարցնե-
լու ժամանակ, դասից հետո նրանց ևս զնահատական է դր-
վում:

Վորպեսզի հետաքրքրութունը դեպի աշխատանքը դասա-
րանի կողմից չթուլանա և վորպեսզի կրկնութունը վոչ միայն
հենվի աշակերտների հիշողութեան վրա, անհրաժեշտ է հարցե-
րին տալ մի վորք այլ ձևակերպում, քան այդ արվում է թեմա-
յի անցման ժամանակ, և, վորքան հնարավոր է, նույն դասի
ընթացքում այդ հարցումները դարձնել զանազանակերպ:
Հատկապես ցանկալի յեն այնպիսի հարցերը, վորոնք պահանջում
են յերևույթների հակադրում:

ՈՐԻՆԱԿ. Երբ դասարանում ավարտված է «Ասիայի ընդ-
հանուր տեսութունը» թեման:

ՀԱՐՑԵՐ. Յույց տուր Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի
ծովերը և յուրաքանչյուրի մասին ասա, թե ինչ թերակղզիներով
ու կղզիներով են նրանք բաժանվում միմյանցից, ինչ նեղուց-
ներով են միանում իրար հետ և ինչ դետեր են թափվում նրանց
մեջ:

Նույնը՝ Ասիայի արևելքի, հարավի և արևմուտքի ծովերի
մասին:

Անվանիր և ցույց տուր Ասիայի թերակղզիները. ասա՝ վոր
յերկրների կազմում են գտնվում նրանք կամ ի՞նչ յերկրներ
են նրանց վրա տեղավորված:

Անվանիր և ցույց տուր այն լեռները, վորտեղից սկիզբ են
առնում ԽՍՀՄ-ի Ասիական մասի դետերը, ցույց տուր խա-
ղետները:

Անվանիր և ցույց տուր Խաղաղ և Հնդկական ովկիանոսների
ավազանի դետերը և ասա, թե վոր յերկրներով են նրանք հոսում:

Անվանիր և ցույց տուր այն լեռները, վորոնք կլիմայական
անջատիչներ են հանդիսանում, այսինքն՝ բաժանում են յերկու
տյանպիսի հարևան շրջաններ, վորոնք միանդամայն տարբեր կլի-
մաներ ունեն: Վորոնք են այդ շրջանները և ի՞նչպես է նրանց
կլիման:

Ասիայի վոր յերկրներում է, վոր մուսոններն ազդեցութուն
են թողնում կլիմայի վրա:

Վո՞ր յերկրներ ժիջե լեռներն են հանդիսանում սահման և վո՞ր լեռները:

Յուշց տուր և անվանիր ԽՍՀՄ-ի հարևան պետութիւնները Ասիայում:

Նման հարցեր կարելի յե տալ և Դ-րդ դասարանում՝ ԽՍՀՄ-ի վարչաքաղաքական բաժանումն անցնելուց հետո: Արինակ՝

Յուշց տուր բոլոր մարզերը և ավտոնոմ հանրապետութիւնները, վորոնց միջով հոսում է Վոլգա գետը (կամ վորոնք տեղադրված են Վոլգայի ավազանում):

ԽՍՀՄ-ի վարչական վո՞ր միավորներն են ընկած Սև ծովի (կամ Կասպից ծովի) ավազանում:

Յուշց տուր ԽՍՀՄ-ի վարչական այն միավորները, վորոնք տեղադրված են Հյուսիսային (կամ Հարավային) ծովափերին, արևմտյան սահմանում, հարավային սահմանում և այլն:

Այդպիսի հարցերը շատ բազմազան են լինում կրկնութեան ժամանակ և միշտ ել այդ հարցերը կարելի յե տալ տարբեր ձևակերպումով, քան այդ արված եր դասի ժամանակ:

Հնարավոր է և կրկնութեան մի այլ ձև, հարցման այնպիսի ձև, վոր ընդգրկէ ամբողջ դասարանը: Դա արագ հարցման ձևն է:

Պատին կախված է Յեվրոպայի քարտեզը: Սեղանների վրայից վերցված է ամեն ինչ: Պատասխանող աշակերտները հարցին պատասխանում են իրենց տեղից, հեռվից նայելով քարտեզին: Ամեն մեկին տրվում է մի հարց: Քարտեզի մոտ կանչվում է միայն նա, ով սխալվում է: Դնում եմ հարցը, բացատրում եմ, թե ինչպիսի կարգով պետք է տրվեն հարցերիս պատասխանները և արագ տալիս եմ այն աշակերտի աղջանունը, վորը պետք է հարցիս պատասխանի:

Առաջարկում եմ անվանել Յեվրոպայի թերակղզիները հերթով՝ Հյուսիսից—Արեւելք:

Մեկ-մեկ դիմում եմ աշակերտներին: Սարգսյան, Կարապետյան, Վարդանյան, Տիգրանյան:

Աշակերտները պատասխանում են՝ Կանին, Կոլա, Սկանդե-նավիա, Յուտլանդիա և այլն:

Այդ ձևով կրկնվում են ծովերը, ծոցերը և նեղուցները, Հյուսիսային, Բալթիկ և այլ ծովեր թափող գետերը:

Անվանում եմ վորեւէ յերկիր և պահանջում եմ հերթով անվանել այն յերկրները, վորոնք հարևան են նրան:

Այսպիսի կրկնողութեան ժամանակ 1) ամբողջ դասարանի ուշադրութիւնը միշտ դտնվում է լարված վիճակում, քանի վոր ամեն մեկն սպասում է, թե իրեն կհարցնեմ. 2) հաջողվում է մի գաթ ընթացքում մեկ աշակերտի 3-4 անգամ հարցնել. 3) ստուգվում է քարտեզ իմանալը, քանի վոր պատասխանները արվում են հեռվից, առանց քարտեզը կարգալու:

Նույնը կարելի յե կազմակերպել և այնպես, վոր յուրաքանչյուրը դա և քարտեզի վրա ցույց տա այն, ինչ վոր ասում է: Դա ունի և իր առավելութիւնները՝ մարդկելու, ճիշտ ցույց տալու ստուգման տեսակետից, բայց խլում է ավելի յերկար ժամանակ:

Աշխատանքը համը քարտեզներով ավելի հետաքրքիր հնարավորութիւններ է ընձեռում ուսուցչին քարտեզով կրկնութիւններ անելու ժամանակ: Այստեղ նորն այն է, վոր մակադրութիւնների բացակայութեան ստիպում է աշակերտներին գտնել կամ նկատի ունենալ լրացուցիչ կողմնորոշման մոմէտներ՝ ցույց տալու համար պահանջվածը, իսկ դա, իհարկէ, ել ավելի մեծ չափով է ոժանդակում գիտելիքների ամրապնդմանը:

Մեծ և դժվար թեմա անցնելուց հետո ոգտակար է լինում կազմակերպել մի այլ տեսակ կրկնութեան ձև, վոր կարելի յե ավանել «ինքնստուգում»:

Թեման ավարտելուց հետո աշակերտներին հանձնարարվում է տանը կրկնել թեման և լավ ստուգել ինքն իրեն, արդյո՞ք ամեն ինչ լավ է հասկանում կամ լավ դիտե: Ամեն մի, թեկուզ շատ վտճի, հարց, յեթե նրանց դժվարացնում է կամ թվում է թե պարզ չէ, նրանք պետք է նշեն իրենց մոտ և հաջորդ դասին սպալման հարցնեն ուսուցչից:

Կրկնութեան այս ձևը շատ ոգտակար է, որինակ, 5-րդ դա-

սարանում, «Մթնոլորտ» թեման վերջացնելուց հետո ոգտակար և նաև բարձր դասարաններում: Կրկնության այս ձևն ստիպում է աշակերտներին թեման ուշադրությամբ և խորը կրկնել տանը, հաշիվ տալ իրեն իր գիտելիքների մասին, նշել վոչ պարզ տեղերը և ձևակերպել, թե ինչ է իրեն անհասկանալի: Ուսուցիչը չպետք է անմիջապես ինքը պատասխանի աշակերտի տված հարցին: Շատ լավ է, վոր մի քանի գլխի գցող հարցերով հնարավորություն տրվի հարցնող աշակերտին՝ հենց ինքը պատասխանի իր տված հարցին: Յերբ աշակերտը քիչ առաջ իրեն անհայտ հարցի պատասխանը տալու ճանապարհն է գտնում, նա մեծ բավականություն է զգում, վոր, իհարկե, շատ կարևոր մոմենտ է:

Յեթե հարցնող աշակերտն ուսուցչի ոգնելուց հետո էլ չի ըմբռնում, թե ինչպես պետք է պատասխանել, պետք է հարցնել մյուս աշակերտներին: Լավ է, յեթե գտնվի ցանկացող, բայց կարելի չէ վստահելի աշակերտներից մեկին ուղակի հարցնել: Սա նույնպես ոչտակար է, քանի վոր սովորեցնում է աշակերտին հարցը ձևակերպել այնպես, վոր վոչ միայն հասկանալի լինի ուսուցչի համար, վոր անպայման դիտե այդ հարցի պատասխանը, այլև մյուս լսողների համար, վորոնք կարելի չէ՝ չգիտեն, և վորոնց պետք է բացատրել այնպես, վոր նրանք հասկանան:

Մայրահեղ դեպքում տրված հարցի պատասխանը ուսուցչին ինքն է տալիս:

Աշակերտների գիտելիքներն այստեղ շատ պարզ կերպով են յերևում: Թույլ աշակերտները սովորաբար հարցնում են ավելի պարզ և տարրական խնդիրների մասին, վոր նրանք չեն հասկացել: Ավելի ուժեղ աշակերտներն այս դեպքում խորացնում են իրենց գիտելիքները, վործում են գործնական յեզրակացություններ հանել:

Մնացած աշակերտները լսում են ուշադրությամբ, ամեն ինչ տրված հարցի ժամանակ շարում են իրենց ուշադրությունն ու միտք, ստուգելով իրենց—գիտե՞ն, թե վոչ:

Յերբ բոլոր հարցումները վերջացած են, ուսուցիչը նորից հարց է տալիս բոլորին. «նշանակում է այժմ ամեն ինչ պարզ ու

հասկանալի՞ չէ»: Յեթե նոր հարցումներ չեն լինում, անհրաժեշտ է հարցնել մի քանի աշակերտի ևս, ստուգելու համար նրանց գիտելիքները: Պետք է հարցնել, իհարկե, համեմատաբար թույլերին և առանձնապես նրանց, վորոնք վոչնչի մասին չեն հարցրել:

Նկարագրենք կրկնություն—ստուգումն ինքնուրույն աշխատանքի միջոցով՝ գլորուսի վրա: Թեման է՝ «Յերկրի շարժումը»: Այս դասի համար աշակերտները տանը կրկնել են դասագրքի համապատասխան գլուխը և նայել իրենց աշխարհագրության տետրակների գծադրումները:

Դասի նպատակն է. 1) հնարավորություն տալ, վոր աշակերտները մի շարք վարժությունների միջոցով կրկնեն և վերջնականապես ու լրիվ կերպով պարզեն իրենց համար թեման. 2) պարզել, թե աշակերտները վո՛րքան գիտակցաբար են յուրացրել թեման:

Առաջադրանքը տրվում է ամբողջ դասարանին, և բոլորը պետք է կատարեն այդ առաջադրանքը: Դասատուն անցնելով՝ ստուգում է սեղանների վրա դրված գլորուսով, թե վորքան ճիշտ են կատարվում առաջադրանքները:

Յեթե դասատուն նկատում է վորոշ աշակերտների կողմից վորևէ կասկած, նա արագ կերպով մոտենում է նրանց, մի քանի գլխի գցող հարցերով ոգնում է նրանց ճիշտ կերպով ըմբռնելու և կատարելու առաջադրանքը: Յեթե կասկածը մեկ աշակերտի կողմից է, ուսուցիչը շուկով նրան պարզաբանում է, իսկ յեթե շատերի կողմից է, ուսուցիչը բարձրաձայն կերպով բացատրում է ամբողջ դասարանին:

Յեթե առաջադրանքը աշակերտներից վորևէ մեկի կողմից սխալ է կատարված, ապա ուսուցիչը նրան կանչում և դրատախտակի մոտ և զրույցի միջոցով մեծ գլորուսի վրա, դրատախտակի վրայի գծագրի վրա, ինչպես և աշակերտի տետրակում կատարած գծագրի վրա բացատրում է նրա սխալը:

Առաջադրանքների որինակներ.

1. Մասներով բռնեցեք գլորուսի բեվեռներից:
2. Յույց տվեք յերկրի ստույտն իր առանցքի շուրջը (ուսու-

ցիչը ուշադիր դիտում է՝ արդյո՞ք գլորուսը պտտում են արև-
մուտքից արևվելք) :

3. Դրեք գլորուսն այնպես, վոր ա) Մոսկվայում լինի ցե-
րեկ, բ) Ամերիկայում լինի ցերեկ, գ) Աֆրիկայում լինի դիշեր,
դ) Ալստրալիայում լինի առավոտ և այլն (այս բոլոր վար-
ժությունների ժամանակ, ինչպես և ընդհանրապես աշխարհագր-
բության դասերին, արեգակի լույսը համարվում է լուսամուտից
ընկած լույսը: Յերկրի առանցքը թեքված պետք է լինի և սլա-
պանած վորոչակի ուղղություն) :

4. Գլորուսը դրեք այնպես, վոր ա) Հյուսիսային կիսագն-
դում լինի ձմեռ, բ) հարավայինում՝ ձմեռ, գ) Հյուսիսայինում՝
դարուն, և այլն:

5. Մասիտի հակառակ ծայրով տարեք. ա) Հյուսիսային ա-
րևմտարձի վրայով, բ) հարավային բևեռային շրջանագծի վրա-
յով և այլն:

Աշխատանքի նման կազմակերպման ժամանակ ա) հետաքր-
քրությունը չի թուլանում վորչ զասի ընթացքում, բ) աշխա-
տում են բոլոր աշակերտները, քանի վոր մեկ առաջադրանքին
հետևվում է մյուսը և ուշադրությունը ցրվելու ժամանակ չի
տրվում, գ) դասատուն իմանում է, թե ինչ աստիճանի յե տվյալ
նյութը յուրացրել ամբողջ դասարանը և յուրաքանչյուր աշա-
կերտ:

Կրկնությունը նոր և հետաքրքիր նյութի վրա լավ է կիրա-
ռել այն դեպքերում, յերբ թեման հեշտ է, սահանջում է աշա-
կերտներից վառ պատկերացումներ և պատասխանի կապակցված
չարադրման ունակություն:

ՈՐԻՆԱԿ. Թեման է «Հրարուխներ և յերկրաչարժեր»:

Տվյալ դասի համար դասատուն ընտրում է պատին կախելու
համար համապատասխան նկարներ: Աշակերտներն այդ նկարներն
առաջ չեն տեսել:

Աշակերտներին նախադուշացվում է, վոր նրանք այս դա-
սին պետք է կրկնեն անցած թեման: Նրանց առաջարկվում է
ընթերցել յերկրաչարժերի և հրարուխների նկարագրություն-
ները: Ուսուցիչը պատի նկարները կախում է վոր թե բոլորը

միասին, այլ մեկ-մեկ: Աշակերտներին առաջարկում է լավ դի-
տել այս նկարները և ապա աշակերտներից մեկը (ցուցադրա-
ձևը) պետք է պատմի, թե ինչ է տեսնում այս նկարի վրա:
Մնացած աշակերտներն սեղրում նրան հարցեր են տալիս, իսկ
հետո լրացնում են, յեթե նրա պատմածը լրիվ չի: Նկարի նկարա-
գրության համընթաց աշակերտը պատմում է նաև հրարխի ըն-
թացքի հաջորդականությունը, նկարագրում է արտավիժման ա-
ռանձին նյութերը, բացատրում է հրարխի կոնաձևությունը,
ընդվորում հրարխի կտրվածքը կատարվում է հենց այդտեղ՝
գրատախտակի վրա, և քարտեզի վրա ցույց են տրվում հրարուխ-
ների գլխավոր շրջանները:

Այդ նույն ձևով ել գրույց է տարվում յերկրաչարժեր ցույց
ավող նկարների վրա և պատմում են յերկրաչարժերի հետե-
վանքները:

Դասն անցնում է շատ հետաքրքիր, աշակերտները մինչև
վերջը մնում են բարձր տրամադրությամբ: Յուրաքանչյուր նոր
նկար առաջացնում է հետաքրքրության նոր վերելք: Յերևույթի
հետ ծանոթ յեղողները շատ ուշադիր նայում են նկարը, մատնա-
նշելով նրա վրա տվյալ յերևույթի համար բոլոր մանրամասնու-
թյունները:

Աշակերտներից վրմանք իրենց պատմելու ժամանակ փորձում
են յերևույթները նկարագրել գեղարվեստականորեն, այդ բանի
համար ոգտադործելով իրենց կարգացած գեղարվեստական գրա-
կանությունը:

Կրկնության նման ձև հնարավոր է և մի շարք այլ թեմանե-
րի շուրջը, ինչպես, որինակ՝ յերկրի մակերևույթը փոփոխող ար-
տաքին ուժերը, գոտիները (4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ դասարան-
ներում), 7-րդ դասարանում՝ իՍՀՄ-ի յուրաքանչյուր մարդ կամ
Յ-րդ դասարանում՝ յուրաքանչյուր աշխարհամաս, յեթե դրա
համար կան համապատասխան գիտողական պարադաներ:

Հետաքրքիր է անցնում կրկնությունը նաև դիսպոզիտիվե-
րի ոգնությամբ:

ՈՐԻՆԱԿ. 6-րդ դասարանում «Աֆրիկա» թեման անցնելուց

հետո ցույց են տրվում նրա կենդանական և բուսական աշխարհի գիապոզիտիվները:

Յուլյց են տրվում Սահարան սպտկերող գիապոզիտիվներ: Ուսուցչի հրավերով աշակերտը պատմում է, թե ինչ է Սահարան, Ֆիզիկական քարտեզի վրա ցույց է տալիս ու բացատրում, թե ինչու յե այստեղ անապատ, իսկ մյուսները լրացնում են նրա պատմածը:

Նույն ձևով ցույց են տրվում և սավանները, արևվաղարձային անտառները և առանձին բուսական տեսակները պատկերող գիապոզիտիվներ:

Կենդանական աշխարհի գիապոզիտիվները դիտելիս աշակերտները պետք է պատմեն, թե տվյալ կենդանին բուսական վոր շրջանում է ապրում:

Այսպիսի կրկնութուն հնարավոր է յուրաքանչյուր թեմայի նկատմամբ, յեթե կան գիապոզիտիվներ: Ծառ կարևոր է կրկնության ժամանակ ոգտագործել այնպիսի գիապոզիտիվներ, վոր աշակերտներն առաջ չեն տեսել: 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ դասարաններում գոտիների կրկնության ժամանակ լավ է գործադրել և հետևյալ ձևը: Դասատուն ընտրում է բնության նկարագրության մի շարք գեղարվեստական հատվածներ, կամ ինքն է կազմում այդպիսիք այն հաշվով, վորպեսզի այնտեղ վառ կերպով արտահայտվի տվյալ գոտու առանձնահատկությունը, բայց այդ մասին գրվածքում բացարձակապես չափի:

Դասարանում ուսուցիչը կարողում է հատվածը (կամ պատմում է), իսկ աշակերտները պետք է ասեն, թե ինչ գոտի յե նկարագրվում, բացատրեն, թե ուսուցչի պատմվածքում տվյալ գոտու վոր առանձնահատկությունների մասին է խոսվում: Լավ է, յեթե իմացող աշակերտն անմիջապես տեղից չի պատասխանի, այլ հանդիստ ձեռք կրարձրացնի: Դա կստիպի մյուսներին, ավելի քիչ ակտիվներին, ավելի արագացնել իրենց մտածելը: Դրան կարելի յե հասնել հետևյալ պայմանն առաջադրելով. «Հետաքրքիր է, թե ով գլխի կրնինի: Յեկեք չհուշենք և տեղից առանց թույլտվության չպատասխանենք. թող ամեն մեկն իրեն համար մտածի»:

Միանգամայն անհրաժեշտ է, վոր աշակերտները վոր միայն ուսուցչի նկարագրածով իմանային տվյալ գոտին, այլև կարողանային բացատրել, թե իսկապես ինչ բնորոշ բան դասն նրանք նկարագրության մեջ: Ամենալավը կհամարվի այն պատասխանը, վոր ցույց կտա ավելի մեծ քանակության առանձնահատկություններ:

Այստեղ տրված են կրկնության առանձին նմուշներ (թեման վերջացնելուց հետո) գլխավորապես ցածր դասարանների համար: Միանգամայն պարզ է, վոր սրանք միայն վորոշ որինակներ են և դասատուն իր նախաձեռնությամբ կարող է դտնել և այլ հետաքրքիր ձևեր: Բարձր դասարաններում այս ձևերը, համապատասխան աշակերտների տարիքին, իհարկե, այլ կլինեն, բայց մի բան մնում է նույնը, վոր կրկնությունները պետք է լինեն դանադանակերպ և հրահրեն ու արթնացնեն աշակերտի միտքը:

Բարձր դասարաններում լայն և խորը կերպով պետք է ծավալել համեմատությունները, հակադրությունները, տարբերյերեությունների փոխադարձ կապերը և այլն:

ՅԵՐԿՐԱԳՆԴԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

(ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄ 5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ)

Կազմել է Ա. Ա. Պալովիկինը

Մեր կողմից վերցրած թեման 5-րդ դասարանի ամենադժվար, միաժամանակ ամենահետաքրքիր թեմաներից մեկն է:

Ծրագրով այս թեմային տրվում է 6 ժամ:

1-ին դաս.— Յերկրագնդի կազմության ընդհանուր պատկերը: Յերկրի կեղևի ուսումնասիրությունը: Յերկրի կեղևը կազմող գլխավոր տեսակները:

2-րդ դաս.— Խորություն համընթաց ջերմության բարձրացումը: Կեղևի և մագմա: Գաղափար յերկրի միջուկի մասին:

3-րդ դաս.— Հրաբուխներ: Հրաբուխների արտավիժումը: Հրաբուխների աշխարհագրական դասավորվածությունը և հրաբխականության պատճառները:

4-րդ դաս.— Հրաբխականություն և ոգտակար հանածոներ: Հեյդերներ և ջերմուկներ:

5-րդ դաս.— Լեռների կազմությունը: Ծալքեր, իջվածքներ և նրանց առաջացումը: Յերկրագնդի գլխավոր լեռնային ծալքերը:

6-րդ դաս.— Ամենատիպիկ յերկրաչարժերի որինակները: Յերկրաչարժերի պատճառները: ԽՄՀՄ-ի սեյսմիկական շրջանները:

Յերեխաների համար ամենադժվար թեմաներն են. ա) կեղև և մագմա, բ) հրաբխականության պատճառները, գ) յեռնակազմության պատճառները: Այս հարցերի դժվարությունը կայանում է նրանում, վոր յերեխաները դեռ չգիտեն Ֆիզիկա, վորի պատճառով և իսկույն չեն կարողանում յուրացնել այնպիսի հասկացողություններ, ինչպիսիք են՝ ճնշումը, պլաստիկականությունը և մի քանի ուրիշները:

«Յերկրագնդի կազմության ընդհանուր պատկերը» թեման առանձնապես վոչ մի դժվարություն իր մեջ չի պարունակում: Այստեղ տրվում են ամենապարզ հասկացողություններ լիտոսֆերայի, հիդրոսֆերայի և մթնոլորտի մասին: Մի քիչ ավելի մանրամասն է ուսումնասիրվում լիտոսֆերայի մակերևվոյթը, տրվում են հասկացողություններ մայր ցամաքների և ովկիանոսների մասին: Մայր ցամաքները, վորպես լիտոսֆերայի վեր բարձրացած մասեր, ովկիանոսներն՝ ընդհակառակը՝ ցած իջած մասեր: Գլորուս և կիսագնդերի քարտեզ,—ահա տվյալ թեմայի համար անհրաժեշտ ոժտնդակ պարազաները: Ոգտակար կլինեն յերեխաներին հանձնարարել անային աշխատանք. դժեղ դիագրամ, վոր ցույց տա ցամաքի և ջրի բռնած տարածությունը: Յամաքը պատկերող տարածությունը կարելի յե գունավորել չաղանակազույն, իսկ ջուրը՝ յերկնազույն կամ կապույտ: Գունավորումը կարելի յե կատարել գունավոր մատիտներով, իսկ ավելի լավ է՝ ջրաներկերով: Հաջորդ թեման հանդիսանում է այն հարցը, թե ինչպես է ուսումնասիրվում յերկրի կեղևը: Տվյալ հարցադրման իմաստը միանգամայն պարզ է:


Նախքան վորեւէ բացատրություն տալը, անհրաժեշտ է յերեխաներին ցույց տալ, թե ինչպիսի ճանապարհներով են մարդիկ դրան հասել: Դասադիրքը տալիս է հիմնական նյութը: Այնտեղ ամենից առաջ խոսվում է շախտաների և հորափորվածքների մասին: Այստեղ տրվում են որինակներ, յերբ մարդը ինչն անմիջախանորեն ներս է թափանցում յերկրի կեղևի խորքը: Յերեխաների ուշադրությունը հրավիրելով այն բանի վրա, թե ինչ միջոցներով են հետազոտվում յերկրի կեղևի յերակերը, մենք միևնույն ժամանակ պետք է նշենք այդ ուսումնասիրված յերտերի չնչին խորությունը՝ յերկրի կեղևի հաստությունը համեմատությունով: Յեւ իսկապես, ամենախոր հորափորվածքներն ունեն 2-3 կմ խորություն, իսկ յերկրի կեղևի հաստությունն է 100 կմ: Բավական է դրատախտակի վրա

համապատասխան դժադիր նկարել, պարզ կերպով յերեխաներին ցույց տալու համար այդ համեմատությունը:


Այնուհետև մենք կանդ ենք առնում բնական բացվածքների վրա և հատկապես նշում ենք այն դեպքերը, յերբ յերկրի մակերեսին են դուրս գալիս խորքերում գտնված տեսակները: Հիշում ենք լեռների մասին, լեռնային հեղեղատների մասին, վորոնք, կտրատում են լեռների լանջերը և անգամ ամբողջ լեռնաշղթաներ: Հասկանելի յե, վոր քարտեղի վրա ցույց ենք տալիս մեր հիշատակած վայրերը: Ընդամին ողտակար ե ցույց տալ վորևե գետի կամ ձորի նկար, վոր կտրում ե լեռը կամ լեռնաշղթան:

Յեթե մեր տրամադրության թակ կա դեղեցիկ նկար, վոր ցույց տա լեռնաշղթան, վորտեղ կարելի յե տեսնել յերկրի ծալքավոր շերտերը, ապա մենք առաջին հերթին ոգտագործում ենք հենց այդ նկարը:

Դասատուն կարող ե դրատախտակի վրա դժադրել պարզ ձևով ծալքավոր լեռը և ապա նրա հատվածը, վոր ստացվում ե վերևի մասը ջնջելով: Վորպես արդյունք ստացվում ե խիստ չալքայված լեռների պատկեր (տես նկ. 1 և 2):



Նկար 1.




Նկար 2.

Գծադրից պարզ յերևում ե, վոր հնագույն քայքայված լեռների շրջանում, լեռնային տեսակները, վորոնք առաջ գտնը-

վում եյին վորոշ խորության մեջ, այժմ արդեն դետնի յերես են դուրս յեկել: Այս հանդամանքը մեզ համար շատ կարևոր ե: Այժմ մենք կարող ենք ավելացնել, վոր հնագույն լեռների ուսումնասիրությունը բաց ե անում մեր առաջ յերկրի կեղևի խորքերում գտնված շերտերը:

Հարցի ավելի լուսարանման համար դրատախտակի վրա կարելի յե պատկերել հետևյալ դժադիրը (նկար 3): Գծադրի վրա պարզ յերևում ե, վոր 10—15 կմ խորության վրա գտնված շերտերը քայքայված լեռների շրջանում դուրս են գալիս յերկրի յերեսը: Այսպիսով հնագույն լեռների ուսումնասիրությունը մեր առաջ բաց ե անում յերկրի կեղևի խորքերում գտնված շերտերը:



Նկար 3.

Հաջորդ յենթաթեման ուղղակի նախորդի շարունակությունն ե կազմում:

Յերկրի կեղևի վր կազմող բլիսավոր լեռնատեսակներն իմանալն անհրաժեշտ ե: Իսկ այդ լեռնատեսակները կարելի յե իմանալ միայն այն դեպքում, յերբ այդ լեռնատեսակը ձեռքդ ես վերցրել կամ աչքիդ առաջին ե: Լեռնատեսակների նման առարկայական ծանոթությունը խիստ ոգտակար ե: Յերեխաները փոքր հասակից հետաքրքրություն են հանդես բերում դեպի լեռնատեսակները, սկսում են հավաքել, կոլեկցիաներ կազմել և այլն: Առանց բնական լեռնատեսակը ցույց տալու՝ յերեխաների համար յերբեք հասկանալի չեն լինում բոլոր այդ դրանիտները, գնեյսները և բյուրեղային լեռնատեսակները, ու դրանք մոտավոր են յերեխաների համար դատարկ և անմիա բառեր: Մինչդեռ յերեխաներն աշխարհագրության դասերին, մինչև բարձրագույն դպրոցը

85
2818
38



ներառյալ, միշտ պետք է լսեն և հանդիպեն այդ լեռնատեսակների անուններին:

ՅԵՐԿՐՈՐԴ ԴԱՍ

Յերկրորդ դասին վերաբերող թեմաների մեջ ամենադժվար թեման է «կեղեվը և մաղման»: Այս թեման մանրամասնորեն մշակելու անհրաժեշտութեան մասին մենք արդեն խոսեցինք:

Առաջին յենթաթեման (Չերմութեան բարձրացումը խորութեանը համընթաց) առանձին դժվարութիւններ չի պարունակում: Այստեղ ամենից առաջ շատ համարուտակի պետք է կանգ առնել այն յերեւոյթի վրա, վոր արեգակի ճառագայթները 30 մետրից ավելի յերկրի խորքը չեն թափանցում: Այստեղ շատ տեղին կլինի պատմել Փարիլի գիտութիւնների ահադեմիայի մասին, վորտեղ ներքնահարկում, 28 մետր խորութեան վրա, Չերմաչափն արդեն 2 դար է, վոր անփոփոխ ցոյց է տալիս 11,83 աստիճան: Յերր վոր հարցի այս կողմը բոլորի համար պարզ է, մենք անցնում ենք յերկրորդ խնդրին:

Հիմնվելով շախտաներում և հորսփորվածքներում Չերմութեանը չափելու վրա, մենք արձանագրում ենք այն փաստը, վոր քանի գնում ենք յերկրի խորքը, այնքան Չերմութեանը բարձրանում է: Այստեղ շատ ոգտակար կլինի ընթերցել Գորկու «Տուննը» գրվածքից մի կտոր, վորտեղ շատ զեղեցիկ կերպով նկարագրվում է մարդկանց աշխատանքը լեռների խորքում, բարձր Չերմութեան տակ: Այնուհետև կարելի յէ բերել որինակներ յերկրի խորքի Չերմութեան վերաբերյալ, թեկուզ, որինակ, Չուկոյան բացվածքի մասին, վորի խորութիւնն է 2200 մ, իսկ Չերմատիճանը՝ 83,1 աստիճան:

Յերկրի խորքի Չերմութեանը միջին հաշվով ամեն մի 33 մետրի վրա ավելանում է 1 աստիճան:

Ընդհանրապես կարելի յէ միանգամայն բալարար համարել, յէթե աշակերտները տվյալ թեման մշակելուց հետո կարող են մտածած կարգով պատասխանել հետեւյալ 2 հարցերին.

1. Ի՞նչ խորութեան վրա յերկրի Չերմութեանը թէ ձմեռը և թէ ամառը մնում է անփոփոխ:

2. Ինչքա՞ն պետք է խորանալ յերկրի ներքը, վորպեսզի Չերմութեանը բարձրանա մեկ աստիճան:

Վերջիցս մեր հիշատակած թվերը հեշտութեամբ կարող են մոտացվել աշակերտների կողմից, դրա համար մենք կտանք մի շարք ամենապարզ վարժութիւններ՝ կազմած թվաբանական խնդրի ձևով:

1. Վորոչեցեք յերկրի Չերմութեանը 3005 մետրի վրա, յէթե 30 մետրի վրա այդ Չերմութեանը հավասար է 5 աստիճանի:

2. Կարելի՞ յէ աշխատել 3330 մետր խորութեանը ունեցող շախտայում, յէթե 30 մետրի վրա Չերմութեանը հավասար է 5 աստիճանի:

3. Ի՞նչ Չերմատիճան կլինի 5000 մետր խորութեան վրա, յէթե 30 մետր խորութեան վրա նա հավասար է մեկ աստիճանի:

Անհրաժեշտ չէ դասարանում լուծել բոլոր նման խնդիրները: Բավական է նրանցից լուծել մեկը, իսկ մյուսները հանձնարարել աշակերտներին վորպես տնային աշխատանք:

Հորսփորվածքները և շախտերը հնարափորութեան են տալիս Չերմութեանը չափելու լիտոսֆերայի միայն ամենալերին շերտերում: Ամենախորը յեղած շերտերի Չերմութեան մասին մենք կարող ենք միայն յենթադրութեաններ անել և հաշվումներով գտնել: Մեր ձեռքի տակ յեղած փաստերը, վորոնց վրա հիմնավորում ենք մեր յենթադրութեանները, հետևյալներն են. Չերմութեանը, հրաբուխների շիկացած դապեր, հրահեղուկ լավաներ: Հրաբուխների արձակած դապերի Չերմութեան անմիջական չափումը ցոյց է տվել, վոր նրանց Չերմութեանը հաշվում է 100-ավոր աստիճաններով, իսկ հրաբխային լավաների Չերմութեանը՝ 1200-1300 աստիճան:

Յերր աշակերտները հասկացան, թէ ինչ է հրաբխային լավան և վորոչ շափով պատկերացրին նրա Չերմատիճանը, մենք կարող ենք մի շարք հետեւութեաններ անել.

1. Յերկրի Չերմութեանը, քանի խորն ենք գնում, բարձրանում է և հասնում 1200-1300 աստիճանի և դուրս էլ ավելի:

2. Գիտնականների հաշիվներով 100 կմ խորութեան վրա Չերմութեանը հավասար է 1400 աստիճանի, 500 կմ խորութեան

վրա՝ 1800 աստիճանի և կենտրոնում՝ մոտ 2000 աստիճանի (մաքսիմում՝ մինչև 5000 աստիճանի)։

Անցնենք այժմ կեղեվին և մազմային։ Այն բոլորից հետո, ինչ վոր դասին հաղորդել ենք կեղեվի և մազմայի մասին, կա-
րելի յե անել հետեվյալ զխտողությունները։

1. Յերկրի կարծր կեղեվի հաստությունը մինչև այժմ մեզ ճշտությամբ հայտնի չէ։ Գոյություն ունեն տարբեր թիվեր՝ 30-40 մինչև 100-120 կմ։

2. Յերկրի կեղեվը կազմված է այլ լեռնատեսակներից քան մազմայի լեռնատեսակներն են։

3. Յերկրի կեղեվի լեռնատեսակներն այլևի թեթեւ են քան մազմայի լեռնատեսակները և դրա համար ել այլևի թեթեւ լիտոսֆերան լողում է այլևի ծանր մազմայի մակերեսին։

4. Յերկրի կեղեվն ունի տարբեր հաստություն։ Ծովերի շրջանում այդ հաստությունն այլևի քիչ է, լեռների շրջա-
նում՝ այլևի մեծ։

Անցած դասին (առաջին դաս) աշակերտներն իմացան յերկ-
րի կեղեվը կազմող գլխավոր լեռնատեսակների մասին։ Դասա-
տուն հարց ու պատասխանի միջոցով վերականգնում է յերեսա-
ների հիշողության մեջ այն փաստը, վոր յերկրի կեղեվը յերե-
սից ծածկված է նստվածքային տեսակներով, ինչ խորքում
նա կազմված է զանգվածա-բյուրեղային տեսակներից։

Ասածն այլևի կոնկրետ դարձնելու համար դասատուն
ցույց է տալիս դրանիտի մի կտոր։ Ապա դասատուն վերցնում
է կավիճը և դրատախտակի վրա դծում է մի փոքրիկ շրջան։
Այդ շրջանագիծը պատկերում է յերկրալնդի հատվածը։

Ուսուցիչ.— Ի՞նչ ջերմաստիճան կա 100 կմ խորության
վրա։

Աշակերտ.— 1400 աստիճան (ներանք քիչ առաջ եր, վոր
մշակեցին յերկրի ներքին ջերմությանը վերաբերող թեման)։

Ուսուցիչն այդ թիվը գրում է գծագրի վրա, ապա վերց-
նում է դրանիտը և ասում, վոր դրանիտը հալչում է 1200-
1300 աստիճան ջերմության տակ։ Յերբ այդ փաստն աշա-
կերտներն ըմբռնեցին, դասատուն տալիս է հաջորդ հարցը։

Լիտոսֆերան գլխավորապես կազմված է դրանիտից։ Ի՞նչ
կլինի դրանիտը 100 կմ խորության վրա (ընդամին դասատուն
ցույց է տալիս գծագրի այն տեղը, վորտեղ 100 կմ խորության
վրա գրված է 1400 աստիճան)։

— Կհալվի, — պատասխանում են յերեսաները։

— Այո, ճիշտ է. դրանիտը պետք է հալվի, — ասում է ուսու-
ցիչը։ Ապա քիչ լռելուց հետո հայտարարում է․

— Բայց և այնպես, յերեսաներ, նա այստեղ չի հալչի։

— Ինչո՞ւ, — զարմանում են յերեսաները։

— Վորովհետև 100 կմ խորության վրա շատ ուժեղ ճըն-
շում գոյություն ունի, — պատասխանում է ուսուցիչը։

Այստեղ ուսուցիչը պարզ և մատչելի կերպով պատմում է
աշակերտներին այն բարձր ճնշման մասին, վոր գոյություն ունի
յերկրի խորքում, 100 կմ խորության վրա։

— Պատկերացրեք, — ասում է ուսուցիչը, — վոր մենք այս-
տեղ ունենք վոչ թե այս փոքրիկ կտոր դրանիտը, այլ մի ամ-
բողջ խորանարդ մետր դրանիտ։ Մեկ խորանարդ մետր դրանի-
տը կշռում է մոտավորապես 2½ տոնն։ Դա նշանակում է,
վոր մեկ խորանարդ մետր դրանիտը յերկրի մեկ քառակուսի
մետր մակերեւոյթի վրա ճնշում է 2,5 տոնն ծանրությամբ։

Յեթե այդ մեկ խորանարդ մետր դրանիտի վրա այլևայնպես
ևս մեկ խորանարդ մետր դրանիտ, ապա յերկրի մեկ քառակուսի
մետր մակերեսի վրա նրա ճնշումը կարտահայտվի վոչ թե 2,5,
այլ 5 տոնն ծանրությամբ։ Յերկրի կեղեվն ունի մոտավորապես
100 կմ հաստություն։ Այսպիսով, վորպեսզի ստանանք այնպիսի
ճնշում, վոր հավասար լիներ 100 կմ հաստություն ունեցող
յերկրի կեղեվի ծանրությանը, մենք պետք է վերցնենք
100,000 այդպիսի խորանարդ մետր դրանիտներ և սյունածե դա-
սավորենք մեկը մյուսի վրա։ Ապա ինքներդ վորոշեցեք, թե ինչ-
պիսի ծանրություն կստացվի այդ սյունից մեկ քառակուսի մետր
մակերեւոյթի վրա (2,5 × 100,000 = 250.000 տոնն)։ Ստացվում
է 2½ միլիոն տոնն։ Այս դժվար պատկերացնելի թիվն այնու-
ամենայնիվ տալիս է վորոշ գաղափար այն մասին, թե ինչպիսի
ուժով է ճնշում յերկրի կեղեվը մազմայի վրա։

Նույնը կարելի չե՛ր բացատրել ավելի պարզ ձևով: Ուսուցիչը խոսելով մեկ խորանարդ մետր գրանիտի և նրա ճնշման մասին, բերում է հետևյալ համեմատությունը: Պատկերացրե՛ք, վոր ձեր տոաջ վոչ թե մեկ խորանարդ մետր ծավալով գրանիտ է, այլ սի գրանիտյա սար՝ 100 կմ բարձրությամբ: Պատկերացնո՞ւմ ե՞ք, թե ինչպիսի ծանրությունը նա կճնշի:

Յերկրորդ դեպքում մենք թվեր չենք տալիս:

Յերբ յերեխաները 100 կմ խորություն վրա յեղած ճնշման մասին պատկերացում ստացան, ուսուցիչն ասում է, վոր գրանիտը և բազմաթիվ մյուս բյուրեղային լեռնատեսակները բարձր ճնշման տակ հալչում են մեծ դժվարությամբ: Յեթե յերկրի մակերևույթի վրա բյուրեղային լեռնատեսակներից շատերը մենք կարող ենք հալել 1200–1300 աստիճան ջերմության տակ, ապա բարձր ճնշման տակ նրանք կհալչեն միայն 1800–2000 և ավելի աստիճան ջերմության տակ: Այստեղից պարզ է, վոր 100 կմ խորության վրա, վորտեղ ճնշումը շատ բարձր է, գրանիտը և բյուրեղային մյուս լեռնատեսակները կլինեն շիկացած, բայց վոչ հալված վիճակում:

Այնուամենայնիվ, այդ խորության մեջ յեղած բարձր ջերմաստիճանի հետևանքով բարձր ճնշման տակ յեղած քարային տեսակները ձեռք են բերում պլաստիկականություն, այսինքն այնպիսի մի հատկություն, վոր դանդաղ ծալվում են և ընդհանրապես առանց կտրվելու փոխում իրենց ձևը: Կոշիկալարի ձյուլթն ամենահարմար օրինակն է, վորի հիման վրա կարելի չե՛ր վորոչ չափով պատկերացնել շիկացած մազմայի վիճակը (տես դասադիրքը):

Այն բանից հետո, յերբ մենք ծանոթացրինք յերեխաներին յերկրի խորքում գտնված լեռնատեսակներին և նրանց վիճակին, մենք դադարիտ ենք տալիս նաև յերկրի կեղևի և մուգմայի մասին: Յերկրի կեղևի վրա գա յերկրի կարծր կեղևին է: Մազման— դա շիկացած պլաստիկ մասնա յե, վոր գտնվում է յերկրի կեղևի տակ: Յերկրի կեղևի վրա գլխավորապես կազմված է գրանիտից: Մազման՝ մեծ մասամբ բազալտից: Գրանիտը 2,6 անգամ ծանր է ջրից, իսկ բազալտը՝ մոտ յերեք անգամ:

Նշանակում է բազալտը ծանր է գրանիտից: Այլ խոսքով ասած՝ յերկրի կեղևի վրա գտնված յերկրի կեղևի թեթևի, «լողում է» բազալտի մակերևույթի վրա:


Յեթե դասարանը շատ ուժեղ է, կամ աշակերտները հարց են տալիս այն մասին, թե ինչպես է, վոր այդ կարծր կեղևի վրա «լողում է» մազմայի վրա, այդ դեպքում կարելի չե՛ր ասել համապատասխան բացատրություն (նմանեցնել սառցի լողալը ջրի յերեսին): Աշակերտները գիտեն, վոր սառույցն ավելի թեթև է ջրից, դրա համար էլ լողում է ջրի վրա: Որինակ՝ սառույցը մեծ գետի կամ լճի վրա ձմեռ ժամանակ: Մենք ասում ենք մեծ գետի վրա նրա համար, վորովհետև փոքր գետակների վրա սառույցը կարող է ամուր կպած մնալ ամբողջ և գետի ջրի մակերևույթի բարձրանալու դեպքում սառույցը մնա ջրի տակ: Մեծ գետերում, ինչպես և լճերի վրա, սառույցը միշտ օրով խորասուզված է լինում ջրի մեջ, վոր շատ հեշտությամբ կարելի չե՛ր անեն սառույցը ջուրը սցած ժամանակ:

Շատ ողտակար է փորձով ցույց տալ առարկաների լողալը ջրի վրա: Մեզ համար ամենից հարմարն է քառանկյունի ձև ունեցող ակվարիումի նման ապակյա անոթը: Լցնելով այն ջրով՝ մի կտոր տախտակ ենք դրում (քիչ հաստ) ջրի վրա և դիտում, թե այդ տախտակի վո՞ր մասն է մնում ջրի յերեսին և վո՞ր մասն է սուզվում ջրի տակ:

Յերբ կարծր մարմինների լողալու վարտը ջրի վրա յերեխաներին պարզ է, մենք փորձը բարդացնում ենք: Այժմ վերցնում ենք վոչ թե մեկ, այլ տախտակի յերկու կտոր: Ամենից լավ է, յերբ այդ տախտակի կտորները զուգահեռաձև են և մեկը մյուսից յերկու անգամ հաստ է: Այդ յերկու կտորները դրելով սուզվեն ջրի մեջ: Հաջող կսուզվի ավելի խորը, բայց և ջրից սուզվեն ջրի մեջ: Հաջող կսուզվի ավելի խորը, բայց և ջրից բարձր մնացած մասը նույնպես ավելի մեծ կլինի (տես նկ. 4):


Այս բոլորը շատ հասկանալի չե՛ր, պարզ և բավականաչափ համոզեցուցիչ:

Այժմ մենք գրատախտակի վրա նկարում ենք ծովի մակերևույթը և նրա վրա լողացող տարբեր հաստությամբ սառցի




Նկար 4.

կտորներ (նկար 5): Աշխատում ենք, վորքան հնարավոր է, ճիշտ չափով պատկերել ջրի տակը և ջրի վերելը յեղած մասերի



Նկար 5.


հարաբերութիւնը: Այժմ յերեխաները կըմբռնեն, վոր ջրի յերե- սից վորքան բարձր է յերևում սառցի կտորը, այնքան նա հաստ է (նկար 6):



Նկար 6.

Դրանից հետո հեշտ կերպով կարելի յե անցնել յերկրի կեղեվին: Հիշատակում ենք, վոր յերկրի մակերեսի վրա կան

ծովեր, դաշտավայրեր, լեռներ և բարձրավանդակներ: Շատ հնարավոր է, վոր աշակերտները հենց իրենք կհուշեն ուսուց- չին, վոր ծովերի շրջանում յերկրի կեղեվն ավելի փոքր հաս- տութիւն կունենա, քան լեռների ու բարձրավանդակների շրջ- ջանում: Հակառակ դեպքում ուսուցիչն ինքն է բացատրում ինչդրի եյութիւնը: Յեղրափակման դրույցում ուսուցիչը դրա- տախտակի վրա դժադիր է նկարում, վոր սլարդ գրաֆիկ պատ- կերացում է տալիս յերկրի կեղեվի տարբեր հաստութիւնների մասին (նկ. 7):



Նկար 7.

Այդ դժադիրն անհրաժեշտ է, վորքան հնարավոր է, խնամ- քով կատարել:

Վերջին հարցը՝ յերկրի միջուկի մասին, դասատուն կարող է և չմշակել, այլ ուղղակի հաղորդել այն, ինչ դասադրում գրված է: Միջուկի մասին մենք հաստատ գիտենք մի բան, վոր նա կազմված է ծանր նյութերից (յերկաթից/ծանր):

Ի վերջո, ուսուցիչը կարող է հանձնարարել աշակերտներին դժադրել յերկրազնդի հատվածի սխեմատիկ դժադիրը, վորտեղ տարբեր գունավորումներով ցույց են տրվում լիտոսֆերան, մագման և միջուկը: Լիտոսֆերան պատկերացվում է 100 կմ հաստութիւնով, մագման՝ մինչև 1200 կմ խորութեան վրա, մի- ջուկի կեղեվը՝ մինչև 2900 կմ խորութեան վրա և, վերջապես, միջուկը՝ 2900—6370 (կենտրոնը) կմ խորութեան վրա: Յերկրի կեղեվը կարելի յե գունավորել մոխրագույն, մագման՝ կարմիր, միջուկի կեղեվը՝ բաց կարմիր և միջուկը՝ մանիչակագույն:

Գծապատկերը կարելի չէ կազմել 1:100,000,000, այսինքն՝ 1 սմ հավասար է 1000 կմ: Այսպիսի մասշտաբով յերկրի կեղևի հաստությունը կարողանալիք 1 մմ:

ՅԵՐՐՈՐԴ ԶԵՎ ԶՈՐՐՈՐԴ ԴԱՍԵՐ


Հրաբուխները.— Հրաբուխների թեման շատ հետաքրքիր է և դրավիչ: Այս թեմայի կարևորությունն անվիճելի չէ: Հրաբուխներն այն «դժնահներն են», վորոնց միջով շիկացած գազերը և հալված լավաները դուրս են գալիս յերկրի յերեսը: Միայն հրաբուխների միջոցով է, վոր մենք հնարավորություն ունենք ծանոթանալու մագմայի ջերմաստիճանի և բաղադրությունից մասին: Վերջնապես հրաբխականությունը գաղափար է տալիս մեզ հանրավայրերի առաջացման մասին: Հրաբուխների թեման իր ծավալով և բովանդակությամբ շատ մեծ է: Ամենից հարմարն է այդ թեման պլանավորել հետևյալ կերպ.

1. Գաղափար հրաբխի և նրա կազմության մասին:
2. Հրաբխի արտավիժումը:
3. Հրաբուխների աշխարհագրական տեղաբաշխումը:
4. Հրաբխային արտավիժումների պատճառները:
5. Հրաբուխները և ողտակար հանածոները:
6. Հեյզերներ և ջերմուկներ:

Հրաբուխների քարտեզով ուսումնասիրումը պետք է կապել մշակվող թեմաներից յուրաքանչյուրի հետ: Այս թեման էլլոտորացիայի յենթարկելու համար միանգամայն անհրաժեշտ է՝ հրաբխի պատկերավոր նկար, լավային, մոխրի և հրաբխային սոււրբերի նմուշներ: Ողտակար է ունենալ նաև պեմզա և ծծումբ: Քարտեզի մասին չենք ել ասում, վորովհետև առանց քարտեզի աշխարհագրություն և վոչ մի դաս չի կարելի անցնել:

Ամենից առաջ պետք է ցույց տալ հրաբխի նկար: Քանի վոր նկարի վրա հրաբխի կոնուսը հաճախ լավ չի յերևում, դրա համար այդ լրացուցիչ կերպով նկարում ենք դրատախտակի վրա: Ընդամեն գաղափար ենք տալիս աշակերտներին,


թե ինչպես և ինչից է առաջացել կոնուսը: Թող աշակերտները ըմբռնեն, վոր հրաբխային կոնուսը դա մեծ սար է, վոր հետզհետե «ածել և» կրատերի (խառնարանի) շուրջը, վոր հրաբխային կոնուսը բաղկացած է մասամբ արտավիժած մոխրից և դուրս դցած սոււրբերից, մասամբ ել արտավիժած լավայից: Դրա համար ել իր արտաքին տեսքով հրաբուխը հիշեցնում է ավազակույտ, իսկ իր հատածում նա ունի շերտավոր կազմություն: Շերտերն ստացվել են հրաբխի աճման համընթաց (նկար 8): Յերբ մենք ծանոթացանք հրաբխային



Նկար 8.


կոնուսի հետ, նրա կազմության հետ, կրատերի հետ և հրաբխի մյուս մասերի հետ, անցնում ենք արդեն հրաբխի արտավիժման նկարագրությունը: Այստեղ միանգամայն անհրաժեշտ է ընթերցել վորևէ հրաբխի արտավիժման նկարագրությունը: Խոսքերով տալ արտավիժման պատկերը շատ դժվար է: Պատմվածքի ընթերցումից և զբոսայցից հետո ուսուցիչը դրատախտակի վրա տալիս է մի շարք սխեմատիկ նկարներ, վորոնք հաջորդաբար պատկերում են արտավիժման նկարագրման ստադիաները (նկար 9): Ամենից լավ է այդ կառույցի հետևյալ կերպ. սկզբում ուսուցիչը մտավոր կերպով

գրատախտակը բաժանելով 4 մասի՝ առաջին քառորդ մասում տալիս և հրաբխի սխեմատիկ նկարը (նկար 9-I): Խառնարանի վերելում նկարած «ծխի» քուլաները նկարած սարը տարբերում են մյուս բոլոր տեսակ սարերից: Այնուհետև ուսուցիչը նկարում և 2-րդ նույնանման հրաբուխը, միայն այն հաշվով, վորպեսզի տեղ մնա գագերի պայթումը և արտավիթած մոխիրը պատկերելու համար (նկար 9-II):



Նկար 9.

Ավելի մեծ տեղ պետք է թողնել (վերելից) 3-րդ սխեմայի համար: Յեթե հրաբուխը 1—2 կմ տարածություն ունի, ապա գոլորշիների և մոխրի ամպերը բարձրանում են 5—10 կմ: Այս հարարերությունը նկատի պետք է ունենալ հրաբխի սխեմատիկ նկարը պատկերելիս: Յեվ, վերջապես (նկար 9-IV), վորտեղ արդեն հարկավոր չէ տեղ թողնել վերելից, այլ տեղ հարկավոր է լեռան լանջերի ուղղությամբ: Այստեղ լեռան մասշտաբը կարելի չէ նույնիսկ մեծացնել: Պատահում է, վոր




Նկար 9a.

այդ նկարները պատկերելու ժամանակ ուսուցիչը հեշտացնում իր գործը— գծագրում է մեկ կոնուսը, իսկ հետո արդեն ամեն ինչ նկարում է այդ կոնուսին կից: Իհարկե այդ ձևը լավ է և ավելի պատկերավոր: Այստեղ գրատախտակի վրա ստացվում է «գործող» հրաբուխ: Դա նույնիսկ ավելի հարմար է, քան նկարել մի քանի կոնուս, չասելով դեռ նկարի պարզություն մասին: Բայց այստեղ առաջ է գալիս մի այլ դժվարություն: Աչակերտները նույնությամբ արտանկարում են իրենց տետրակներում և նրանց մոտ մեկ յերելուց խառնվում է մյուսին, վորի հետևանքով արտավիթման ստադիաները չեն ստացվում: Յեթե ուսուցիչը կարողանա հաղթահարել այդ դժվարությունը, ապա յերկրորդ ձևը կարելի չէ համարել ավելի պարզ և ավելի հարմար: Յերկրագնդի գլխավոր հրաբուխները (Վեդուվ, Ավաչինսկայա սոսկա, Կլյուչեվսկայա սոսկա և այլն) ուսուցիչը ցույց է տալիս քարտեզի վրա, ի հարկե, վոր սուցիչը ցույց է տալիս քարտեզի վրա, ի հարկե, վոր առաջին անգամ: Այժմ մենք լրացնում ենք հրաբուխների ցանկը չրանցով, վոր նշված են ծրագրում: Ապա անցնում ենք հրաբուխների տեղարարչման զրույցին: Աչակերտներն անկասկած արդեն նկատել են, վոր ցույց տված հրաբուխների մի մասը գտնվում է ծովափերին (Վեդուվ), մի մասը՝ ափից հեռու: Հենց այս տեղ ել մենք նշում ենք, վոր հրաբուխները ամենամեծ քանակությունը տեղադրված է Խաղաղ ովկիանոսի ափերին: Շատ հրաբուխներ կան նաև Միջերկրական ծովի ափերին: Յեզրա-

փակման մեջ մատնանշում ենք, վոր հրարուխները կապված են յերկրի կեղևի ճեղքերի հետ: Վորտեղ շատ են խոր ճեղքերը, այնտեղ ել շատ են հրարուխները: Սրանով ել հենց հրարուխների տեղաբաշխման գրույցը համարում ենք ավարտած:

Աշակերտների համար ամենից առաջ անհրաժեշտ է հիշել, վոր յերկրի կարծր կեղևի վրա «լողում է» մազմայի վրա. աղա մենք հիշում ենք, վոր հրարուխները լինում են սովորաբար այնտեղ, վորտեղ յերկրի կեղևի վրա խորը ճեղքեր կան: Այժմ մենք դատում ենք այսպես: Յերկրի կեղևի ճեղքում է մազմայի վրա: Մազման յերկրի կեղևի ճեղքում հետևանքով ներս է մտնում յերկրի կեղևի ճեղքերը: Ասածներս պատկերավոր դարձնելու համար սկզբում մենք նկարում ենք դեռի յերեսի վրա լողացող սառույցներ (նկար 10): Հետո տալիս ենք յերկրորդ դժաղիլը, վոր արդեն ցույց է տալիս յերկրի կեղևը, ճեղքվածք՝ յերկրի կեղևի վրա, և մազման, վոր այդ ճեղքերով վեր է բարձրացել: Համեմատելով սառցի և նրա ճեղքով վեր բարձրա ա՛ ջրի հետ՝ մենք մոտավորապես վորոշում ենք յերկրի կեղևի վեր բարձրացած մազմայի բարձրությունը (նկար 10): Այնուհետև մենք ասում ենք այն մասին, թե ինչպես




Նկար 10.

և առաջանում ճեղքի պատերի շիկացումը, ինչպես է առաջանում նրանց հարումը, ինչպես շիկացման և հալման ժամանակ առա-

ջանում են ջրի գոլորշիներ և գազեր: Բացի այդ, շիկացած գազեր կան և հենց մազմայի մեջ: Ահա հենց այդ շիկացած գազերն են, վոր վերջիվերջո պայթյունով դուրս են գալիս յերկրի մակերևույթը և հրաբխային վիժման սկիզբն են դառնում: Հենց վոր «դռնակը» բացվեց, բարձրացող մազմայի տակ յեղած ճեղքում վտրբացավ: Այդ ճեղքում փոքրանալու հետևանքով մազմայի մեջ յեղած գազերն ընդարձակվում են, և մազման վեր է ածվում վրիթրալից մասսայի: Շիկացած, փրփրած մասսան գազերի հետ միասին ուղղվում է դեպի բացվածքը և դուրս է թռչում վորպես շիկացած մոխիր ու հրաբխային ուղմբ: Այդ վրիթրած մասսայի հովացած- սառած կտորներն ել հենց առաջացնում են պեմզան:

Այս հոյակապ սրոցեսը միկրոսկոպիկ վիճակում մենք հաճախ ենք տեսնում, յերբ տաք ժամանակ բացում ենք, թեկուզ, լիմոնաղի շիշը: Շշի ներսում ջուրը հալեցած է գազով, բայց գազաջրի մեջ այն չի յերևում, քանի վոր գազը շատ խիստ ճնշված է և սեղմում է ջրի յերեսին: Բավական է հանել խցանը և շիշի բաց թողնել գազը, գազացրած ջուրն իսկույն «կիթրիրակալի», կհեծանա իր ծավալով և դուրս կգալի շիշից: Ամենից լավն այն կլինի, վոր ուսուցիչն այս բոլորը վոչ թե պատմի, այլ ուղղակի այդ փորձը կատարի աշակերտների աչքի առաջ: Փորձը գիտելուց հետո գլխավոր մոմենտները կարելի յե նկարել: Այդ նույն ձևով կարելի յե նկարել և այն հոյակապ սրոցեսը, վոր առաջացնում է հրաբխի արտավիժումը (նկար 11):



Նկար 11.

բում հաճախ պատահում են արծաթ և պղինձ, բայց արծաթը և պղինձն ալիւրի հաճախ հանդիպում են դանազան խառնուրդներով: Քիչ ոգտակար հանածոներ չեն, վոր լինում են հենց հրաբուխի մեջ: Հրաբխային փրփուրից առաջանում և հրաբխային տուֆը, վորը ծառայում և վարպետ լավ շինանյութ: Նույնպիսի լավ շինանյութ և հանդիսանում նաև ծակոտիկեն (սպունդանման) լավան: Փրփրակալած լավային մասսան— պեմզան ոգտադործում են հղիելու համար: Հրաբուխներն արտադրում են մեծ քանակությամբ նաև ծծումբ:

Թե ի՞նչ ծավալով ուսուցիչը պետք է դադարի տա հանրառաջացման մեջ հրաբխականության նշանակության մասին, դրան մի պատասխան տալ չի կարելի: Յեթե դպրոցը դանդում և այս կամ այն շինանյութի կամ հանքի արդյունահանման վարքի մաս, ապա ավել ոգտակար հանածոյի առաջացման հարցերը պետք է, ըստ հնարավորին, պարզարանել մանրամասնորեն: Իսկ մնացած դեպքերում անհրաժեշտ և լուսարանել յերկաթահանքերի, պղնձի, արճճի և վոսկու առաջացման հետ կապված հարցերը: Պետք է ասել, վոր Երզ դասարանի աշակերտներն ուղտակար հանածոների առաջացման հարցով առհասարակ շատ են հետաքրքրվում: Ինքնըստինքյան հասկանալի չե, վոր այստեղ մենք պետք է ցույց տանք նաև մագնիսային յերկաթը, արճճային փայլը, և դա վորպես անհրաժեշտ միջնում:

Հիդրոսֆերայի բաժնում ջերմուկների մասին արդեն Հիշատակվել է: Հիմա արդեն մենք հնարավորություն ունենք ցույց տալու ջերմուկների բարձր ջերմաստիճանի պատճառները և բերել հեյզերների որինտիներ: Ամենից լավ և այստեղ կարգալ հեյզերի արտավիժումը նկարագրող վորեև հատված: Հեյզերի արտավիժման պատճառներն այնքան ել անհասկանալի չեն: Կարելի չե ուղղակի ասել, վոր հեյզերի բացվածքն են հոսում ստորերկրյա ջրերը, վորոնք հեոդհետե տաքանում են սառած լավաների տաք շերտերում: Յերբ, վոր ջերմաստիճանը հասնում է մինչև յեռացման աստիճան, արագ կերպով առաջ է գալիս յեռացում և արտավիժում: Ասել ջրի սյան ճնշման մասին, այդ ճնշման տակ յեռացման կետից բարձր տաքանալու մասին, ան-

հրաժեշտ չե, վորովհետև Երզ դասարանի աշակերտները Ֆիզիկա դեռ չեն անցել և մեր բացատրությունները չեն հասկանա:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍ

Լեռնակազմություն — Յերկրի մակերեվույթի լեռնաբնույթ մեծամասնությունն առաջացել է յերկրի ներքին ուժերի գործունեյության հետևանքով:

«Հրաբխականություն» թեմայից մենք արդեն ծանոթացել ենք հրաբխային ծառուծ ունեցող լեռների հետ, բայց յերկրագնդի վրա հրաբխային լեռներ համեմատաբար քիչ կան: Ավելի շատ են ծալքավոր և իջվածքային ծառուծ ունեցող լեռները:



Յերկրագնդի բոլոր բարձր լեռները դիսպորապես ծալքավոր կազմություն ունեն: Մենք ասում ենք «դիսպորապես», վորովհետև ծալքավոր լեռների մեջ հաճախ պատահում են և իջվածքներ: Միմիայն իջվածքներով առաջացած լեռներ յերկրագնդի վրա քիչ կան, սակայն այնպիսի լեռներ, վորոնք առաջացել են ծալքերով, իսկ հետագայում միանգամայն փոփոխվել են իջվածքներով, շատ շատ են: Ահա թե ինչու մենք Երզ դասարանում պետք է ծանոթանանք ինչպես ծալքայնության, այնպես ել իջվածքային յերևութիւնների հետ: Ծալքերն ու իջվածքները յերևիսաները յուրացնում են առանց մեծ դժվարության, բայց ծալքերի և իջվածքների առաջանալու պատճառները հասկանալը բավական դժվար ինդիք է հանդիսանում: Ամենահին, բայց և միաժամանակ ամենապարզ թեորիան այդ խնդիրները պարզարանելու համար հանդիսանում է ճնշման թեորիան: Բայց նույնիսկ այդ թեորիան մեղ մատչելի չե: Դրա համար ել ճնշման թեորիայից մենք վերցնում ենք միայն մի փաստ, դա յերկմի սեղմվելն է (կուչ գալը) սառչելուց, և հենց այդ ել գնում ենք մեր բացատրությունների հիմքում: Այդ դուցե և այնքան ել ճիշտ չե, բայց այլ յեղե առայժմս դժվար է մատնանշել:

Ոգտակար է տալ մոտավորապես հետևյալ բովանդակությամբ հարցեր:

Ի՞նչ միջոցներով կարելի չե տեսնել լեռների ներքին կազմությունը:

Ի՞նչպես են լեռներում շերտերը դասավորված: Ի՞նչպես են առաջացել լեռնային ծալքերը: Գծադրեցեք դրասախտակի վրա լեռնային ծալքի ընդլայնական հատածը և այլն: Կարելի չե ցույց տալ մեզ արդեն ծանոթ «Յերիտասարդ լեռներ» նկարը:

Այն բանից հետո, յերբ արդեն աշակերտները լավ դիտել են նկարների վրա կամ դասադրքում լեռների ծալքերը, մենք անցնում ենք ծալքերի մոդելին: Դրա համար բավական է վերցնել մի կապ աշակերտական տետրակներ և ծուել նրանց մոտավորապես այնպես, ինչպես այդ ցույց է տրված նկարում (նկար 13): Վորպեսզի տետրակները պարզ կերպով ցույց տան






Նկար 13.

ծալքերը, յերկու կողմից հենում ենք հաստ գրքեր կամ ուղղակի կապում թելով, ինչպես այդ ցույց է տրված 13-րդ նկարում: Հենց այդ ծալքային պարզ մոդելը բավականաչափ պատկերավոր կերպով մեզ հասկացողութուն է տալիս ծալքավոր լեռների կազմության մասին:

Յերբ վոր ծալքավոր լեռների ներքին կազմությունը միանգամայն պարզ է բոլորի համար, մենք արդեն անցնում ենք այն հարցին, թե ի՞նչ ուժեր կարող էյին առաջացնել այդ ծալքերը:

Փորձից անում ենք հետևյալ յեղրակացությունը. ծալքերն առաջանում են կողքային ճնշումից կամ սեղմումից: Փորձի արդյունքները ձևավորում ենք դրասախտակի վրա դժագրի ձևով, վորտեղ և ցույց ենք տալիս ճնշման ուղղությունը (նկ. 14 և 15):



Նկար 14. Նկար 15.


Բնականաբար հարց է առաջ գալիս յերկրի սեղմման պատճառների մասին: Ճնշման առաջին պատճառը դա յերկրի ներսի մասի սառչումն է: Սառչելուց յերկիրը փոքրանում է և կարծր կեղևվը ծածկվում է ծալքերով: Բերած այս պատճառը մենք պարզաբանում ենք ավելի մանրամասն:

Յերկրի կեղեվն ունի տարբեր հաստութիւն, իսկ վոր գլխա-
վորն է՝ այդ կեղեվը բաղկացած է դանազան տեսակ նյութերից։
Պարզ է, վոր կողքային ճնշման ժամանակ յերկրի կեղեվի ճկուն
մասերը ծալքեր կտան, իսկ կոշտ մասերը՝ վոչ։ Այսպիսով ծալ-
քերը յերկրի մակերեւութը կծածկեն անհամաչափ կերպով։
Վոր և իրականում մենք տեսնում ենք։

Լեռնակազմութեան յերեւոյթը ծալքերով չի ավարտւում։
Լեռնակազմութեան սլորոցեսի մեջ մեծ նշանակութիւն ունեն
իջվածքները։ Իջվածքային յերեւոյթն այնքան շատ է տարած-
ված, վոր դժվար է ցույց տալ վորեւէ ծալքավոր յերկրամաս,
վորտեղ իջվածքներ չլինեն։

Ամենից առաջ անհրաժեշտ է դադարար տալ այն մասին,
թէ ինչ բան է իջվածքը։ Մենք ուղտագործում ենք 1935 թվին
հրատարակած 5-րդ տարվա Փիլիկոսկան աշխարհագրութեան
(Բարկովի և Պուլովինկինի) դասագրքի 136-րդ էջը և դիտել
տալիս 72-րդ նկարը (տես նկ. 16)։

Իջվածքների պատճառների մասին մենք հեռուները չենք
դնա, այլ կրերենք ուղղակի այն պատճառը, վոր բերեցինք ծալ-
քերը բացատրելու համար։ Իսկապես ամեն ինչ ավելի բարդ է






Նկար 16.

իրականում, բայց մենք կբալականանանք այստեղ միայն այդ
մեկ պատճառով։

Կարելի չէ պատրաստել շատ հասարակ մի մոդել, վորը
հնարավորութիւն կտա ցույց տալու այն բաղմատեսակ ձևերը,
վոր առաջնում են իջվածքների հետևանքով. որինակ՝ հասա-
րակ իջվածք, աստիճանավոր իջվածք, գոբստ և գրաբեն։ Իրա-
համար վերցվում է փայտյա գուգահեռանիտ և կտրատվում և
մասերի։ Զուգահեռանիտի կտրատված մասերը գունավորվում
են այնպես, վոր սրբղ նկատելի լինեն շերտերը։ Զանազան
կոմբինացիաներով կարող ենք ստանալ մեր ցանկացած ձևը։
Իրաողական այս մասերիայը շատ հարմար և հարցներու
համար։ Ապա՝ կաղմիր դրաբեն, կաղմիր աստիճանավոր իջվածք
և այլն։ Աշակերտները մեծ սիրով դասավորում են և արող կեր-
պով ել վերհիշում են հարկավոր ձևերը (նկար 17-19)։





Քանի վոր մեր տեսարաններում պետք է իրենց արտահայ-
տութիւնը դտնեն մեր աշխատանքի բոլոր մոմէնտները, ապա
այն, ինչ վոր մենք պատրաստում ենք այդ փայտիկներով, նույ-
նը նկարում ենք տեսարաններում։ Յեղրափակման մեջ մենք նշում
ենք, վոր յեթե ծալքերն ավելի հաճախ առաջ են գալիս յերկրի
կեղեվի ավելի բարակ և ավելի ճկուն մասերում, աստ իջվածք-
ներն առաջ են գալիս ավելի կոշտ մասերում։ Վորպես որինակ
հանդիսանում են՝ Միջին Սիրիական բարձրալանդակը, Արա-
բական թերակղզին, Աֆրիկայի բարձրալանդակները, Ալպտրա-
լեայի բարձրալանդակները և այլն։ Ողտակար է նշել, վոր ճեղ-
քերով բարձրանում են հրահեղուկ տեսակները, ստույում են
այդ ճեղքերում և առաջացնում են յերակներ։ Այդ յերակները,
կազմված լինելով հրաբխային կարծր տեսակներից, դժվարու-
թյամբ են փոշոզվում գետերի ջրերով։ Այն վայրերում, վորտեղ
այդ յերակները դուրս են գալիս յերկրի մակերեսը, և նրանց
վրայով հոսում են գետեր, սպտահում են շատ մեծ քանակու-
թյամբ սահանքներ (որինակ՝ Անդարա, Նեղոս, Կոնզո գետե-
րի սահանքները և այլն)։

Իրված հարցի մշակումը և պատրաստած դժողրերը լրիվ
դադարար են տալիս իջվածքների մասին։ Ուսուցչին մնում է ա-



Նկար 17.

Նկար 18.



Նկար 19.

անէ, վոր հողակտորների ամեն մի տեղաշարժութիւնը յերկրի կեղեվի ճեղքվածքի ուղղութեամբ վերեւ կամ ներքև կոչվում է իջվածք:

ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍ



ՅԵՐԿՐԱՇԱՐԺԵՐ

Յերկրաշարժերը մեզ համար հետաքրքիր են մի կողմից՝ վորպես հսկա կործանիչ ուժ, վորի դեմ մարդ պետք է պայքարի, մյուս կողմից՝ վորպես յերկրապնդի ներքին մասերը ճանաչելու միջոց:

Յերկրաշարժերի ուսումնասիրութիւնը հսկայական նշանակութիւն ունի նաև հակակրոնական դաստիարակութեան տեսակետից: Առանց բացառութեան բոլոր տեսակի կրոնների սպասուկները լայն կերպով ոգտագործել են յուրաքանչյուր խոշոր յերկրաշարժ վորպես աստվածութեան ուժի սպասուկ: Ըստ նրանց ուսմունքի՝ յերկրաշարժն աստվածային ցասման և աստու վրեժի դրսեւորումն է անհնազանդների և անհավատների համար: Ինքնըստինքյան պարզ է, վոր այն մարդը, վորը հասկացել է արդեն, թե ինչ է յերկրաշարժը և ինչից է նա առաջանում, յերբեք չի հավատա այն հեքիաթներին, վորոնցով ոգտվում են կրոնի սպասուկները խավար մասսաներին վախեցնելու համար:

Թեմայի պլանավորումը կարելի յի կատարել մտաւորապես հետեւյալ կերպ. յերկրաշարժերի նկարագրութիւն, յերկրաշարժերի ուսումնասիրութիւն, յերկրաշարժերի աշխարհագրական տեղաբաշխվածութիւն: Վորպես անհրաժեշտ դիտողական պարագաներ կարող են ծառայել՝ յերկրաշարժերի պատկերները, սեյսմոգրաֆի մոդելը (ինքնաշեն) ԽՍՀՄ-ի սեյսմիկական շրջանների նկարը (ինքնաշեն) և կիսազնոյների ջարտեղը:

Ներածութեան մասում մենք տալիս ենք ամենատեղ յերկրաշարժերի մի քանի ցայտուն որինակներ: Որինակներ կարելի յի վերցնել Ֆիզիկական աշխարհագրութեան ամեն մի դասագրքից: Դիտում ենք նկարը: Աշակերտների ուշադրութիւնն ենք հրավիրում վրված շենքերի, յերկրի մակերեւոյթի ճեղքերի վրա:



Նկար 20. Նկար 21.

Բայց տվյալ դեպքում առանձնապես ոգտակար է կարգալ վորեպես հատված քրեստոմատիայից: Յերկրաչարժի դեղարվեստական լավ նկարագրությունը, կամ նույնիսկ տեղանտեսների դե-

տողությունները թողնում են անսոսանալի տպավորություն: Նույնիսկ ամենալավագույն և պատկերավոր նկարը կարող է մեզ առաջ միայն յերկրաչարժից վորեք շենքի կործանման պատկերը, բայց յերբեք պրոցեսի դինամիկան:

Ամենից առաջ հիշում ենք ամենակարևոր մոմենտները, վորոնք կապված են յերկրաչարժի ալիքների տարածման հետ: Ֆնցումներն առաջանում են յերկրաչարժի կենտրոնում, վորն ալեկի հաճախ ընկած է լինում 25-50 կմ խորության տակ: Այս կենտրոնից յերկրաչարժը տարածվում է բոլոր կողմերը՝ կոնցենտրիկ ալիքներով (նկար 20):

Այնուհետև մնում է վորոշ բան ասել սեյսմոգրաֆների մասին: Դրա վրա յերկար չպետք է կանգ առնել և չպետք է ընկնել մանրամասն բացատրությունների հետեւից: Կարելի յե ցույց տալ սեյսմոգրաֆի պարզ ինքնաշեն մոդելը, վոր յերեխաներն իրենք ել կարող են հեշտությամբ պատրաստել (նկար 21): Այդ նկարի վրա ել հենց կարելի յե բացատրել նրա կազմությունը, աշխատանքը և նշանակությունը:

Այնուհետև քարտեղի վրա ցույց ենք տալիս յերկրաշնդի և մասնավորապես ԽՍՀՄ-ի սեյսմիկական գլխավոր շրջանները:

Հնարավորություն չենք ունենա քննարկելու յերկրաչարժի բոլոր գլխավոր պատճառները, բայց գլխավոր մոմենտները պետք է նշենք:

Ամենաուժեղ յերկրաչարժերն առաջ են գալիս այն ժամանակ, յերբ յերկրի կեղևի շերտերն են տեղաշարժվում: Այստեղ ել հենց ոգտակար է բերել յերկրաչարժերի ժամանակ ճեղքերի առաջացման որինակներ (1911 թ. Այսմա-Ա.Թայի յերկրաչարժը տվեց 50 կիլոմետր յերկարությամբ ճեղք. 1923 թ. Ճապոնիայի յերկրաչարժը ծովի հատակի շրջանում մինչև 250 մետր խորության վրա խոշոր վրվածքներ տվեց և այլն):

«ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ԽՍՆ» ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՈՒՄԸ

7-րդ դասարան (կազմել է Ն. Վ. Դավրբովսկին)

ԱՌԱՋԻՆ ԴԱՍ

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ա) Դիրքը և սահմանները: Ուկրաինայի աշխարհադրական դիրքը: Արեւմտայան սահմանի նշանակությունը: Մուլդավական ՍեւՅ: Բեսարաբիայի հարցը: Սև և Ազովի ծովերը: Սիվաշ: Պերեկոպի պարանոցը:

բ) Ռելիեֆը: Ուկրաինայի բաժանումը Պոլեսայեյի, Ալպինյա, Չախաինյա և հարավային տափաստանային մասերի: Նրանց ռելիեֆի առանձնահատկությունները: Պոդոլյան պլատոն և Մերձդնեպրյան թումբը:

Մերձդնեպրյան և Մերձսևծովյան դաշտավայրերը: Դոնեցի բլրաշարքը:

գ) Ոգտակար հանածոներ— Գարածուխ (Դոնեցի ավազան), յերկաթահանք (Կրիվոյ Ռոդ), մարգանեց (Նիկոպոլ), սընդեի, աղ (Արտեմովսկ):

ԴԱՍԻ ՄԵԹՈՂԱԿԱՆ ՊՐԻՈՄՆԵՐԸ

1) Ներածական գրույց և աշակերտների աշխատանքն ատլասով և կոնտուրային քարտեզով—15 րոպե:

2) Ուսուցչի գրույցը (ռելիեֆների բնութագրությունը), հատվածների ընթերցումը—15 րոպե:

3) Հանածոների բնութագրությունը. պատմվածք՝ նմուշներ ցուցադրելով, ստուգում, համը քարտեզի լրացում և տնային առաջադրանքի հանձնարարում—15 րոպե:

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԻ ԿՈՆՍՊԵԿՏԸ

Ուսուցիչն ստուգում է՝ արդյո՞ք սեղանների վրա բոլորը պատրաստ ունեն քարտեզներ (դասագրքի կամ ատլաս), ուրվադձային քարտեզներ և գրենական պիտույքներ ու աղա սխում

և գրույցը, վորը կարելի չէ սկսել մտալորապես հետևյալ կերպ:

Դու գիտե՞ս յերկիրն այն լիառատ, սիրուն, Ուր ջինջ են արծաթից՝ հոսող գետակներ, Ուր դաշտի գեփյունն է խոտերը շոյում, Բալենու պուրակում կորչում տնակներ, Պարտիզում ծառերն են դեպ ցած խոնարհւում, Յեվ գետնին հասցնում մրդերը հասուն: Լճախին աղմուկով յեղեղն է դողում, Յեվ ջինջ է, և անդորր, և պարզ է յերկինք, Յերգում է հնձյորը, դնդում գերանդին... Դու գիտե՞ս յերկիրն այն, ուր վոսկի հասկեր փնջված են կապույտով տերեփուկների, Կուրգաններ Բատիի ժամանակներից, Դաշտերում արածող յեղների հոտեր, Սայլերի ճոխնչ, արինջի դորդեր...

Այսպես եր ներկայանում Ուկրաինան բանաստեղծին 19-րդ դարի 2-րդ կեսին, գյուղատնտեսության այդ յերկիրը, դաշտերի ու այգիների այդ յերկիրը, մեղմ ու դանդաղ ընթացող գյուղական կյանքով:

«Առատությամբ» եր շնչում Ուկրաինան խոշոր կալվածատերերի համար, վորոնց ողտին աշխատում էին սոված և աղքատ գյուղացիները: Բայց այդ որվանից սկսած շատ է փոխվել Ուկրաինան: Հատկապես նա խորը և համապարփակ փոփոխություն է յենթարկվել Հոկտեմբերյան Մոցիալիստական Մեծ ծելով Ուկրաինայի մասին, դժվար թե առաջին հերթին հիշի դաշտերն ու այգիները: Ամենից առաջ նրա միտքը կգան քարածուխն ու չուգունը, շախտաները, դոմնայի վառարանները, Դնեպրոգեսը, գիզանտ գործարանները, կառուցվող չտեսնված մեքենաները. վոչ թե հանդարտ գյուղերն ու խուտորները, այլ բազմաքանակ ու աղմկոտ խոշոր քաղաքները՝ յեռացող արդյունաբերական գործունեյությունը: Նոր կյանքով է դնում նաև գյուղատնտեսությունը. հնդկացորենի (արինջի) ար-

տերը փոխարինելի են չափարի ճակնդեղի պլանտացիաներով, գերանդավորները՝ տրակտորիստներով, յերկրագործի դանդաղ ու թմրած կյանքի փոխարեն յեռում ե կոլտեստեսականների լարված աշխատանքն ու մրցակցությունը:

Մանոթանանք ամենից առաջ այն բնական պայմաններն էնա, վորոնց բաղադրի վրա հիմնված ե նոր Ուկրաինան:

Ինչպէս միշտ, աշխարհագրութեան մեջ առաջին հարցն ե՝ վո՞րտեղ:

Ուսուցիչ.—Ձեր քարտեզների վրա ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասում գտեք և ցույց տվեք Ուկրաինան: Մարդսյա՛ն, վորոշի՛ր, թե մոտավորապէս վոր դուզահեռականների միջև ե գտնվում Ուկրաինան: Լայնութեան քանի՞ աստիճան հեռավորութեան վրա յե մեր գտնված վայրից (աշակերտը պատասխանում ե տեղից, նայելով իր քարտեզին): Ճիշտ ե:

Այժմ ձեր քարտեզների վրա դիտեցեք և վորոշեցեք Ուկրաինայի հարավային սահմանները և գտեք Ուկրասան ու Մարիուպոլը: Հովհաննիսյան, ասա՛:

Պատասխան.—Սե և Ազովի ծովերը և Պերեկոպի պարանոցը: Ուկրասան՝ Սե ծովի ափին, Մարիուպոլը՝ Ազովի ծովի ափին:

Ուսուցիչ.— Յեվ այսպէս. Ուկրաինան հարավից վողոզվում ե չառաջող Սե և սառչող Ազովի ծովերով: Նրանց ափերին գտնվում են խոշոր ծոցեր, վորտեղ և տեղավորված են նավահանգիստները: Այդպիսի ծոցերի վրա ել աճել են Ուկրասա և Մարիուպոլ նավահանգիստային քաղաքները: Պերեկոպի պարանոցն այժմ Ուկրաինայի և Ղրիմի միջև կտրուկ հաստատելու համար ունի փոքր նշանակութուն, և յերկաթուղին Ղրիմ ե դնում ուղղակի Ազովի ծովի սակախաղուր ճահճային ծոցի— Սիվաչի վրայով: Բայց Պերեկոպի անունը միշտ կմնա Խորհրդային իշխանութեան հաստատվելու համար մղած պայքարի պատմութեան մեջ: Այստեղ Կարմիր բանակը ջախջախեց Վրանդելի սպիտակ դավադրական զորքերի վերջին դիմադրությունը, հերոսական զրոհով վերցրեց Պերեկոպի ամրությունները, վոր սպիտակները կառուցել էին ռազմական տեխնիկայի վերջին խոսքի համաձայն:

Ուսուցիչ.— Այժմ, Մուրենյա՛ն, նայեցեք Ուկրաինայի ցածաքային սահմաններին և հերթով անվանեցեք Ուկրաինայի հա-

քաններին՝ արեմուտքից, ապա հյուսիսից և արեւելքից: (Այդպէ՞ս ե յերեխաներ, լրացումներ չունե՞ք):

Այսպիսով Ուկրաինային արեմուտքից հարեան են ոտաբերկրյա կապիտալիստական պետությունները՝ Լեհաստանը և Ռումինիան. ավելի ճիշտ՝ վոր թե բուն Ռումինիան, այլ Բեսարաբիան, վորը գտնվում եր հին Ռուսաստանի կազմում և Ռումինիայի կողմից բռնի կերպով հաճախակի ե քաղաքացիական պատերազմի տարիներին: Խորհրդային իշխանությունը մինչև այժմ այդ հաճախակի մտորիչական ե համարում և Բեսարաբիան մնում ե վիճելի շրջան: Այս սահմանի առեւտրական նշանակությունը չնչին ե, իսկ պաշտպանողական նշանակությունը՝ խոշոր: Ուսուցիչը պատմում ե արտասահմանում (Լեհաստանում, Ռումինիայում) ապրող ուկրաինացիների և մորթավաճիկների մասին, վաստեր ե բերում նրանց տնտեսական ծանր կացութեան մասին, ազդային ծանր ճնշման մասին, հակադրելով դրան ԽՍՀՄ-ի ազդային քաղաքականությունը: Այդ կապակցութեամբ մատնանշվում ե ՌԽՍՀ կապիտալիստական յերկրների հետ ունեցած սահմանակցութեան խոշորագույն քաղաքական նշանակությունը: Աշակերտները գտնում են քարտեզի վրա մորթավական ԱՍՍՀ-ն և նրա կենտրոնը՝ Տիրասպոլ քաղաքը: Ուկրաինայի հարստությունները կապիտալիստների ազահությունն են գրգռում և հենց այստեղ ել հնարավոր են նրանց վործերը՝ ներս խոսիել ԽՍՀՄ, Ուկրաինան բռնադրավելու համար (որինակ՝ գերմանացիների և սպիտակ լեհերի հարձակումը): Բայց խաղաղ ժամանակ նույնպէս այս սահմաններն անհանգիստ են: Մենք հաճախ ենք լրագրերում կարդում, վոր լրտեսներն ու դիվերսանտները կապիտալիստական պետությունների հանձնարարութեամբ հաճախ են վործում անցնել մեր տերիտորիան վորճրագործ նպատակներով, կամ, ընդհակառակը, ցանկանալով փախչել ԽՍՀՄ-ի սահմաններից: Մեր սահմանապահներն ամենայն աչալրջութեամբ են պահպանում այդ սահմանները և այդ բանում ըստամեկնային մեծ ոգնութուն ե ցույց տալիս նրանց տեղական բնակչությունը:

Ուսուցիչ.— Կարապետյա՛ն (կանչում ե թույլ աշակերտներից

մեկին), այժմ ցույց տվեք պատի քարտեղի վրա Ուկրաինայի սահմանները, սկսելով հարավից—արեւելք—հյուսիսից—արեւմուտք: Բոլորդ վերցրեք մատիաները և նրանց հակառակ ծայրերով ցույց տվեք այդ սահմանները: Բոլորն արի՞ն: «Ապա ցույց տվեք Կիևի, Ուզեսսա և Մարիուպոլ քաղաքները:

Այժմ զխոնք Ռեյնֆր: Տարբեր աշակերտներին արված հարցերի միջոցով սահմանվում են առանձին բարձրությունները (Վոլինո-Դոդոլյան, Քարային թումբ, Դոնեցի բլրաշարք) և դաշտավայրերը (Մերձսևծովյան և Մերձդնեստրյան) ու ցույց են արվում տեղերը:

Ուսուցիչ.— Նկատի ունենալով ռեյնֆի առանձնահատկությունները՝ Ուկրաինիան կարելի չէ բաժանել հետևյալ մասերի.

1.) Հյուսիսային մաս, վորը կոչվում է Պոլեսեյե: Սա իրենից ներկայացնում է մի ճահճոտ հարթություն, վորը յերկու մասի չէ բաժանվում Պրիպյատ գետով: Ուկրաինական Պոլեսեյեյի մեջ մտնում է այդ հարթության միայն հարավային մասը: Վեր բարձրացած յեզրերը և գետերի դանդաղ հոսանքը նպաստում են ջրերի կուտակմանը և ճահճների առաջացմանը, վորոնք հեռագետե խոտերով են ծածկվում և տորֆի սկիզբը դառնում: Այդ ճահճային հարթություններն ընդհատվում են ավելի բարձրադիր կղզյակներով, վորոնց վրա ցրված են դյուղեր, բանջարանոցներ և դաշտեր: Տեղական բնակչության կյանքը մեծ չափերով սերտորեն կապված է ջրի հետ, վորտեղից ձուկ են վորսում, վորտեղ, յերբեմն մինչև դոտին ջրի մեջ, խոտ են հնձում, իսկ նավակներով կապվում են արտաքին աշխարհի հետ: Քանի հեռանում ենք Պրիպյատից, այնքան յերկիրն ավելի բարձրադիր է և ավելի ցամաքային:

2) Միջին մասը Դնեստրով բաժանվում է Ալպինյա և Չախաինյա մասերի: Ալպինյա մասը բարձրադիր է, ճեղքված է բազմաթիվ խոր գետային հովիտներով, տեղ-տեղ ուղղաձիգ լանջեր ունեցող բլուրներով և առանձնացած բլրակներով: Դնեստր Գնեստր այդ բարձրադիր մասն ընդհատվում է ուղղաձիգ լանջով և առաջացնում է գետի աջ բարձրադիր ափը, Կիևից սկսած մինչև սահանքները, այնտեղ, վորտեղ Դնեստրը հատվում է

Քարային թմբով, վոր ձգվում է հեռու դեպի Արևելք: Չախաինյա մասն սկսվում է Դնեստրից լայն դետահովիտով և աննկատելի կերպով բարձրանալով փոխարկվում է միորինակ հարթավայրի, տեղ-տեղ միանդամայն տափակ, ինչպես սեղան, տեղ-տեղ թեթև ալիքավոր, հատկապես միջին Ռուսական բարձրության և Դոնեցի բլրաշարքի յեզրերներին: Դոնեցի բլրաշարքն ունի տափակ դադաթ ունեցող և ուղղաձիգ լանջերով բլուրներ և տեսք (արվում են տեղեկություններ ՌԻՍՏՀ բարձրությունների մասին):

3) Հարավային մասը կամ Մերձսևծովյան դաշտավայրը: Սա է՛լ ավելի միորինակ տափակ հարթություն է, վոր իջնում է դեպի Սև և Ադովի ծովերը: Գետեր այնտեղ քիչ կան, դրա համար էլ հարավային մասի միորինակ հարթությունը յերբեմն միայն խանդարվում է լայն, վոչ խոր գետային հովիտներով: Վորպեսզի պատկերն ավելի լրիվ լինի, կարելի չէ բնթերցել Ս. Վ. Չեֆրանովի, Յե. Չ. Յուզեֆովիչի և Վ. Ա. Ռատուչի կադմած աշխարհագրական քրեստոմատիայից հետևյալ կտորը.

«Յերբ գնում ես դաշտավայրով, այդ դուրս ես այնտեղ ինչ-վոր չափազանց ընդարձակ և ազատ բան: Նրա անսահման ընդարձակությունը դարմացնում է ճեղ իր հեռվությամբ: Յես սկսածայից հիշեցի ինձ ծանոթ լեռնաբնակներից մեկի խոսքերը, ակամայից հիշեցի ինձ ծանոթ լեռնաբնակներից մեկի խոսքերը, վորն իր լեռնոտ յերկրից ընկել եր մեր դաշտավայրոտ յերկիրը և ուղղակի կորցրել եր իրեն: «Ձեզ մոտ յերկիրն ինչպես անսահման լայն է»: Բայց մեր դաշտավայրը նրան դուր չեկավ: «Ինչ-վոր դատարկ է կարծես: Յեվ ձեր գետերն են մեռած, հազիվ են շարժվում: Ուրիչ բան են մեր լեռնային գետակները. նրանք մոռնում են, աղմկում, ցրվի դալիս հաղարավոր կաթիլներով և ալիտակին են տալիս փրփուրից: Իսկ ձեր գետերում նույնիսկ գետի հոսելը չի նկատվում: Սրանք վոչ թե գետեր են, այլ ինչ-վոր մեռած հայիլներ»: Իսկապես տեղի թույլ թեքվածությունը պատճառ է դառնում գետերի դանդաղ հոսանքին: Սակայն դրա փոխարեն ամեն կողմից յերևում է անսահման հեռվությունը...»

Մեր աչքի առաջ տարածվում էր անսահման ընդարձակ

հարթութիւնը, յերբեմն շրջափակված բլուրների շղթաներով: Սեղմվելով և մեկը մյուսի հետեից յերևալով՝ այդ բլուրները ձուլվում են մակերևութի բարձրութեան հետ, վորը ձգվում է ճանապարհից դեպի աջ և կորչում շուշանային հեռվում... Սուրում է անդղը գետնի յերեսով, համաչափ ու դանդաղ թափահարելով թևերը և հանկարծ կանգ է առնում ողում, կարծես թե ինչ-վոր բանի մասին է մտածում, ապա թափահարելով թևերը՝ նետի նման սլանում է տափաստանի վրայով: Կարծես միայն բազմազանութեան համար վայրի խոտերի մեջ յերբեմն յերևում են սպիտակ դանդեր կամ քարեր, յերբեմն դուրս են ցցվում ծառեր կամ չորացած խոտաբույսեր, վորոնց վրա յերբեմն հանգիստ են առնում տափաստանի թռչունները, ճանապարհը կտրում են դաշտային մկնիկները... և նորից աչքիդ առաջ տարածվում են վայրի խոտածածկ բլուրներ, սև ագռավներ...»:

Ուկրաինան հարուստ է կարևոր հանածոների հսկայական պաշարներով:

Ուսուցիչ.— Պետրոսյա՛ն, յեկ պատի քարտեղի մոտ և ցույց տուր, վորտեղ ինչպիսի հանածոներ կան (յեթե դպրոցն ունի հանքային կոլեկցիաներ, պատմելու ժամանակ պետք է ցույց տալ և նմուշները):

Պատասխան.— Դոնբասում՝ քարածուխ, Կրիվոյ Ռոզում՝ յերկաթահանք:

Դասատուն աշակերտների ուշադրութիւնը հրավիրում է քարածխի և յերկաթի շատ հարմար տեղադրութեան վրա (վոր անկրկնելի յե խՍՀՄ-ում) և Ուկրաինայի գլխավոր հանածոների վայրերի հարմար դիրքի վրա:

Ուսուցիչ.— Գտեք նաև Դնեպրի աջ ափին, սահանքներից ցած, Նիկոպոլ քաղաքի մոտ մարգամեց: Արտեմովսկի մոտ՝ աղ և սնդիկ: Մարդանեցն անհրաժեշտ է չուղունից պողպատ հալելու ժամանակ, աղից արտադրվում է սոդա, վոր դործադրվում է շատ արտադրութիւններում (հրավիրված աշակերտը ցույց է տալիս այդ տեղերը քարտեղի վրա):

Ձեր ուրվագծային քարտեղներում նշանակեցեք իր տեղում

քարածուխը սև քառակուսի նշանով, յերկաթը՝ սև յեռանկյունի նշանով, մարդանեցը՝ Վ տառով, աղը՝ ա տառով:

Յեթե աշակերտները սովոր են ուրվագծային քարտեղի վրա աշխատել, ապա այս աշխատանքը շատ շուտ է կատարվում, սակայն անհրաժեշտ է հետևել, վոր աշակերտները պայմանական նշաններն իրենց ճիշտ տեղերում նշանակեն: Դրա համար անհրաժեշտ է աշակերտներին հիշեցնել կողմնորոշման վորոշ թումենտներ, որինսակ. «քարածխի» նշանը դրեք Դոնեց գետից հարավ՝ Արտեմովսկի քաղաքը ցույց տվող կետի մոտ: Հենց այդտեղ էլ, Արտեմովսկից թիչ արևմուտք, դրեք աղի հանքերն այնտեղ են, վորտեղ Դնեպրը ծովում է ուղիղ հարավ: Այդտեղից թիչ արևմուտք դրեք յերկաթի պայմանական նշանը: Սահանքներից թիչ ցած, Դնեպրի աջ ափին, դրեք մարդանեցի պայմանական նշանը»:

Այս աշխատանքի ժամանակ ուսուցիչն անցնելով սեղանների մոտ, հսկում է, վոր պայմանական նշանները ճիշտ դրվեն:

Ապա ուսուցիչը գրատախտակի վրա գծում է Ուկրաինայի սիւեմատիկ կոնտուրը, վորքան հնարավոր է մեծ մասշտաբով: Վորպեսզի շատ աղավաղած բան չդուրս գա, ուսուցիչը պետք է նախորոք վարժվի այդ դժադրման մեջ: Գրատախտակի վրա սկզբում դրվում են հյուսիսի, հարավի, արևելքի և արևմուտքի ուղիղ ուղիները և ապա այդ կետերը միացվում են, թի ամենածայրային կետերը և քարտեղը: Մի քանի փորձերից աչքի տակ ունենալով Ուկրաինայի քարտեղը: Մի քանի փորձերից հետո այդպիսի ուրվագծային քարտեղներ ուսուցիչը կարող է հետո արտադրել և քարտեղի վրա գծվում է նաև Դնեպր գետը, ներքից, ուրվագծային քարտեղի վրա գծվում է նաև Դնեպր գետը, ինչպես և հյուսիսային լայնութեան 52 և 46 աստիճանի զուգահեռագծերը և արևելյան յերկայնութեան 32 աստիճանի միջոցնայականը:

Ապա մեկը մյուսի հետեից գրատախտակի մոտ են կանչվում աշակերտներ, վորոնց մոտավորապես տրվում են հետեվյալ հարցերը.

1) Նշանակեցեք սկզբնատառերով Ուկրաինան վողսողող ծովերի անունները և կետեր նշանակեցեք այնտեղ, վորտեղ գտնվում են Ուկրաինա և Մարիուպոլ քաղաքները:

2) Նշանակեցեք սկզբնատառերով Ուկրաինայի ցամաքային հարևան պետութիւնները:

3) Յույց տվեք Ուկրաինայի ծովային սահմանները, անվանեցեք այդ ծովերը և պատմեցեք այդ ծովային սահմաններին նշանակութեան մասին:

4) Յույց տվեք սահմանակից կապիտալիստական պետութիւնները, անվանեցեք այդ պետութիւնները և պատմեցեք այդ սահմանների նշանակութեան մասին:

5) Պատի քարտեզի վրա ցույց տվեք Ուկրաինայի բարձրութիւնները:

6) Կոնտուրային քարտեզի վրա նշանակեցեք Վոլին-Պոդոլյան պլատոն:

7) Կոնտուրային քարտեզի վրա ուղիղ դժերով նշանակեցեք Քարային թումբը և Դոնեցի բլրաշարը:

8) Ի՞նչ մասերի կարելի չէ բաժանել Ուկրաինան ըստ իր ռելիեֆի:

9) Բնութագրեցեք Պոլեսայեյի ռելիեֆը համառոտ կերպով:

10) Բնութագրեցեք Ալպինյա ռելիեֆը:

11) Բնութագրեցեք Չախալինյա ռելիեֆը:

12) Բնութագրեցեք Մերձսևծովյան ռելիեֆը:

13) Նշանակեցեք կոնտուրային քարտեզի վրա քարածխի և յերկաթի վայրերը:

14) Նշանակեցեք մյուս հանածոները:

Հրավիրված յուրաքանչյուր աշակերտի տրվում է միայն մի հարց: Այսպիսի մանրամասն և կարճ հարցեր ողտակար են հասկապես մշակված նյութի կրկնութեան և ամրացման համար: Պատասխանների համար ղեհատակապատի չեն նշանակվում, սակայն անհրաժեշտ է նշել այն դեպքերը, յերբ աշակերտը չի կարողանում պատասխանել տված հարցին: Նման դեպքերում նույն հարցը պետք է տալ հաջորդ աշակերտին, կամ նրանցից մեկին, վորոնք տեղից մատ են բարձրացրել:

Ստվորել դասադրքով համապատասխան հատվածը (ցույց է տրվում էջը) և մանրամասն վարժվել՝ քարտեզի վրա ցույց տալու համար:

ՅԵՐԿՐՈՐԴ ԴԱՍ

ՅԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ա) Կլիման: Ձերմութեան և տեղումների բաշխումը:

բ) Հիմնական հողաբուսական դոտինները. Պոլեսայե, անտառատափաստան և տափաստան:

գ) Գետերը. Դնեպր, Պրիպյատ, Դեսնա, Սուլա, Պսել, Վորսկլա, Դոնեց, Հարաչային Բուդ, Դեստոր: Լիմաններ (Դնեպրովսկ-Բուդյան):

դ) Բնակչութիւնը: Վարչական բաժանումը: Ազգային կազմը:

ԴԱՍԻ ՄԵԹՈՂԱԿԱՆ ՊՐԻՈՄՆԵՐԸ

1) Աշակերտների հարցում, ստուգելու համար սահմանների և ռելիեֆի յուրացումը: Կլիմայի հիմնական բնորոշ դժերի գրատում ուսուցչի ցուցումներով — 10 բույն:

2) Ուսուցչի պատմելը. հողաբուսական դոտինների բնութագրութիւնը: — 20 բույն:

3) Աշակերտներին ստուգելը կոնտուրայի քարտեզով, գետերը ցույց տալը: Ինքնուրույն աշխատանք: Ուսուցչի պատմելը բնակչութեան մասին — 15 բույն:

ՅԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԻ ԿՈՆՍՊԵԿՏԸ

Դասն սկսվում է 1-2 աշակերտի հրավիրումով՝ տնային աշխատանքի կատարումը ստուգելու համար: Երդ դասարանի աշակերտներն արդեն պետք է կարողանան նյութը շարադրել թեկուզ համառոտ, բայց կապակցված պատմվածքի ձևով, դրա համար էլ ուսուցչի կողմից տրվող հարցերի բնույթն արդեն փոխվում է: Այ տեղ արդեն հարցերը տրվում են ավելի ընդհանուր ձևով, այդ հարցերն ընդգրկում են ավելի լայն տեղեկութիւններ, վորայդ հարցերն ընդգրկում են ավելի լայն տեղեկութիւններ, վոր-

պետդի հնարավորութուն տրվի աշակերտին ընդարձակ կերպով շարադրելու իր պատմածը: Իսկ առանձին և մանր հարցերը կարող են տրվել լրացուցիչ կերպով: Ըստ այդմ ել առաջին աշակերտին կարելի յե հետևյալ հարցը տալ. «Պատմեցեք Ուկրաինայի աշխարհագրական դիրքի և սահմանների մասին»: Յերկրորդին «Պատմեցեք այն բոլորը, ինչ վոր դիտեք Ուկրաինայի ուկրաինացի մասին»:

Գրատախտակի վրա նախորդը դժադրվում և Ուկրաինայի կոնտուրը: Դաս պատասխանող աշակերտն իր պատմելու հետ զուգընթաց, առանց սպասելու ուսուցչի նախազգուշացմանը, պատի քարտեզի վրա ցույց և տալիս անվանած յուրաքանչյուր աշխարհագրական անուն, ինչպես և ուսուցչի ցուցմունքով նշանակում և դրատախտակի վրա դժած կոնտուրային քարտեզի վրա:

Յեթե պատասխանողը դժվարանում և և չգիտե, թե ինչպես սկսի իրեն տրված հարցի պատասխանը, նրան պետք և հնարավորութուն տալ մտածելու և ապա միայն ավելի փոքրիկ լրացուցիչ հարցեր տալ. որինակ՝ վո՞ր զուգահեռականների միջև և՞ զանվում Ուկրաինան, ի՞նչ բարձրութուններ կարող ես անվանել և ցույց տալ, և այլն:

Յեթե աշակերտն առանց ուսուցչի ողնության սկսել և դասը պատմել, ապա նրան պետք և հնարավորութուն տալ վերջացնելու, չընդհատելով նրան:

Յեթե լրացուցիչ հարցը չի ողնում կամ դաս պատասխանողը սխալներ և թույլ տալիս, ապա պետք և լրացուցիչ հարցը կրկնել կամ աշակերտներին վորևե մեկին հրավիրել, պատասխանողի սխալն ուղղելու համար: Յեթե դրանից հետո ել դաս պատասխանողը չի կարողանում շարունակել պատմելը կամ նոր սխալներ և անում, ապա պարզ և, վոր նյութը նա չի յուրացրել. այդ դեպքում կարելի յե կամ նորից վորոշ լրացուցիչ հարցեր տալ, կամ արդեն ընդհատել հարցումը և հրավիրել մեկ ուրիշի:

(Հարցումների ժամանակ, ի միջի այլոց, դասատուն պետք և խուսափի հետևյալ սխալներից. նախ չպետք և աշակերտին հարցնել շատ յերկար: Հաճախ և պատահում, վոր ուսուցչին առաջին

անդամ հրավիրված աշակերտին հարցնում և 15 կամ 20 րոպե, յերկրորդին՝ 5—7 րոպե, իսկ յերրորդին 1—2 փոքրիկ հարց տալուց հետո ազատ և թողնում, վորով և նոր դաս տալու ժամանակ ել չի մնում: Եւրջ դասարանում սովորաբար միանգամայն բավարար և յուրաքանչյուր աշակերտի հարցնել 5—6 րոպե:

Յերկրորդ՝ լրացուցիչ հարցերն ել այնպես պետք և տալ, վոր աշակերտը այդ կամ վոչ ասելով չազատվի, այլ տա լրիվ պատասխան, ինչպես և այնպես չլինի, վոր ինքը, հենց դասատուն պատասխանի աշակերտի փոխարեն):

Ուսուցիչ.— Անցնում ենք Ուկրաինայի կլիմային: Կարելի՞ յե արդյոք նախորդը վորևե բան ասել այդ մասին:

Աշակերտ.— Տաք և, շոգ և:

Ուսուցիչ.— Ապա, Սարգոյա՛ն, Ղրիմում ի՞նչպիսի կլիմա յե:

Պատասխան.— Ղրիմում կլիման տաք և:

Ուսուցիչ.— Իսկ Անդրկովկասում:

Աշակերտ.— Նույնպես սառ և:

Ուսուցիչ.— Ուրեմն և՛ Ուկրաինայում, և՛ Ղրիմում, և՛ Կովկասում կլիման միանման և:

Աշակերտ.— Վոչ, տարբեր և:

Ուսուցիչ.— Ճիշտ և. կլիման մի խոսքով չի վարելի բնորոշել: Կստացվեն ընդհանուր խոսքեր:

Բարձրացվում են մատներ:

Ուսուցիչ.— Ապա դու ասա, Սեդրակյա՛ն:

Աշակերտ.— Նախորդը կարելի յե ասել միայն մի բան.

Ուկրաինան ընկած և ԽՍՀՄ-ի յեվրոպական մասի հարավում, դրա համար ել այնտեղ պետք և լինի ավելի տաք, քան ԽՍՀՄ-ի կենտրոնում և ավելի ցուրտ, քան մեզ մոտ՝ Անդրկովկասում:

Ուսուցիչ.— Ճիշտ և, բայց դա դեռ շատ քիչ և: Ի՞նչպես կարելի յե ավելի ճիշտ բնորոշել կլիման (բարձրացվում են ձեռքեր):

Դուք արոցեք:

Աշակերտ.— Կլիմայի ճշգրիտ բնորոշման համար անհրաժեշտ պետք և ունենալ յերեք տվյալ. ամենացուրտ ամիս—հունվարի պետք և ունենալ յերեք տվյալ.

միջին ջերմաստիճանը, ամենատաք ամսին— հուլիսի միջին ջերմաստիճանը և տարեկան տեղումների քանակը:

Ուսուցիչ.— Ահա այս արդեն ճիշտ է: Իհարկե կարելի չեթվերը չհիշել, բայց պետք է անպայման իմանալ, թե տվյալ վայրում ձմեռը ցուրտ է թե մեղմ, ամառը շոգ է թե մեղմ տաք, շատ, թե քիչ են տեղումները, վորից հետո արդեն հնարավոր է բնորոշել կլիման: Ուկրաինայի կլիման բնորոշելու համար վերցնել յերեք վայր. արևմուտքում՝ Կիևվը և Ուկեսսան, իսկ արևմելքում՝ Վորոշիլովգրադը: Յեթե դասարանում կա կլիմայական քարտեզ, ապա հենց ամեն ինչ ցույց է տրվում և պարզաբանվում այդ քարտեզի վրա, իսկ յեթե վոչ՝ առաջարկվում է ոչտաղործել դասադրքի քարտեզը: Գրեցեք հիշողության համար ձեր տետրակներում. Կիևվում հունվարին— 6 աստիճան, հուլիսին՝ 19,5 աստիճան, տեղումները՝ 500 մմ-ից բարձր (հատկապես ամառը). Ուկեսսայում՝ հունվարին— 3,5 աստիճան, հուլիսին՝ 22,5 աստիճան, տեղումները՝ 400 մմ-ից պակաս. Վորոշիլովգրադում՝ հունվարին— 8 աստիճան, հուլիսին՝ 23 աստիճան, տեղումները՝ մտավորապես 380 մմ:

Մենք տեսնում ենք, վոր ամառն արեվելքում ավելի տաք է քան թե արևմուտքում, ձմեռն ավելի ցուրտ է և տեղումները հյուսիսից—արեվմուտք դեպի հարավ, մանավանդ դեպի արևմելք ավելի քչանում են: Ի՞նչով բացատրել այս հանդամանքը: (Բարձրանում են ձեռքեր):

Գուք ասացեք:

Սշակերտ.— Կլիման ավելի ցամաքային ու չորային է դառնում, վորքան հեռանում ենք Գոլֆստրիմից:

Ուսուցիչ.— Սյժմ կլիման մենք կարող ենք բնութագրել հետեվյալ կերպ. ձմեռը մեղմ է արեվմուտքում, բայց քանի զնում ենք դեպի արևելք, այնքան նա ցրտում է. սակայն, թե արեվմուտքում և թե արեվելքում ձմեռը կարճ է, մարտի սկզբներին ձյունն արդեն հալչում է դաշաբրում: Ամառը յերկարատե է և տաք, անձրևները վարար են և խոնավությունը շուտ է գոլորչիանում: Յեթե մի գիծ տանենք Տիրասպոլից դեպի հյուսիս—արեվելք՝ դեպի Ուկրաինայի սահմանը, ապա այդ գծից դեպի

հյուսիս—արևմուտք տեղումները կարելի չե բավարար համարել, իսկ հարավ արևելք տեղումների քանակն անբավարար է և յերբեմն յերաշտներ են լինում, չնայած նրանք չեն հասնում այնպիսի կործանիչ աստիճանի, ինչպես այդ Ներքին Պոլոթյայում է: Ուկրաինայում տաքությունը բավարար է անգամ շատ ջերմասեր բույսերի համար: Բացի սովորական պտղատու ծառերից, այստեղ, հարավային մասում լավ կերպով մշակվում է խաղողը, իսկ արևելի հարավում վերջերս արդեն մշակվում է բամբակ (վոչ ջրով—դեմի):

Ուկրաինան հյուսիսից—հարավ ձգվում է յերեք բուսական շերտով:

1) Խառն անտառներ—այսպես կոչված Պուլսայե՝ պողոզ (կամ Ֆոխրազույն) հողերով:

2) Անտառատափաստաններ, վոր տարածվում են ամբողջ Ուկրաինայի արեվմուտքից—արեվելք, և ծածկված են գլխավորապես սեահողերով:

3) Տափաստաններ, վորոնք սկսվում են վերը հիշատակած բավականաչափ տեղումներ ունեցող մասի սահմանից և հասնում են մինչև Սև և Ազովի ծովերը: Տափաստանների հողերը մեծ մասամբ նույնպես սեահողեր են, բայց ամենահարավում և հարավ—արևելքում պատահում են արդեն շաղանակազույն հողեր, վորոնք ժամանակին անձրև դալու դեպքում լավ բերք են տալիս:

Ուսուցիչ.— Հայրապետյան, հիշեցեք խառն անտառների դատու բնորոշ գծերը: Սուբենյա՛ն, բնութագրեցեք անտառատափաստանը:

Նկատի ունեցեք, ի միջի այլոց, վոր այստեղ ևս ներս են թափանցում փշատերև ծառերը, ինչպես, որինակ, սոճին և այլն: Վրթանեսյա՛ն, ասացեք, ի՞նչ բան է տափաստանը:

Լսեցեք մի վոքերիկ հատված, վոր բնութագրում է հարավ—ուկրաինական տափաստանը:

«Մենք գտնվում ենք Ուկրաինայի Մերձդնեստրյան ձախափայնա տափաստաններում: Հենց այն տափաստաններում, վորտեղ մի ժամանակ թափառում էլին քոչվոր ակյութացիները, վորոնք ցից վորպես հիշատակ Ուկրաինայի կուրդաններում (դերեզմանա-

բլուրներում) մնացել են քարային հուշարձաններ, այն տափաստաններում, վորտեղ Չապորոժյան Սեչը փորձում եր պահպանել իր անկախությունն ու ազատությունը ցարիզմի հարձակումներից:

Նախկին անմարդաբնակ տափաստանը, վոր յերգել են մի ժամանակ Գողոնն ու Շեվչենկոն, արդեն անհայտացել է: Այդ տափաստանն այժմ մինչև վերջին կտորը վարած է, բացառությամբ «Ասկանիա» կոչված կենդանաարդեւանոցի:

Մելիտոպոլյան շրջանը բավական թույլ է բնակված: Այստեղ յերկրագործի համար դժվար է ապրել. չկան վոչ գետեր, վոչ լճեր. ջուրը գտնվում է գետնի խորքերում: Չկան այստեղ անտառներ, վոչ էլ թփուտներ: Նշանակում է՝ կ'վառելանյութ ճարելն է դժվար, կ' շինանյութ: Մարդու գլխավոր թշնամիներն են այստեղ յերաչտը և խորշակները (տաք և չոր քամիները):

Լինում են տարիներ, յերբ ցանքից հետո ամիսներով անձրև չի գալիս: Այսպիսի պայմաններում, ի հարկե, սերմն էլ չես հավաքի: Բայց ահա անձրևներ յեկան, կանաչում և լիքը սերմերով լցվում են ցորենի հասկերը: Յեվ հանկարծ հունիսին սկսվում են խորշակները: Ողբ շիկանում և և տաք ալիքներով ընդգրկում վողջ բուսականությունը, ծծելով նրանից վերջին կաթիլ խոնավությունը: Ձերմությունը բարձրանում է մինչև 47 աստիճան, ցանքը դաշտերում փչանում է: Կամ անձրևներ չեն լինում, կամ հեղեղներ են լինում, և այն էլ վոչ թե մի ամբողջ շրջանում, այլ փոքր շերտերով: Յերբեմն բարձրանում է մրրիկ և իր հետևից թողնում է ամայացած դաշտեր և բանջարանոցներ: Չմոռանք կամ բոլորովին ձյուն չկա, կամ այնպիսի ձյան փոթորիկներ են լինում, վոր անգամ տներն են ծածկում: Չմոռանք, ձյուն չեղած ժամանակ, աշնանացանը սառչում և փչանում է: Դժվար է այստեղ և անասնապահությամբ զբաղվել, յերբ այրվում են դաշտերը, յերբ չկա կերի պաշար:

Մինչդեռ այս յերկրամասը հարուստ է, հողը լավ, բերրի, և պահանջում է անտեսություն վարելու շնորհք ունեցող մարդու ձեռք, կոլեկտիվ աշխատանքի պայմաններում, գիտության

ցուցումներով: Նույնիսկ Ուկրաինայի լայնածավալ ավազոտ տարածությունները լավագույն կերպով կարող են ոգտագործվել խաղողագրուծության և մրգաբծության համար: Այդ վայրերում կարելի յե մշակել արժեքավոր արդյունաբերական կուլտուրաներ, ինչպես, որինակ՝ բամբակը, կենսաթը, ձիթենին և այլն:

Տնտեսության այսպիսի վերակառուցում և բնության այսպիսի կապրիզների հաղթահարում հնարավոր է միայն Սորբր-դային ի-խանության ժամանակ, հողը սովխոյներ և կոլխոյներ կազմակերպելու միջոցով:

Ուսուցիչ.— Ուկրաինայի գետերն արդեն դուք գիտեք ընդհանուր տեսությունից: Կրկնենք այն՝ քարտեզի վրա: Գտեք և ցույց տվեք ձեր քարտեզներում Գնեստը, Հարավային Բուչը, Դնեպրը և նրա աջափնյա վտակ Պրիպյատը, ձախափնյա վտակները՝ Դեսնան, Սուլան, Պսելը, վորսկլան, արելիլը: Գոնեցը: Այժմ կրկնենք այդ նույնը պատի մեծ քարտեզի վրա (իրար հետևից հրավիրվում են 3-4 աշակերտ, վորոնք և պատի քարտեզի վրա ցույց են տալիս գետերը և նույնը նշանակում գրատախտակի կոնտուրային քարտեզի վրա):

Գնեսպրի վրա նշանակեցեք այն տեղը, վորտեղ առաջներում սահանքներ կային: Ուշագրություն դարձրեք այն բանի վրա, վոր Սև ծովը թափվող գետերի դետաբերաններում առաջացել են ցամաքի խորքը ներս թափանցող ծոցեր, վորոնք այստեղ կոչվում են լիմաններ: Առանձնապես մեծ է Գնեսպրի սկի-Բուչյան լիմանը, վորը մատչելի յե մեծ նավերի համար: Առաջներում սահանքներն արդելը էլին հանդիսանում Գնեսպրի յերկարությամբ նավելու, և միայն վարնանը Գնեսպրի հոսանքով կարողանում էլին չարժվել բարձեր և լաստեր, իսկ հոսանքին հակառակ նավերը բարձրանալ չէին կարողանում:

Այժմ Գնեսպրոգետի ամբարտակը բարձրացրել է ջրի մակարդակը, սահանքները ծածկվել են ջրով, և առաջացած լճի հանդարտ ջրերի վրայով, իրենց տակ թողնելով ժայռերն ու քարաթմբերը, անցնում են շոգենավերը:

Ուկրաինայի բնակչության հիմնական մասսան կազմում են ուկրաինացիները: Բացի նրանցից, շատ կան ռուսներ և հրեաներ,

վորոնք ապրում են ցրված, հատկապես քաղաքներում: Բնասար-
քիայի սահմանի մոտ՝ Մոլդավական ԱՍՄՀ-ում և նրա մոտեր-
քում ապրում են մոլդավացիները:

Հաջորդ դասին դասադրելից կսովորեք համապատասխան
կտորը—մինչև տնտեսութունը (ցույց են տրվում եղերը), և նա,
ով դեռ չի նշանակել կոնտուրային քարտեզի վրա Ուկրաինայի
մայրաքաղաք Կիևի և Մոլդավիայի մայրաքաղաք Տիրասպոլը,
թող կատարի այդ աշխատանքը:

ՅԵՐՐՈՐԴ ԴԱՍ

ՅԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ա) Լեռնաբլուզանահանական, մետալուրգիական և ծանր մեքե-
նաշինութայան արդյունաբերութայան գերակշռող նշանակու-
թյունը: Գիմիական արդյունաբերութուն: Ելեկտրակայան-
ներ— Գնեպրոզես, Շտերովկա: Շաքարի արդյունաբերութուն:

բ) Գյուղատնտեսութուն. ցորեն, շաքարի ճակնդեղ, անաս-
նաբուծութուն:

գ) Հաղորդակցութայան ճանապարհները: Յերկաթուղային
ցանցի խտությունը: Կարևորագույն հանդուցները: Գետային և
ծովային տրանսպորտը:

դ) Քաղաքները Կիևի, Մարիով, Ստալինո, Չապորոժյե,
Գնեպրոպետրովսկ, Ուլեսա, Նիկոլայևի, Վորոշիլովգրադ, Մա-
րիուպոլ, Խերսոն, Պոլտավա, Վիննիցա, Չերնիվով, Ժխոմիր,
Կամենեց-Պոդոլսկ, Տիրասպոլ:

ԴԱՍԻ ՄԵԹՈՂԱԿԱՆ ՊՐԻՈՄՆԵՐԸ

1) Աշակերտների հարցում՝ յուրացումն ստուգելու համար:
Ուսուցչի պատմելը և դեղարվեստական հատվածների ընթեր-
ցում—25ր.

2) Կոնտուրային քարտեզի լրացումը —10 րոպե:

3) Աշակերտներին հարցնելը պատի քարտեզի մոտ՝ գիտե-
լիքների ամրապնդման համար, և տնային աշխատանքի հանձ-
նարարում— 10 րոպե:

Ինչպես միշտ, դրատախտակի վրա դժադրված և Ուկրաինայի
կոնտուրային քարտեզը:

Ուսուցիչ.— Այսօր մենք կսկսենք նրանից, ինչ սովորեցինք
Ուկրաինայի բնության մասին: Շահոյա՛ն, յե՛կ քարտեզի մոտ
և նկարադրի Ուկրաինայի կլիման, հողերն ու նրանց արժեքը
դյուրատնտեսութայան համար (հրավիրվում են ուժեղ աշակերտ
ներ: Այնպիսի ընդհանուր ձևակերպումներ, ինչպես, որինակ՝
լավ պայմաններ, վատ պայմաններ և այլն, չեն տրվում: Բնու-
թյան յուրաքանչյուր առանձնահատկություն պետք է նշվի կոն-
կրետ կերպով և դուրս բերվի ընդհանուր յեղրակացութուն):
Վոսկանյա՛ն, այժմ դուք վերհիշեցե՛ք բոլոր հանածոները, նշա-
նակեցե՛ք կոնտուրային քարտեզի վրա և տվե՛ք նրանց դնահա-
տականը Ուկրաինայի արդյունաբերութայան համար: Մենք տե-
սանք, թե ինչպես Ուկրաինայի բնական պայմանները միան-
գամայն բարենպաստ ելին դյուրատնտեսութայան համար և
հիդու՛ր չե, վոր Ուկրաինան համարվում է ամենահացառատ յեր-
կիրը: Բայց վողջ ԽՍՀՄ-ի համար առավել ևս մեծ նշանակու-
թյուն ունի Ուկրաինայի՝ հարուստ հանածոների և դյուրատըն-
տեսական բազմազան հումքի բազայի վրա հատկապես վերջերս
լայնորեն ծավալված արդյունաբերությունը: Ձեռնարկություն-
ների մեծ մասն աշխատում է ամբողջովին կամ մասամբ
ելեկտրականությամբ, վոր ստացվում է մի կողմից քարածխի
մնացորդներով աշխատող մոտակա ելեկտրոկայաններից, ինչպես
որինակ՝ Շտերովկայի ելեկտրոկայանն է և, մյուս կողմից, Գնեպ-
րովկայի հիդրոկայանի ուժով, վոր աշխատի ամենամեծ հիդրո-
կայաններից մեկն է: Այս հիդրոկայանը կառուցված է Չապո-
րոժյե քաղաքի մոտ և ոգտագործում է Գնեպրի ջրերի ուժը՝
նախկին սահանքների մոտերքում: «Միայն սոցիալիստական հան-
րապետութայան մեջ, միայն այնպիսի յերկրում, վորտեղ ժողովըր-
դական տնտեսությունը տարվում է պլանով, հնարավոր յեղալ
Գնեպրի նվաճման հոյակապ ինդիքը: Հոկտեմբերյան սոցիա-
լիստական մեծ հեղափոխության 10-րդ տարեդարձին, 1927 թ.
նոյեմբերի 7-ին, հիմք դրեց Գնեպրովկայի հիդրոկայանի՝ աշ-

գատար մշակումով հասնում են ճակնդեղի բերքատվու-
թյան, վոր չի տեսել այդ տեսակետից մի ժամանակ առաջնա-
կարգ համարվող Գերմանիան: Ճակնդեղի մշակման շրջանը մոտա-
փորպես համընկնում է անտառատափաստանային գոտու հետ:
Այստեղ, հաճախ, ուղղակի դաշտերի մեջ, հիմնադրված են բազ-
մաթիվ շաքարի գործարաններ: Հացարույաներից կարևորներն են
ցորենը, վորի ավելցուկն Ուկրաինան արտահանում է դեպի
արդյունաբերական կենտրոնները, դեպի արտասահման՝ գլխավո-
րապես Սև ծովի Ուկեսա, Նիկոլայով, Սերսոն, Մարիուպոլ նա-
վահանգիստներով:

Կազմվում են արդյունակներ, վոր պատկերում են Ուկրաինայի
նշանակությունը և գրաված տեղը ԽՍՀՄ-ի տնտեսության մեջ
(տրվում են միայն թվեր):

Ուկրաինայի մասնակցությունը չափը ԽՍՀՄ-ի Ժողովրդական
տնտեսության արտադրանքի մեջ. քարածուխ 55%, չուգուն—
60%, ճակնդեղ—67%, հացահատիկ—250/0:

Ուսուցիչը նշում է ԽՍՀՄ-ի Ժողովրդական տնտեսության
համար Ուկրաինայի, վորպես առաջին քարածխամետաղաբերական
և սննդի հոր արդյունաբերության բազայի նշանակությունը:

Այսպիսի խոշոր արդյունաբերություն ունենալու պայմաննե-
րում Ուկրաինան, իհարկե, մեծ չափերով վարիք է դրում զար-
գացած հաղորդակցության ճանապարհների: Բաց արեք գասա-
դրքի քարտեզը (առվում է համապատասխան եջը). այստեղ յեր-
կաթուղիները նշանակված են իրար հաջորդող սև և սպիտակ
գծիկներով: Գտեք կարեվորագույն հանգույցները (Կիևի, Սար-
կով, Գնեպրոպետրովսկ) և գծերի կուտակումն արեվելքում:
Ի՞նչ վայր է սա (Գոնրաս):

Գիտեցեք այն գծերը, վոր Ուկրաինայի կենտրոնից ձգվում
են դեպի նավահանգիստները (Ուկեսա, Նիկոլայով, Մարիուպոլ):

Այդ գծերը ծառայում են արտահանման համար: Այդ գիտե-
ցեք արեվելքից արեվմուտք տանող գծերը. սրանք Գոնրասից
քարածուխ և մետաղ են տանում դեպի Ուկրաինայի մյուս մասե-
րը: Գիտեցեք վերջապես հյուսիսում Սարկով—Կուրսկ ուղղու-
թյամբ գնացող գիծը, վորոնեթի վրայով գնացող գիծը, ինչպես

և այդ ճանապարհների միջև ընկած գիծը (մոտավորապես
Մլավյանսկի շրջանից Կուպյանսկի վրայով գնացող գիծը): Դա
Գոնրաս—Մոսկվա գնացող գերմադիստրալն է: Բոլոր այս գծե-
րը կրում են քարածուխ, մետաղ և մեքենաներ, հաց, շաքար
և այլն դեպի յերկրի կենտրոնը, իսկ հակառակ ուղղությամբ,
հյուսիսից, բերում են անտառափայտ, կենտրոնից՝ գաղգյահ-
ներ, սարքավորում, տեքստիլ:

Այդ հրավիրվում են մի շարք աշակերտներ, վորոնց կարճ
հարցեր են տրվում կրկնության համար: Յուրաքանչյուրը պա-
տասխանում է մեկ հարցի միայն: Համը քարտեզի վրա նշանա-
կած բոլոր վայրերը ջնջվում են և մնում են միայն Ուկրաինայի
սահմանները և Գնեպր ու Գոնեց դետերը պատկերող գծերը,
վորպեսզի աշակերտներն ավելի հեշտությամբ կարողանան
կողմնորոշվել:

Ահա այդպիսի հարցերից մի քանիսը.

1. Մեջքներդ արեք դեպի քարտեզը և ասացեք. Ուկրաի-
նան վոր վողմից ունի ծովային սահմաններ, վոր կողմից ցա-
մաքային: Ստուգեցեք:

2. Մեջքներդ արեք դեպի քարտեզը և անվանեցեք Ուկրաի-
նայի ցամաքային հարևան պետությունները հերթով, արեվել-
քից—արեմուտք: Ստուգեցեք:

3. Մեջքներդ արեք դեպի քարտեզը, անվանեցեք Ուկրաի-
նայի բարձրությունները: Ասացեք վոր վորտեղ է գտնվում:
Ստուգեցեք:

4. Մեջքներդ արեք դեպի քարտեզը և անվանեցեք Ուկրաի-
նայի դետերը (առանց վտակների)՝ հերթով, արեվելքից—ա-
րեվմուտք:

5. Անվանեցեք Գնեպրի վտակները. աջափնյա վտակներն
առանձին, ձախափնյա վտակներն առանձին:

6. Բուսական վոր դոտիներում է ընկած Ուկրաինան (ա-
նունները):

7. Բնութագրեցեք Պոլեսայի բնությունը (ուկեսից, բուսա-
կանությունը, կլիման՝ տեղադրված ունեցած թվերը հիշատա-
կելով):

8. Բնութագրեցեք Աջափնյա մասի բնությունը:

9. Բնութագրեցեք Զախափնյա մասի բնությունը:

10. Բնութագրեցեք Մերձակեծովյան շրջանի բնությունը:

11. Գրատախտակի վրայի ուրվագծային քարտեզի վրա համապատասխան վայրերում կետերով նշանակեցեք յերկաթը, քարածուիքը, մարգանեցը:

12. Ուրվագծային քարտեզի վրա նշաններ դրեցեք այնտեղ, վորտեղ ելեկտրոկայաններ կան:

12. Ուրվագծային քարտեզի վրա կետերով նշանակեցեք Դնեպրի ափերին գտնված քաղաքները:

14. Ուրվագծային քարտեզի վրա կետեր դրեցեք այնտեղ, վորտեղ խարկովն է գտնվում և վորտեղ գտնվում են Դոնրասի քաղաքները:

15. Ուրվագծային քարտեզի վրա կետերով նշանակեցեք Ուկրաինայի նավահանգստային քաղաքները:

Հաջորդ դասին կպատրաստեք դասադրքի համապատասխան հարցաթուղթ (մատնանշվում է էջը): Մանր տատերով դրվածը միայն ընթերցելու համար է:

ԴԱՍԻ ՍՍՐՔԱՎՈՐՈՒՄԸ

1. ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասի (ցանկալի յե հատկապէս Ֆիզիկական) և ԽՍՀՄ-ի (քաղաքական) պատի քարտեզները:

2. Գրատախտակ և կալիք:

3. Աշակերտների համար Ս. Վ. Չեֆրանովի 7-րդ դասարանի դասադրքը, ամեն մի աշակերտին մի հատ և քարտեզներ:

4. ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասի ուրվագծային քարտեզը (յեթե այդ չկա, գոնե ամորջ ԽՍՀՄ-ի կամ միայն Ուկրաինայի ուրվագծային քարտեզը՝ արտանկարած դասադրքից):

5. Մատիտներ, գրչածայրեր, տետրակներ դրելու համար:

6. Յեթե կարելի յե՝ Ուկրաինային վերաբերող աշխարհագրական նկարներ:

«ԱՆԴՐԿՈՎԿԱՍ» ԹԵՄԱՅԻ ԿՈՆՍՊԵԿՏԸ

«Կովկաս» Իեմայի պլանավորումը (8-րդ դասարան) կազմել է Զ. Գ. Ֆրեյլիքը

Ամբողջ «Կովկաս» թեմային ծրագրով հատկացված է 6 ժամ: Դրանից 3 ժամը պետք է հատկացնել Նախակովկասի շրջաններին և 3 ժամն էլ՝ Անդրկովկասին:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անդրկովկասի բնական պայմանները և տնտեսութայն ընդհանուր բնութագրությունը — 1 ժամ:
Աղբբեջանական ԽՍՀ և Հայկական ԽՍՀ — 1 ժամ:
Վրացական ԽՍՀ — 1 ժամ:

ԱՌԱՋԻՆ ԴԱՍ

ԹԵՄԱ. ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (ՏԵՍ ԾՐԱԳԻՐԸ)

Դասի մեթոդական պրիմները

1. Թեմայի պլանավորումը — 5 րոպե:
2. Նոր նյութի հաղորդում — ծավալուն դրույց, աշխատանք պատի և աշակերտական քարտեզներով ու սխեմա քարտեզով — 30 րոպե:
3. Յեղրակացություններ, դիտելիքներ ամրապնդում, տեսյին առաջադրանք — 10 րոպե:

ԴԱՍԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄԸ

1. Կովկասի ֆիզիկական քարտեզը:
 2. ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասի վարչական քարտեզը:
 3. Դասադրքեր և ատլասներ աշակերտներին համար:
 4. Գունավոր կալիքներ, ծայրահեղ դեպքում սովորական կալիք:
- Ուսուցիչն սկսելով դասը «Անդրկովկասյան հանրապետու-

թյունների բնությունն ու անտեսությունը» թեմայի շուրջը հարցնում ե. — ո՞վ կարող ե անվանել և ցույց տալ Անդրկովկասի հանրապետություններն ու նրաց գլխավոր քաղաքները: Աշակերտները մատ են բարձրացնում: Ուսուցիչը հարցնում ե մի քանիսին քարտեզի վրա և առաջարկում ե մյուսներին՝ իրենց առյուծների վրա հետևել, թե վորքան ճիշտ ե ցույց տրվում:

Հիշատակելով Թուրքիայի և Իրանի հետ ունեցած մեր հարավային սահմանները՝ ուսուցիչը բացատրում ե, վոր այդ սահմանները ներկայումս մեզ համար հանդիստ են: Թուրքիան և Իրանը չահազրդուված են մեզ հետ բարեկամական հարաբերություններ և առեկտրական կապեր պահպանելու խնդրում, քանի վոր իրականում մենք ասպացուցեցինք մեր խաղաղասիրական քաղաքականությունը և միաժամանակ նրանց համար հանդիսանում ենք հղոր, ինդուստրիալ պետություն:

Ապա ուսուցիչն սկսում ե բացատրել Անդրկովկասի բնական պայմանները:

Բացատրածն աշակերտների վրդմից լավադույն կերպով յուրացնելու համար ուսուցիչը դրատախտակի վրա դժում ե Կովկասի սխեմատիկ քարտեզը: Դրա համար նա դրատախտակի վրա անց ե կացնում յերկու ոժանդակ դժեր— 45-րդ միջորոյնականը և 42-րդ գուղահեռականը: Յույց ե տալիս գլխավոր լեռնաշղթաների և գետերի ուղղությունը:

Գծերով քարտեզը՝ ուսուցիչը բացատրում ե, վոր Անդրկովկասը գտնվում ե Կովկասյան լեռնաշղթայից Հարավ՝ Սև և Կասպից ծովերի միջև: Սուրամի լեռնաշղթայով Մեծ Կովկասը միանում ե Փոքր Կովկասի հետ: Արևմուտքում գտնվում ե Ռիոնի դաշտավայրը՝ խոնավ, մեղմ յենթարեվադարձային կլիմայով: Ռիոնի ներքին հոսանքում գտնվում ե նշանավոր Կոլխիդան, վոր այժմ Վրաստանի բոլշևիկների ձեռքով ճահիճների և մալարիայի բուժարանի փոխարեն դառնում ե թանգարժեք և հազվադեպ յենթարեվադարձային կուլտուրաների ծաղկող բուժարան:

Սուրամի լեռնաշղթայից դեպի արեվելք ընկած ե Կուր-Արաքսի դաշտավայրը՝ Արալո-Կասպյան կլիմայի տիպի չոր

ցամաքային կլիմայով: Այդ դաշտավայրի մի մասն են կազմում Միլի (Կուրի և Արաքսի ներքին հոսանքների միջև) և Մուղանի (վոր գտնվում ե Արաքսի և Կուրի միացման տեղից դեպի արեվելք) չոր տափաստանները:

Թալիշի լեռների և Կասպից ծովի արանքում գտնվում ե Լենքորանի դաշտավայրը, խոնավ և տաք կլիմայով (կլիմախոնավ յենթարեվադարձային շրջան):

Դեպի հարավ ընկած ե Հայկական բարձրավանդակը՝ չոր և խիստ ցամաքային կլիմայով:

Ուսուցիչն առաջարկում ե աշակերտներին հիշել, թե Բ՞նչ ե նրանց հայտնի Անդրկովկասի ողտակար հանածոներից: Հրավիրվում են մի քանի աշակերտներ քարտեզի մոտ: Քանի վոր ողտակար հանածոներն ավելի մանրամասն պետք ե ուսումնասիրվեն առանձին հանրապետություններն ուսումնասիրելիս (այսինքն 2-րդ և 3-րդ դասերին), այդ պատճառով այժմ կարելի յե բավարարել ամենակարևորներով (քարածուխ՝ Վրաստանում, պղինձ՝ Հայաստանում, Բազիլի նավթը և ձիթուրի մարդանեցը): Ուսուցիչը նշում ե վերջին յերկու հանքերի համալսարհային նշանակությունը: ԽՍՀՄ-ն առաջին տեղն ե բռնում ամբողջ աշխարհում նավթի և մարդանեցի պաշարների տեսակետից:

Պարզելով Անդրկովկասի բնության բաղադրանությունն ու հարստությունը, ուսուցիչը դասարանի առաջ հարց ե դնում. «Քինչպիսի դժվարություններ պետք ե հաղթահարել՝ Անդրկովկասի բնական հարստություններին տիրապետելու համար»:

Գլխավոր դժվարություններն են. լեռնային ռելյեֆը, վորը դուրդատնտեսությունից շատ տարածություն ե խրում և խանգարում ե հաղորդակցությունը:

Պայքարի միջոցները. լեռնալանջերին տեռասներ (դարավանդներ) կառուցելը և ճանապարհներ կառուցելը (գլխավորապես խճուղիներ՝ ավտոմոբիլային տրանսպորտի համար):

Բացի այդ, Անդրկովկասում կան տեղեր, վորտեղ ճահիճների չորացում ե պահանջվում, և կան տեղեր, վորոնք վոռուզման պահանջ են դդում: Այդ շրջանները ցույց են տրվում քարտեզի վրա:

Ուսուցիչն ընթերցում և տալիս և լրացուցիչ բացատրութիւններ, լրացումներ և բերում է որինակներ այն հարցի մասին, վոր ցարական կառավարութիւնը խանգարում էր Անդրկովկասի արտադրողական ուժերի զարգացումը: Պարզաբանում է, վոր ինչպէս շատ ծայրամասեր, այնպէս ել Անդրկովկասը ցարական Ռուսաստանի մի հետամնաց գաղութն էր:

Ապա անցնում են այն հարցին, թե Անդրկովկասի գյուղատնտեսութիւնն ինչ կուլտուրաներով և մասնադիտանում:

Աշակերտները վերհիշելով այն, ինչ սովորել էին ուսումնական տարեսկզբին «Գյուղատնտեսութեան աշխարհագրութիւնը» թեմայի մշակման ժամանակ, կարող են անվանել Անդրկովկասյան հանրապետութիւնների գլխավոր կուլտուրաների ճուղերը. բամբակ, ծխախոտ, թեյ, խաղողարուծութիւն, այգեգործութիւն, շերամապահութիւն:

Ուսուցիչը պարզաբանում է, վոր Անդրկովկասը, վորպէս ցարական Ռուսաստանի գաղութ, իր գյուղատնտեսական հումքն արտահանում էր Ռուսաստանի արդյունաբերական կենտրոնները, իսկ տեղում չէր զարգացվում հումքի մշակումը: Ներկայումս այստեղ լայն կերպով ծախսուած է ստացել, թեթև արդյունաբերութիւնը— բամբակեղենի, մետաքսեղենի, կաշվեղենի, կարի, սննդի (գինեգործութիւն, ծխախոտի մշակութիւն, մրգահոններվային, ձեթ-ոճառի, մսի և այլն):

Ավելի ուժեղ չափերով է վերակառուցվել ծանր արդյունաբերութիւնը: Անդրկովկասի հանքային հարստութիւնները միշտ ել գրավել են ուսու և ստաբերկրյա կապիտալիստներին: Առանձին «հրապուշտ» էր ներկայացնում իրենից Բաքվի նավթը: Նա լայն կերպով հայտնի յեր ուսուական և արտասահմանյան շուկաներում: Նավթի արդյունահանութիւնը տարվում էր շատ պրիմիտիվ և դիշտորիզ կերպով: Նավթն արտահանվում էր գլխավորապէս հում փիճակում, և նավթային արդյունաբերութիւնը համարյա վոչ մի աղետցութիւն չէր թողնում Անդրկովկասի տնտեսութեան վրա՝ լրացուցիչ և ոժանդակ արդյունաբերական ճյուղեր ստեղծելու տեսակետից:

Ներկայումս Անդրկովկասում, նավթի արդյունաբերութիւնից բացի, վոր կազմակերպված է տեխնիկայի վերջին խոսքի հիման վրա, կա նաև նավթի վերամշակման արդյունաբերութիւն, քարածխային, քիմիական, մետաղադործական (սև և գունավոր) արդյունաբերութիւն և անգամ մեքենաշինութիւն: Արագ թափով զարգանում է հզոր եներգետիկ արդյունաբերութիւնը:

Մեր հայրենիքն ի հեճուկս թշնամի ուժերի ծաղկեց:
Առում են. «Ի՞նչ պատահեց նրան, չե՞ վոր նա գաղութ եր»:
Մեզ ինդուստրիայի հաղթանակը Մեծ Ստալինն իր ձեռքով տվեց:

Նա բողմադատեց մեր ուժերը և աշխատանքում դաստիարակեց:
Գետերը հոսում էլին լեռներից և չգիտեյին, թե ինչ է արդէլը:

Մենք նրանց ամուր շղթայեցինք յերկաթով ու բետոնով:
Մեծ պլանը Իլիչի լուսով լուսավորեց մեր յերկիրը:

Մենք սանձեցինք բնութեան անհնազանդ ուժերն ուժերը:
(Խորհրդային Վրաստանի աշխատավորների նամակից՝ ուղղված Ժողովուրդների առաջնորդ ընկ. Ստալինին):

Տնային առաջադրանք. սովորել դասագրքի համապատասխան հատվածները (նշվում են եջերը): Քարտեզով կրկնել Անդրկովկասի վարչական բաժանումը:

ՆՅՈՒԹԵՐ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ՝ ԴԱՍԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԹԵՐՑԵԼՈՒ ԿԱՄ ՊԱՏՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Սև ծովի ափերի մոտ ընկած է տեղասնների (դարավանդների) շերտը: Հյուսիսում՝ Գաբրիում և Նոր Աֆոնում այդ շերտը նեղ է: Մեծ կովկասի կրաքարային և բարձրաբերձ լեռները մոտենում են այստեղ ծովափին: Հարավային Արեւիկայում այդ տեսակներն ընդարձակվում և անցնում են հեռու, դեպի Արևմուտյան Վրաստան, հյուսիսից չըջափակելով Ռիոնի դաշտավայրը:

Յեռասանների շերտն առաջացնում է խիստ անդամատված սանդղա-
ձև ուլիֆ: Այստեղ կենտրոնացած է ամենախիտ ազդարնակու-
թյունը: Այդ շերտը լավ է մշակված: Դրա խիստ հակապատկերն
են ներկայացնում Մեծ Կովկասի դեպի վեր բարձրացող դժվարա-
ժատչելի և սակավաբնակ հրաբարային լեռնաշղթաները: Նրանք
աչքի յեն ընկնում խոր դետերի կանյոնաձև հովիտներով և կարս-
տյան յերևույթներով: Այստեղ հաճախ են փրումները, այրերը,
ձազարաձև անցքերը: Տեռասաններից ցած տարածվում է Ռեյոնի
դաշտավայրը, հասնացած և ծածկված անտառներով: Այժմ
այստեղ առաջ են դնում մելիորատիվ աշխատանքներ: Հարավից
այս դաշտավայրը շրջափակված է Փոքր Կովկասի բլրածածկ
նախալեռներով: Սրանք բերրի, մշակվող և բնակված վայրերն
են: Հարավում է գտնվում Բաթումի շրջանը: Բաթումի ծո-
վափը շրջափակվում է բարձր անտառածածկ լեռներով: Չնայած
Կովկասյան իր կլիմայի տեսակետից համեմատում են Չապոնիայի
հետ, սակայն խոշոր տարբերություն կա այդ յերկուսի միջև:
Կովկասյան տեղումների մեծ քանակությունը ընկնում է
ձմռանը, դրա համար ել նրա կլիման միջերկրածովյան կլիմայի
խոնավ տարբերակն է: Տեղումներն այստեղ հասնում են 2—2½
մետրի: Հունվարի ջերմությունը 5—7 աստիճան է, հուլիսին՝
23—24 աստիճան: Քամիների ուղղությունը վրա խիստ կերպով է
ազդում հայկական բարձրավանդակի բարձր մասի վր: Նա խիստ
կերպով տաքանում է ամառը և աչքի յե ընկնում մթնալորտի
համեմատաբար ցածր ճնշմամբ, փոքր պատճառով և իրեն է
ձգում ողային մասսաներն արևմուտքից և արևելքից:

Միտ և փարթամ անտառային բուսականությունն է ծածկում
Կովկասյան: Անտառն այստեղ բաղկացած է լայնատաղարթ ծառե-
րից, մորոնց մեջ դերակառնում են կաղնին, շաղանակենին, բախին,
հաճարին, թղիին, կնձին, հացենին, լաստենին և, մեջ ընդ մեջ,
ուլիկտովյան բույսեր, ինչպես որինակ, ձելիվան, լապինան և
մյուսները:

Այս անտառին հարավային տիպ է տալիս մշտականաչ
թիուտների, յենթանտառային (սամիչա, դափնեկեռաս, պոն-

տական ոռոգողներն) և միջերկրածովյան բույսերի (ոլեանդր,
վայրի խաղող և այլն) առկայությունը:

Անտառների այսպիսի բնույթը պահպանվում է 600—800
մետրի վրա: Ավելի բարձր վրա մշտականաչ ծառերը և լիան-
ները ջրանում են, և այդտեղ դերակառնում է հաճարին: Վերին
գոտին կազմված է փշատերև անտառներից, սպիտակ և սովորա-
կան յեղևնուց:

Բուն Կովկասյան անտառի շրջանում է ընկնում թանգարժեք
յենթարևադարձային կուլտուրաների, ինչպես, որինակ՝ թեյի,
մանդարինի, լիմոնի, ուսմի և այլն մշակման շրջանը:

Այս բույսերի մշակությունն տարածությունը քանի դնում,
ընդարձակվում է:

ԿՈՒՐԻ ԴՄՇՏԱՎԱՅԻՆ

Կուրի դաշտավայրն իրեն շրջապատող բլրածածկ նախա-
լեռնային գոտով ներկայացնում է տիպիկ կիսանապատ: Կլիման
աչքի յե ընկնում մեղմ ձմեռով և սաստիկ չոր, յերկարատև և
տաք ամառով: Հարթավայրում հողերը մոխրահողեր են և բաց
գորշադույն հողեր: Բուսական ծածկույթի մեջ դերակառնում են
սպիտակ ոչինդը և աղասեր բույսերի զանազան տեսակները:
Բլրածածկ նախալեռներում իրար են խառնվում զանազան կա-
նաչներն ու թիուտները: Կլիման շատ բարենպաստ է բամբակի
կուլտուրայի համար:

Կուրի դաշտավայրն անասունների հոտերի համար կարևոր
գեր է խաղում փորպես ձմեռային արոտավայր: Ամռանը այդ
անասուններն արածում են լեռնային մարգագետիններում:

Հողազործությունը հնարավոր է միայն արհեստական փո-
ռոգման պայմաններում. դրա համար ել դրանով զբաղվում են
լեռների լանջերում, փորտեղ աղբյուրների հետ միասին մեծ ա-
յուտ են տալիս արհեստական փոռոգման համար կառուցված
ջրանցքները:

Կուրի դաշտավայրի մի մասն է կազմում Մուղանի տափաս-
տանը:

Մուղանը արևելյան Անդրկովկասի ընդարձակ չոր տափաս-

տաններէ մի մասն է: Գարնանային անձրևները հազիվ են յեկած լինում և դեռ Մուղանի հարթութեան ղեղնամոխրազույն լանդշաֆտը հազիվ է կենդանացած լինում, յերբ արևը դաժան կերպով այբում է կանաչի բոյրը հետքերը, և Մուղանը յերկար ժամանակ, հաճախ 7—8 ամիս, դառնում է տոթի և չոգի թագաւորութիւն: Արեգակի առատ ճառագայթներէ տակ, համարյա միանգամայն ջինջ, անամպ յերկնքի պայմաններում, ղետինն այստեղ դառնում է ասես շիկացած սալ, վորի վրա հնարավոր չէ մերկ վտռքերով կանգնել:

Մուղանի տափաքտանի բնութիւնը տխուր և և թախծոտ, բայց և ծայրահեղ յուրատեսակ: Այս տափաստանը սեղանի նման հարթ է և նման չէ սևահողային շերտի խոտածածկ տափաստաներին: Մուղանը չի հիշեցնում նաև կարմիրկյան տափաստանը, վոր ծածկված է իրարից հեռու ընկած, ցանցառ կերպով աճած սպիտակամոխրազույն ոչխուրի թփուտներով կամ սրանց նման նուշապես ցածրահասակ, նուշապես մանրատերև և սպիտակ մոխրազույն յերկարամյա գաշտախոտով: Մերկ ղեղնամոխրազույն հողը այստեղ չի ծածկված խոտերի միջերով: Նա չոր և անպտուղ: Իրարից հեռու-հեռու ընկած տարածութեան վրա, ինչպես իտիական աղբտներում, հատ ու կենս, այստեղ-այստեղ յերևում են յուղոտ աղուտ բույսեր, յուղոտ կանաչ տերևներով և ծոճած ճյուղերով: Ունենալով մութ կանաչ գունավորում, նրանք, վորպես մութ կետեր, դունաղարդում են տափաստանի մակերևութիւնը, տալով նրան մռայլ կոլորիտ:

Իրենից տխուր տեսարան և ներկայացնում նաև չոգին ու յերաշտին հարմարված բուսականութիւնը. ուղտի կերախոտը, աղասեր բույսեր, յերկար արմատներով կապերաներ, վորոնք իրենց արմատներով խոնավութիւն են հայթայթում հողի խորքերից: Հաճախ այստեղ պատահում է յուրահատուկ մի բույս— «կատաղած վարունգ»-ը: Վայ նրան, ոյ կմտածի անզուշորեն պոկել նրա պտուղը: Նախ քան դուք կգիպչեք այդպիսի վարունգին, նա ինքը պայթելով ցնցումից «կրակում է» ձեր յերեսին կայչուն հեղուկի շիթով և մանր թաց սերմերով, վոր շատ նման են վարունգի սերմերին:

Հողը քանդվում և հեռուներն և քշվում քամու ողնութեամբ: Տեղ-տեղ այդ տափաստանը նման է կոշտածածկ ճահճի, վորովհետև հետև քամին քշել-տարել և հողի վերևի շերտի մեծ մասը և վորպէս փոշի ցրել այս ու այն կողմ, և բույսերի արմատներէ մտա մնացել է նրանցով պահված հողի մի փոքրիկ կտոր ու թշվում է, թէ յուրաքանչյուր թփուտ աճել է առանձին բարձր չորահողշտի վրա: Իսկ փաստորեն այդ հողակոշտերը ցույց են տալիս նախկին հողաշերտերի մակերևութի բարձրութիւնը:

Անապատի խղճուկ բուսականութեան մեջ իրենց լավ են զգում անախոտները, յեղնիկները, չախկայները, բորենիները, մողեսները, կրիաները, կասսյան գեկոնները, յեղջուրավոր ոճերը, կարիճները, մորմերը: Յերբեմն այցելութեան են գալիս Մուղան անսահման քանակութեամբ մորեխներ:

Միայն կուրի և Արաքսի ցածրադիր ավերում անապատին փոխարինում են խոնավ անտառների խիտ թփուտները, վորտեղ կաղինը, դարազալը, արծաթյա բարդին, թթենին, ուռենին և այլն: Այս գետախնայա անտառացնում են անանցանելի թավուտներ: Այս գետախնայա անտառները, այսպէս կոչված՝ տուգայները փոխարինվում են յեղեղնուտներով: Յեղեղնուտներում և տուգայներում շատ են վարաղները, հանդիպում են յեղեղնասեր կատուններ, կղաքիս և բազմատեսակ թռչուններ:

Կուրի և Արաքսի միացման տեղում ընկած է անսովոր գեղեցիկ Սարի-Սում լիճը: Այստեղ, մոտավորապէս 40 հեկտար տարածութեան վրա, լոտոսի թփուտներն են. դժվար է պատկերացնել իր գեղեցկութեամբ ավելի մի յուրատեսակ վայր, քան Սարի-Սում լճի մերձափնյա վայրերն են աշնանը, յերբ ծաղկում մետրի վրա ընկած է անուրախ, ղեղնամոխրազույն անապատը:

Հիանալի տեսարան են ներկայացնում իրենցից Մուղանի ջրովի տարածութիւններն աշնանը, յերբ բացվում են բամբակի կնճռուղները: Վոր կողմն էլ նայես, ամենուրեք, ուր աչքը կախուրդ է տեսնել, յերևում են բամբակի թփուտների հավասար ըող և տեսնել, յերևում են բամբակի փափկամաղ ծաղիկներով չարքերը՝ ծածկված շրջուցիչ սպիտակ փափկամաղ ծաղիկներով:

Բամբակի չանաքի յեռուն ժամանակ, ջրանցքների և առուների ցանցով կտրատված այս ծաղիկների ծովի արանքներում յերեվում են դանդաղ առաջ շարժվող բամբակի կոմբայների հրաշալի ֆիզուրները, վորոնք փոխարինում են հարյուրավոր ջանասեր ձեռքերի: Մրցման մեջ մտնելով կոմբայների հետ, հազարավոր կոլտնտեսականներ ու կոլտնտեսուհիներ արեվառ դեմքերով, գույնզգույն հագուստներով լցնում են դաշտերը և խնամքով չանաքում բամբակը:

Դեպի չրջանային կենտրոններն են ձգվում բամբակով բարձած սայլերի քարավանները, վորոնց գալիս, առաջ են տալիս արագընթաց բեռնակիր ավտոնները, իսկ մթերման կետերում վորպես ձյուն են հսկա բլուրներ աճում ու բարձրանում են բամբակի կապոցները:

Բամբակի ցանքերն այստեղ զուգորդվում են առվույտի ցանքերով, վորոնք վերադարձնում են հողին նրա բերրութունը և դրանով իսկ լուծում Մուզանի համար մեծ նշանակութուն ունեցող կերի պրոբլեմը:

Համարյա ամենուրեք, վորտեղ ջրի թիչ թե շատ ավելցուկ կա, մշակում են բրնձ, ջուշուլ (յուղատու բույս), բախչաներ և բանջարանոցներ, ինչպես և այգիներ:

Ջրովի հողագործության հետագա զարգացումը կապված է կուրի և Արաքսի հոսանքի կարգավորման պրոբլեմի հետ:

Թ Ա Լ Ի Շ

Թալիշի լեռները բաղկացած են 5 ընդլայնական զուգահեռ լեռնաշղթաներից: Դրանցից ամենաարեվելյանները 1000 մետրից ավելի չեն բարձրանում, իսկ 5-րդը, վորով և անցնում է սահմանը, առանձին դադաթներով բարձրանում է մինչև 2,5 հազար մետր: Լեռներից հոսում են մի շարք գետեր: Գետերից շատերը ծովափին հանդիպելով այլեքներով չվողովված վոչ շատ բարձր պատնեշների, վորոնք կաղմված են ավաղից և խճաքարերից, ստաջացնում են վոչ շատ մեծ քաղցրահամ լճեր:

Թալիշի լեռները համարյա ընդհուպ մոտենում են Կասպից

ծովի ավին, թողնելով միայն հողի նեղ շերտ (20 կմ շախու-թյամբ):

Անցումը դաշտավայրերից լեռներին այստեղ կատարվում է միանդամից, ամենաուղղաձիգ դժով, վորը հանդիսանում է իջվածքի գիծը:

Խոնավ քամիներն այստեղ կանգ են առնում, վորի հետևանքով Թալիշը 5—6 անգամ ավելի խոնավութուն է ստանում քան Մուզանի տափաստանը (700—1400 մմ):

Տեղումների առատութունը նկատվում է միայն մերձծովյան դաշտավայրերում և լեռների արևելյան լանջերին: Արեվմուտյան լանջերը չոր են և անտառազուրկ:

Ջերմության և խոնավության առատութունը բուսականությանը հաղորդում է անսովոր ուժ: Շաղանակատերև կաղնութավուտները, վոր այստեղ հասնում են հսկա չափերի, հաջորդափոխվում են ճյուղավոր յերկաթյա ծառի մասսիվներով. այս պիսի ծառը կտրելը այնքան ել հեշտ գործ չէ:

Թալիշի անտառները հաճախ ներկայացնում են իրենցից անանցանելի թավուտներ: Լաստենու և յեղեգնի խիտ, անանցանելի թավուտները դաշտավայրում վերջինիս տալիս են ջուշուլի տեսք. դրանք բնակված են կենդանական յուրատեսակ աշխարհով: Այստեղ հանդիպում են թուրանի վազրեր, լեռաբրդներ, հով: Այստեղ հանդիպում են թուրանի վազրեր, լեռաբրդներ, հովազ, խոզուկ (дикобраз), չախկալ, վայրի վարազ: Ձմռանը գեպի լճերն են դալիս բազրերի, սագերի, կարպների, ձկնկույների և Ֆլամինդոների անհաշիվ յերամներ:

Յուրապեսակ են և Թալիշի հողերը: Ծովափնյա մասերում և լեռնալանջերում դրանք դեղնահողեր են և կարմրահողատեսք դեղնահողեր: Թալիշի դեղնահողերում թեյի, ինչպես և խցանի կաղնու, բամբուկի և ձիթենու բուծման փորձեր են արվում: Մշակվում է բրինձ:

Լեռքորանից հարավ ընկած ավաղոտ ծովափերն աչքի յեն ընկնում իրենց մութ գունավորումով, վոր առաջ և դալիս յերկաթի ներկայութունից: Լեռքորանի մոտ կան հանքային տաք աղբյուրներ:

Հայկական բարձրավանդակն իր բարձր մակերեվույթի հետևանքով ունի խիստ ցամաքային և չոր կլիմա, տեղումներ քիչ են լինում: Ամառն այստեղ տաք է, ձմեռը՝ դաժան:

Գերակշռում են վայրի, բավականաչափ լերկ քարալանջերը, վորոնք ծածկված են խղճուկ լեռնային մարդադեփոխներով, վոր ողտադործվում են վորպես արտավայրեր:

Բարձրավանդակի հարթութուններում զարգացած են լեռնասևահողային և լեռնաչաղանակադույն հողեր՝ լեռնատափաստանային բուսականությամբ: Այդ հողերը բերրի չեն և ողտադործվում են հացարույսերի ցանքերի համար:

Հարավային իջվածքային խառնարանները, Արաքսի հովտի հետ միասին, ունեն ավելի տաք ամառ և կիսանապատային են ներկայացնում:

Հրաբխային և նստվածքային հողերն այստեղ շատ բերրի չեն և արհեստական վոռոգման պայմաններում պայմանավորում են պտղատու և խաղողի այգիների, ինչպես և բամբակենու փարթած գաշտերի գոյությունը: Այստեղ կան նաև վայրեր մշտականաչ բուսականությամբ, տաք, մեղմ ձմեռով և ձնածածկ դադաթնեքով, վորոնց վրայից ձյունը յերբեք չի հալչում: Կան շրջաններ, վորտեղ չափից դուրս առատ են տեղումները և ճահիճների չորացում են պահանջում, ինչպես և կան սակավաջուր վայրեր, վորոնք վոռոգման կարիք են դրում:

ՅԵՐԿՐՈՐԴ ԳԱՍ

ԹԵՄԱ. ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԽՍՀ ՅԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ

Բովանդակությունը (տես ծրագիրը)

Դասի մեթոդական պրիմները

1. Առաջին դասի հաշվառումը— 10 բույե:

2. Ուսուցչի պատմածը Աղբրեջանական ԽՍՀ-ի և Հայկական

ԽՍՀ-ի մասին և աշխատանք քարտեզով— 30 բույե:

3. Տնային առաջադրանք— 5 բույե:

1. Կովկասի Փիզիկական քարտեզը:

2. ԽՍՀՄ-ի Յեկրոպական մասի վարչական քարտեզը:

3. Դասազրքեր և ատլասներ աշակերտների համար:

ա. Ուսուցիչը դրատախտակի վրա դժադրում է Կովկասի սխեմատիկ քարտեզը (տես առաջին դաս), դժում է գլխավոր լեռնաշղթաները և գետերը: Ապա ուսուցիչն ուղտադործելով դասազրքի հարցերը, հետևյալ հարցն է առաջադրում աշակերտներին. «Վորոնք են Անդրկովկասի գլխավոր բնական հարստությունները»: Թույլ տալով, վոր աշակերտները մի քիչ մտածեն, ուսուցիչը հրավիրում է յերկու աշակերտի. մեկին առաջարկում է սխեմատիկ քարտեզի վրա նշանակել լեռնաշղթաների և գետերի անունները, իսկ մյուսին՝ բանավոր պատասխանել առաջադրված հարցին:

Հիշատակելով գետերը, վորպես Անդրկովկասի գլխավոր հարստություններից մեկը, ուսուցիչը լրացուցիչ կերպով կարող է հարցնել, թե ի՞նչ հիդրոկայաններ են կառուցված այդ գետերի վրա:

«Եներգետիկա» թեմայից աշակերտները հավանորեն հիշում են Ջաղեսը, Ռիոնդեսը, Քանաքեոգեսը, Զորագեսը և այլն: Ցույց են տրվում նաև այդ կայանների վայրերը և նրանց մոտ դանված գլխավոր քաղաքները:

Ապա ուսուցիչը տալիս է յերկրորդ հարցը՝ Անդրկովկասը ցարական Ռուսաստանի դադութը լինելու մասին, պահանջելով նրանցից վսչ թե ընդհանուր դատողություններ և ձևակերպումներ, այլ կոնկրետ փաստեր:

Այնուհետև կարելի յե աշակերտներին հրավիրել սխեմատիկ քարտեզի մոտ, նրա վրա նշանակելու համար Անդրկովկասի խոնավ և չորային վայրերը, մասնավորապես Կոլխիդան, Մուղանը, Թալիչը և Արարատյան դաշտավայրը:

բ. Անցնելով Աղբրեջանական ԽՍՀ-ի տնտեսության բնութագրմանը, ուսուցիչն առաջարկում է դիտել դասազրքում տրված քարտեզը, ծանոթանալ յերկրի տիբրիտորիային և սահմաններին:

Աշակերտները նայելով քարտեզին պատրաստում են պատասխանը:

Այնուհետև ուսուցիչն աշակերտներից մեկին առաջարկում է ցույց տալ քարտեզի վրա Ադրբեջանի վարչական բաժանումը: Աշակերտը ցույց է տալիս Նախիջևանի ԱՍՄ-ն (Նախիջևան քաղաքով) և Լեռնային Ղարաբաղի ԱՄ (Ստեփանակերտ քաղաքով):

Ուսուցիչը բացատրում է Ադրբեջանի վարչական կազմը և միաժամանակ բացատրվում է Ադրբեջանի բնակչության ազգային կազմը:

Ապա ուսուցիչն առաջարկում է աշակերտներին դիտելով դատարբի քարտեզը՝ պարզել, թե ինչպիսի հանածոներ կան Ադրբեջանի տերիտորիայի վրա (յերկաթ—Դաշքեսանում, ալունիդ—Չազլիկում, Պղինձ—Գետաբեկում, վորոնք ընկած են Կիրովաբադից հարավ-արեւելք): Ապա աշակերտներից մեկին առաջարկվում է սխեմատիկ քարտեզի վրա ընդունված պայմանական նշաններով նշել այդ հանքավայրերը:

Ուսուցիչը մատնանշում է, վոր Ադրբեջանի հիմնական մասնադիտացումը ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսութան մեջ հանդիսանում է նավթային արդյունաբերութունը, բամբակամշակութունը, անասնապահութունը և այգեգործութունը:

Դեպի ո՞ւր և ի՞նչպես է արտահանվում նավթը: Աշակերտների ողնությամբ ուսուցիչը պարզաբանում է, վոր ԽՍՀՄ-ի ներքին շուկան է զնում նավթը Կասպից ծովի և Վոլգայի վրայով և բաշխվում է ամենուրեք՝ դանազան ճանապարհներով: Մյուս ճանապարհը— դա նավթատար խողովակներն են և յերկաթուղին՝ Բաղվից— Բաթումի և Փոթի, իսկ այդտեղից ել նավթն արտահանվում է արտասահման և Ուկրաինայի նավահանգիստները: Ուսուցիչը ծանոթացնում է, թե ինչպես ելին նախահեղափոխական շրջանում ոտարերկրյա և ցարական կապիտալիստները դիշատիչ կերպով արդյունահանում Բազվի նավթը, դրան հակադրելով Բազվի ներկայիս նավթարդյունաբերութունը, վոր սարքավորված է տեխնիկայի վերջին խոսքով:

Մյուս, ծանր արդյունաբերության ամելի յերիտասարդ

կենտրոնն է Կիրովաբադի շրջանը: Այստեղ հիմնադրվում է սև և դունավոր մետալուրգիայի շրջանը: Մետաղից կապտաբաժնի անհրաժեշտ սարքավորում նավթային արդյունաբերության համար: Այս շրջանում հայտաբերված են ամենաբազմազան հանածոներ, այդ թվում՝ վոսկի, մարգանց (վորոնք անհրաժեշտ են մետալուրգիայի համար), ալյումինի կավեր, ինչպես և շինանյութեր:

Պարզելու համար, թե ինչպես են տեղադրված դյուղատնտեսության ճյուղերն Ադրբեջանի ԽՍՀ-ի տերիտորիայի վրա, ուսուցիչն առաջարկում է դիտել դասազրբի համապատասխան քարտեզը:

— Նայեցեք պայմանական նշաններին, —ասում է ուսուցիչը: Գյուղատնտեսական ինչպիսի կուլտուրաներ են մշակվում Ադրբեջանում (բամբակ, խաղող, մետաքս, բրինձ):

— Վո՞րտեղ են կենտրոնացած բամբակի ցանքերը (Կուր—Արաքսի դաշտավայրում, այսինքն՝ Մուղանի և Միլի տափաստաններում):

— Բամբակի կուլտուրայի համար ի՞նչպիսի բնական պայմաններ են անհրաժեշտ (տաք կլիմա, յերկարատև, վոչ սառնամանիքային շրջան՝ կասված բամբակենու վեղեստացիոն շրջանի յերկարատևության հետ, անամպ, տաք ամառ, խոնավության մեծ քանակություն):

— Կարո՞ղ է բամբակն աճել Մուղանի և Միլի տափաստաններում առանց արհեստական վոռոգման:— Վո՞չ, չի՛ կարող: Պարզաբանվում է, վոր խոլացիան Կուր—Արաքսի դաշտավայրի դյուղատնտեսության հիմքն է:

Ադրբեջանն ունի այնքան բարենպաստ ջերմային պայմաններ, վոր հնարավորությունն է տալիս մասնադիտանալու բամբակի յեղիպտական ամենաարժեքավոր տեսակների արտադրության մեջ (յերկարաթել բամբակ, վոր ողտադործվում է պատասխանատու տեխնիկական կտորեղենի, ինչպես և լայն վորակավոր սպառման առարկաների արտադրության համար):

Ուսուցիչը մատնանշում է դաշտերի վոռոգման վոչ միայն տնտեսական, այլև խոչոր քաղաքական նշանակությունը, վոր-

պես մի հզոր միջոց՝ մանր, վոչխացած տնտեսութիւնները սոցիալիստական ձևով վերահասուցելու գործում, կորտնտեսութիւնների ստեղծման և ամրապնդման գործում: Անդրկովկասի և Կովկասի հանրապետութիւնների կոմունիստներին ուղղած նամակում ընկ. Լենինը գրում էր. «Վոտոգումն ամենից շատ է հարկավոր և ամենից շատ կվերաստեղծի յերկիրը, կվերածնի այն, կլթաղի անցյալը, կամրապնդի անցումը դեպի սոցիալիզմը»:

Բամբակագործական շրջաններում կառուցված են բամբակագործական գործարաններ: Բամբակագործութիւնը զուգակցվում է աւելույտի ցանքերի հետ, վոր շատ անհրաժեշտ է հողերի բերրութիւնը վերադարձնելու համար, հացահատիկային (ցորեն, բրինձ), յուղատու (քունջութ և այլն) և բանջարանոցային այլ կուլտուրաների հետ:

— Վո՞րտեղ են դրաղվում յայդեգործութեամբ և շերամապահութեամբ:

Համեմատելով դասազրքում տրված համապատասխան քարտեզը Ֆիզիկական քարտեզի հետ, դասարանի համար պարզվում է, վոր այդեգործութիւնն ու շերամապահութիւնը կենտրոնացած են լեռնային հովիտներում ու նախալեռներում: Դրա պատճառն այն է, վոր այդ մասերում և՛ տաքութիւնն է շատ, և՛ տեղումները: Նշվում է Նուխի—Շամախի շրջանը (Կիրովաբադից հյուսիս-արեւելք) և Շուշու շրջանը (Կիրովաբադից հարավ):

Ինքը Կիրովաբադի շրջանն աչքի յե բնկնում վոչ միայն վորպես ծանր արդյունաբերութեան նոր կենտրոն, այլև վորպես ջրովի հողագործութեան (հատկապես բամբակագործութեան) կենտրոն: Կիրովաբադում և Բաղվում կառուցված են բամբակի նոր գործարաններ: Այսպիսով ներկայումս Ադրբեջանն իր հումքի նշանակալի մասը վերամշակում է սեփական տեքստիլ գործարաններում: Կիրովաբադի շրջանում մեծ չափերով զարգացած է այդեգործութիւնը, առանձնապես խաղողամշակութիւնը և անդի արդյունաբերութիւնը (ձիթահան, գինեգործութիւն և այլն):

Այնուհետև ուսուցիչը նշում է Կուրի դաշտավայրի դերը անասնապահութեան համար, հատկապես ձմռանը և աշնանը: Անասունների սեզոնային դուրս հանումը բացատրվում է նրանով, վոր ամռանը Մուղանի տափաստանը համարյա թե խանձվում է, և անասուններին քշում են դեպի լեռները—դարնանային արտավայրերը. աշնան անասուններին կրկին բերում են տափաստան, վորտեղ աշնանային անձրևներից հետո նորից կանաչ է բուսնում:

Ուսուցիչը պարզարանում է քոչվորութեան բոլոր անհարմարութիւնները նախահեղափոխական շրջանի պայմաններում (տես դասազրքի մանր տառերով գրածը): Լրացուցիչ կերպով մատնանշվում է, վոր մանր մասնատիրական տնտեսութեան ժամանակ բնակչութեան մի նշանակալի մասը կիսաքոչվորային կյանք էր վարում: Ներկայումս անասունները հանձնարարվում են կոլտնտեսային և խորհրտնտեսային անասնապահներին, իսկ ինքը բնակչութիւնն անցել է նստակյաց կյանքի:

Առաջարկվում է աշակերտներին պարզարանել, թե ինչու Լենքորանի դաշտավայրում են կենտրոնացված բրնձի ցանքերը (խոնավ շրջան): Ուսուցիչը մատնանշում է, վոր Լենքորանի դաշտավայրը թեյի անկարանի նոր շրջան է:

Հայկական ԽՍՀ-ի աշխարհագրութեան նյութի բացատրութեան մեթոդիկական կառուցվում է նույն պլանով, այսինքն՝ ուսուցիչը բացատրութիւն է պահանջում աշակերտներից այն ժամանակ, յերբ նրա հարցը կարելի յե բավարարել քարտեզի վրա ցույց տալով, կամ յեթե այդ հարցն աշակերտներին նախապես ծանոթ է յեղել, կամ յեթե աշակերտների նախապես ունեցած տեղեկութիւնների հիման վրա պահանջվում է յեղրակացութիւններ դուրս բերել: Ինքը ուսուցիչը պատմում է այն, ինչ վոր քարտեզով պարզ չէ աշակերտների համար, կամ անհայտ է, ինչպես և տալիս է սոցիալիստական շինարարութեան հարցերի քաղաքական լուսարանումը:

Հայկական ԽՍՀ-ն ունի ավելի միորինակ բնութիւն և տնտեսութիւն և բավական է, վոր ուսուցիչը աշակերտների ուշադրութիւնը հրավիրի հետևյալ խնդիրների վրա.

1. Պարզել բնական ստրամանների առանձնահատկութիւններն այնպիսի մի յերկրի, վոր դառնում է 1000 և ավելի մետր (ծովի մակերևութից) բարձրութիւն ունեցող բարձրավանդակի վրա, չըջատուած և լեռնաշղթաներով (չոր, ցամաքային կլիմա, անտառների պակասութիւն, ջրի պակասութիւն, չոր տափաստանների առկայութիւն և վոռոգման անհրաժեշտութիւն) :

2. Նշում են պղնձի և շինանյութերի հանքավայրերը : Հայաստանի շինանյութերը հրաբխային ծագում ունեն :

3. Դասագրքի համապատասխան քարտեզով ցույց են տրվում Հայաստանի գյուղատնտեսական դիստրիկտի շրջանները (Արաքսի միջին հոսանքը և Յերևանի գոգավորութիւնը) բամբակագործութեան և այգեգործութեան մասնադիտացմամբ : Մնացած տերիտորիայի վրա մշակվում են հացահատիկային կուլտուրաներ—ցորեն, դարի : Լենինականի շրջանում սկսել են ցանել Հայաստանի համար մի նոր կուլտուրա ևս—չաքարի ճակնդեղ :

Արդյունաբերութիւնը—պղնձի և շինանյութերի արդյունահանութիւն, մրգակոնսերվային, գինեգործական, շաքարի արդյունաբերութիւն, կաշվի և ձեթ-ոճառի արդյունաբերութիւն և նոր դարդացող, մեծ չափերով եներդիա պահանջող քիմիական ճյուղեր (Սինթետիկ կաուչուկի Յերևանի կոմբինատը) :

4. Սեանի ջրերի ոգտագործումը վորպես հսկայական տնտեսական և քաղաքական նշանակութիւն ունեցող սրբուրէմ :

Տնայիմ առաջադրանք սովորել դասագրքի համապատասխան բաժինը (մատնանշվում են եջերը) :

ՆՅՈՒԹԵՐ ԸՆԹԵՐՑԵԼՈՒ ՅԵՎ ՊԱՏՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՅԵ. Մարկով. Աավքի քագավորութեան մեջ

Նավթի արդյունահանութիւնը կատարվում է վիչկաներում : Մոտիկից անհրապույր տեսարան են ներկայացնում այդ վիչկաները. նրանց չորս կողմը մեծ քանակութեամբ ավազի բլուրներ են կիտված, առուներ են փորված, վորոնցով հոսում է գորշ-

կանաչավուն հեղուկը՝ ծածկված դեղին փրփուրով : Այդ հեղուկն արագ կերպով հոսում է նավթի պահպանման համար փորված փոսերի մեջ : Այդ փոսերից միայն մի փոքր մասն է ներսից քարապատ, վորով և այդ թանդարժեք այրվող հեղուկը քիչ թե շատ սրաչտպանվում է փշանալուց :

Իսկ մեծ մասամբ նավթը հոսում է հասարակ հողե փոսերը, վորոնք փորված են ավազե թմբերի արանքներում : Նավթի շատրվաններն են առաջացրել ավազի այդ լեռնաթմբերը, հենց շատրվաններն են լցրել են այդ նավթի լճերը :

Յերբ մենք մտանք այդպիսի մի վիչկայի ներսը, վորտեղ շատրվան կար, մենք տեսանք դետնի մեջ յերկաթյա մի խողովակ, վորի միջով վեր եր բարձրանում շագանակազույն փրփրակալած հեղուկի մի սյուն :

Մի այլ վիչկայում մենք դիտեցինք, թե ինչպես է կատարվում այսպես կոչված «նավթի քաշումը» : Շատրվանը, վոր առաջ այտեղ խփել եր, արդեն վերջացել եր, և նավթը սետք է այժմ արհեստական կերպով դուրս քաշվեր խողովակից : Դա և այժմ արհեստական կերպով վերստին վերելի մակատարվում է շատ հասարակ կերպով : Վիչկայի վերելի մասում պատրաստված է անիվ—բլոկ : Նրա ողնութեամբ մեկ սում պատրաստված է անիվ—բլոկ : Նրա ողնութեամբ մեկ բանվոր, շոգեմեքենայի միջոցով գործի դրվող կարապիկի վրա կանգնած, խողովակի մեջ է անցկացնում այսպես կոչված «ժելոնկան»— մի յերկար մետաղյա դրան, վոր հատակի փոխարեն ունի մի փական : Փականը ժելոնկայի ներսում դեպի վեր է բացվում, դրա համար ել խողովակի մեջ լցված նավթը հեշտութեամբ այդ կլապանով ներս է մտնում ժելոնկայի մեջ, յերբ վերջինս ցած է իջեցվում : Յերբ ժելոնկան վեր է բարձրացյերբ վերջինս ցած է իջեցվում : Յերբ ժելոնկան վեր է բարձրացյերբ վում, նրա մեջ հալարված նավթի ծանրութիւնից կլապանն ինքն իրեն փակվում է, իսկ նավթը մտնում է ժելոնկայի մեջ : ժելոնկան դուրս քաշելով՝ բանվորը ժելոնկայի հատակը խփում է դետնին, փականը վեր է բարձրանում և նավթն արագ կերպով դուրս է հոսում ժելոնկայից : Նավթը հալարվում է հատուկ ավազաններում : Նավթը յերբեք մաքուր վիճակում չի ստացվում, այլ միշտ ջրի, ավազի և այլ նյութերի խառնուրդ է կաղմում :

ՅԵՐՐՈՐԴ ԴԱՍ

ԹԵՄԱ. ՎՐԱՅԱԿԱՆ ԽՍՀ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ (ՏԵՍ ԾՐԱԳԻՐԸ)

Դասի մեքոդական պրիմները

1. Ուսուցչի պատմելը Վրացական ԽՍՀ-ի մասին և աշխատանք քարտեզով - 30 րոպե:

2. Կրկնութիւն - 10 րոպե:

3. Տնային առաջադրութիւն - 5 րոպե:

Նախորդ դասի հաշվառումը կատարվում է Վրաստանի մասին նյութը պատմելիս, վերջինս համեմատելով Ադրբեջանական ԽՍՀ-ի և Հայկական ԽՍՀ-ի հետ:

Դասի կահավորումը.

1. ԽՍՀՄ-ի Ֆիզիկական և վարչական քարտեզը:

2. Կովկասի Ֆիզիկական քարտեզը:

3. Աշակերտների համար դասադրքեր և քարտեզներ:

4. Գնդասեղների վրա գուռնավոր փոքր դրոշակներ:

Անցնելով թեմայի մշակմանը՝ ուսուցիչը հիշեցնում է ընկ. Մոլոտովի ասած խոսքերը Վրաստանի մասին, վոր վրացական ժողովուրդը... «չառ բան է տվել վոչ միայն իր յերկրին, այլև վողջ Խորհրդային Միութեանը, և պատվավոր տեղ է գրավում մարդկութեան պատմութեան մեջ: Բավական է ասել, վոր Վրաստանը մեզ տվել է ընկ. ՍՏԱՆԻՆԻՆ (ընկ. Մոլոտովի ճառից, արտասանած Խորհրդային Վրաստանի պատգամավորութիւնը կրեմլում կուսակցութեան և կառավարութեան ղեկավարների կողմից ընդունելու ժամանակ: Տես «Պրավդա» 21 մարտի, 1936 թ.):

Աշակերտներին առաջարկվում է «բացեք դասադրքի քարտեզը (ասվում էջը) և քարտեզի վրա ցույց տվեք ընկ. ՍՏԱՆԻՆԻ ծննդավայրը՝ Գորի քաղաքը:

Այնուհետև ուսուցիչը դժագրում է Անդրկովկասի սխեմատիկ քարտեզը (տես առաջին դասը) և առաջարկում է աշակերտներին վորոշել Վրացական ԽՍՀ-ի աշխարհագրական դիրքը:

Ի՞նչ ավտոնոմ հանրապետութիւններ և մարզեր են մտնում Վրաստանի կազմի մեջ:

Արխաղական ԱԽՍՀ (Սուխումի քաղաքով,) Աջարական ԱԽՍՀ (Բաթումի քաղաքով) և Հարավ Ռսեթիայի ԱՄ (Ստալինի քաղաքով):

— Ի՞նչպիսին է Վրաստանի բնութիւնը: Հայանորեն աշակերտները կպատասխանեն, վոր Վրաստանն ունի խոնավ, յենաթարեադարձային կլիմա: Համաձայնելով այդ պատասխանի հետ՝ ուսուցիչն առաջարկում է դասադրքի քարտեզի վրա դտնել Սուրամի լեռնաշղթան, վոր ձգվում է Սուրամ քաղաքից դեպի հյուսիս և դեպի հարավ, ինչպես և առաջարկում է վերհիշել, ինչ վոր նրանց հայտնի յե Սուրամի լեռնաշղթայի նշանակութեան մասին, վորպես կլիմայաբաժան դծի:

Պարզվում է, վոր Վրաստանը գրավում է Անդրկովկասի արևմտյան, ավելի խոնավ մասը, Ռիոնի դաշտավայրով և արևելյան չորային Անդրկովկասի մի մասը, Կուրի հովտի վերին հոսանքով:

Այնուհետև կարելի յե հարցեր տալ այն մասին, թե նմանութեան և տարբերութեան ինչ կողմեր կան Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի միջև:

Պարզվում է, վոր Վրաստանն ունի ավելի բազմազան կլիմա:

Վրաստանի գետերը. Կուր, վորը իր վտակներով հոսում է դեպի արևելք, իսկ մյուսները՝ Ռիոն, Ինդուր, Կոուր— հոսում են դեպի արևմուտք և թափվում են Սև ծովը: Վրաստանի կատաղի գետերն իրենց մեջ մեծ չափերով եներդիս յեն պարունակում: Դա Վրաստանի գլխավոր բնական հարստութիւններից մեկն է: Վրաստանի հիդրոէներսներով հարուստ լինելը կապված է նրա լեռնային սելեքի և տեղումների առատութեան շնորհիվ ջրառատ գետերի հետ: Վրաստանը հիդրոէներդիայի պաշարներով դերադանցում է կապիտալիստական այնպիսի յերկրներից, ինչպես որինակ՝ Նորվեգիան, Շվեյցարիան, Իտալիան, Ճապոնիան, Ֆրանսիան: Վրաստանի տերիտորիայի յուրաքանչյուր մեկ քառակուսի կիլոմետրի վրա ընկնում է 200

ձիու ուժի ջրային եներգիայի պաշար, այնժամանակ, յերբ Նոր-վեղիան ունի 38 ձ. ուժ, Իտալիան՝ 28 ձ. ուժ, Ճապոնիան՝ 21 ձ. ուժ, և ԱՄՆ՝ 7,6 ձ. ուժ (այս թվերն ուսուցիչը գրում է դրատախտակի վրա): Վրաստանի էլեկտրոկայանների կարողությունը 1913 թ. ընդամենը 8000 կիլովատ էր, իսկ 1936 թ. 175,000 կիլովատ: Այս աճը սոցիալ-տնտեսական փոփոխությունների հետևանք է: Վրաստանը ցարական Ռուսաստանի գաղութից 1921 թ. դարձավ ազատ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն: Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի հզոր դարգացումը, կուլտուրայի վերելքը և բնակչության նյութական բարեկեցության աճը մեծ չափերով էլեկտրոններիցիայի պահանջ են առաջադրում: Ելեկտրիֆիկացիան (գետերի եներգիայի ոգտագործման ճանապարհով) դարձել է յերկրի ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման հիմքը:

Սակայն Վրաստանը հարուստ է և թանգարժեք ողտակար հանածոներով: Ուսուցիչը հրավիրում է աշակերտներին և առաջարկում է փոքրիկ գործակներ ամրացնել մարզանեցի, քարածխի, նավթի հանքավայրերում: Ապա ուսուցիչը հիշատակում է Վրաստանի անտառային հարստությունը, այդ թվում և եքսպորտային նշանակություն ունեցող անտառը:

Անցնելով Վրաստանի տնտեսության բացատրմանը, ուսուցիչը առաջարկում է լսել, թե ի՞նչ են դրել Խորհրդային Վրաստանի աշխատավորներն իրենց նամակում ընկ. ՄՏԱԼԻՆՆԻ Ժողովրդական հանձարը տիրապետեց անտակ խորքերի

ընդերքին:

Վրաստանը դարձավ հարուստ և արդյունաբերական յերկիր: Յերկրի կուրծքն ազահորեն պատռելով՝ ժայռերն է քանդում ղինամիտը:

Մարմար, մարզանեց և քարածուխ է մեղ առատորեն նվիրում յերկիրը:

Որ ուրի վրա հանքն է անդադար լցվում դոմնաների մեջ, Վորպեսդի Փերրոճուլվածքի պաշարներ միշտ ունենա մեր Միությունը:

Համամիութենական և համաշխարհային նշանակություն ունի և անուն է հանել ձիաթուրի մարզանեցը: ձիաթուրի մարզանեցն ուղարկվում է նաև Ուրալ և Կուզբաս ու արտասահման (Փոթի նավահանգստով): Նրա մշակումն սկսվել է 60 տարի սրանից առաջ: Սակայն ձիաթուրի մարզանեցի մշակումը կատարվում էր պրիմիտիվ կերպով, կիսատնայնագործական տիպի մանր ձեռնարկությունների միջոցով և բացառապես ձեռքի աշխատանքով: Աշխատանքը ծանր էր և հոգնեցուցիչ: Պետք էր աշխատել խոնավության մեջ, ուր վորպես բնակարան ծառայում էլին ժամանակավոր շենքերը—մարազները, վորոնք միաժամանակ ողտագործվում էլին վորպես յեգների և ձիերի դոմեր:

Ահա թե ի՞նչ են դրել ընկ. Ստալինին ձիաթուրի ստախանովական լեռնագործները 1935 թ. դեկտեմբերին.

«Անճանաչելի յե դարձել ձիաթուրի լեռնագործի կյանքը: Ի՞նչպես էր սպրում մեր բանվորն առաջ մինչև Խորհրդային իշխանությունը: Գիշեր և ցերեկ 14-16 ժամ աշխատում էր լեռնագործը խոնավ, ձեթի ճրագներով լուսավորվող հանքահորերում, կերակրվելով միմիայն յեղիպտացորենի հացով, չունենալով բնակարան և քնելով հենց այնտեղ՝ հանքում: ձիաթուրի լեռնագործի այս անուրախ և իրավազուրկ կյանքը մասին ամենից լավ դու գիտես, մեր հարագատ Կորա (ընկ. ՄՏԱԼԻՆՆԻ կուսակցական կեղծ անունը նախահեղափոխական շրջանում):

Դու առաջինն էլիր, վոր կազմակերպեցիր և վճռական մարտի տարար արյունարբու ցարիզմի և կապիտալիստների դաժան կամայականությունների դեմ, 30 տարի սրանից առաջ ղլխավորելով ձիաթուրի բանվորների հզոր գործադուլը...»

Ներկայումս Մարզանեցի հանքերը մեխանիզացիայի յեն յենթարկված, ձեռքի աշխատանքը փոխարինված է մեքենաներով, հորատող մուրճով և այլն:

Հանքի դուրս հանումը և տեղափոխումը կատարվում է էլեկտրական ողային լարավոր ճանապարհներով, վոր այժմ վոխարինում է դյուղասանտեսական սայլակին:

Մարազները և անասունների բնակարանների փոխարեն

Ճիաթուրի լեռնագործների համար կառուցված են լուսավոր և կուլտուրական բնակարաններ:

Աշխատանքի պայմանների և կենցաղի բարելավումը, ինչպես և ստախանովական շարժման դարգացումը մարզանեցի արտադրանքը Ճիաթուրի հանքերում 1913 թ. նկատմամբ բարձրացրել են ավելի քան 3 անգամ:

Ճիաթուրի մարզանեցը և եժան հիդրոէներգիան հնարավորութուն են տվել Զուղելի քաղաքում հիմնել Փերրոմարդանեցի գործարան:

Քարածխային արդյունաբերություն նախահզավորական Վրաստանում համարյա թե չկար: Ներկայումս մշակվում են Տկվիրուլիի և Տկվարչելիի քարածխի հանքերը: Տկվիրուլիի և Տկվարչելիի քարածուխը հումք է հանդիսանում Ռինոնի պարարտանյութերի կոմբինատի և նրա ջերմեկտրոցենտրալի համար:

Հսկայական նշանակություն ունեն նավթամուղ գործարանները Բաթումիում, վոր սարքավորված են տեխնիկայի վերջին խոսքի համաձայն: Իսկ վո՞րտեղից և ի՞նչպես է Բաթումիում հում նավթ ստացվում: Դա ստացվում է նավթախողովակներով ու յերկաթուղով՝ Բաղվի նավթահանքերից: Բաթումիից նավթամթերքներն արտահանվում են դեպի արտասահման, ինչպես և տարվում են դեպի ՌԽՍՀ-ի նավահանազիտները:

Բացի Բաղվի նավթի վերամշակումից, Վրաստանը հայտնի չէ նաև այդ թանդարժեք վառելանյութի սեփական հանքավայրերով: Սրբեն արդյունաբերական նշանակություն ունեցող հորավորվածքների հիմք է դրված Կախեթիայի տափաստանի հարավային մասում (Շիրակի նավթը):

Վրացական մարմարը զարգարում է Մոսկվայի մետրոյի պատերը:

Վրաստանի Կապրեկի շրջանում (Որշոնիկիձե և Թբիլիսի քաղաքները միացնող Ռազմավիրական ճանապարհի վրա) 1930 թվից անդեղիտի-թթվախաղան քարի վերամշակման աշխատանքներ են դնում: Անդեղիտն ոգտագործվում է ջրիական արդյունաբերություն մեջ (Կապրեկի անդեղիտից է կառուցված Չերնոսրեչինսկի, Ուրեսսայի և Կոնստանտինովսկի համամիութենա-

կան նշանակություն ունեցող ջրիական գործարանների սարքավորումը): Վրաստանն այժմ լիտոգրաֆիական քար է մատակարարում վոդլ Միությանը: Իսկ դեռ քանի՞ տեսակ հանածոների արդյունահանում է սկսվել միայն Խորհրդային իշխանության ժամանակաշրջանում: Զուր չէր, վոր Վրաստանի աշխատավորներն ասացին, վոր ուսսական ցարը զբաղված լինելով ժողովրդի հետ դատաստան տեսնելու գործով, «չէր տեսնում, թե ինչ է սլաուկած իր կոշիկների տակ»:

Նախախորհրդային Վրաստանը մեքենաներ չէր արտադրում, նրա «մետաղարդյունաբերությունը» լքողկացած Ներ կիսատնայնադործական արհեստանոցներից, արտադրություն անդրջրհեղեղյան միջոցներով: Ներկայումս Վրաստանում սարքավորում է արտադրվում թեյի (Բաթումի քաղաքում), դինեգործական և մետաքսագործական (Թբիլիսի քաղաքում) արդյունաբերության համար (ի միջի այլոց, տեքստիլ մեքենաների գործարանը սարքավորում պատրաստեց Թուրքիայի տեքստիլ կոմբինատի համար: Այդ որինակից յերևում է, թե վորքան հեռու յեն անցել Անդրկովկասյան հանրապետությունները, մասնավորապես Վրաստանը, իրենց արտասահմանյան հարևաններից):

Ուսուցիչը մատնանշում է, վոր մեքենաչինությունը Վրաստանում մասնադիտացած է տեղական հումքի հիման վրա զարգացած տեղական թեթևավ արդյունաբերությունը սպասարկելու գծով:

Այնուհետև ուսուցիչը առաջարկում է բանալ դասադրքի քարտեղը և պարզել, թե դյուղատնտեսական ի՞նչ կուլտուրաներ և վո՞րտեղ են տեղարաչված Վրաստանում: Պարզվում է, վոր Արևմուտքում ամենամեծ զարգացում ստացել են այգեգործությունը (հատկապես ցիտրուսային բույսերի) և խաղողարուծությունը: Դրան ավելանում է Արխաղիայում ծխախոտը, Աջարիայում՝ թեյը: Այգեգործությունը և հատկապես խաղողարուծությունն ուժեղ կերպով զարգացած են Կախեթիայում (Ալազան դետի հովիտը) և Կուրի վերին հոսանքներում: Կուրի հովիտում (Ղարալազի չոր տափաստանը) արեվելըում սեպի նման ներս են մտնում բամբակի ցանքերը: Դյուղատնտեսություն հին ճյուղերից

մեկն և շերամապահուցիչները: Արեւմտյան Վրաստանի բնակչության համար նա մի կարևոր ոժանդակ զբաղմունք և, հատկապես Գուլիստի շրջանում:

— Ի՞նչպիսի թեթև արդյունաբերություն կա Վրաստանում: Աշակերտները պատասխանում են: Ուսուցիչը նշում է այդ արդյունաբերական ճյուղերի տեղաբաշխումը և կատարում է լրացուցիչ գիտողություններ, բնութագրություններ. կան բազմաթիվ մետաքսամանարաններ, և Թբիլիսիում ու Գուլիստում վերջերս կառուցվել են մետաքսադորձարաններ:

Լայն ծավալ է ստացել դործվածքի և կարի արդյունաբերությունը: Աճել է թեյի արդյունաբերությունը (Բաթումիում և Թբիլիսիում), ծխախոտի արդյունաբերությունը (Սուխու-միում): Գինեգործական և մրդակոնսերվային արդյունաբերությունը:

Վրաստանի առաջ դրված խնդիրը— լիովին ապահովել թեյի և ցիտրուսային մրդերի ԽՍՀՄ-ի պահանջը— հաջող կերպով իրագործվում է (նախահեղափոխական շրջանում արտադրվել է 500 հազար կիլոգրամ թեյ և 5 միլիոն հատ ցիտրուսային մրդեր. իսկ 1936 թ. արտադրվել է 20 միլիոն, կիլոգրամ թեյ և 500 միլիոն հատ ցիտրուսային մրդեր):

Թեթև արդյունաբերության զարգացումն ուղղակի կերպով կապված է դյուրդատնտեսության սոցիալիստական վերակառուցման հետ: Խորհանտեսությունների և կոլտնտեսությունների (1937 թ. կոլեկտիվացած եր տնտեսությունների 76,5%-ը) կազմակերպումը թույլ տվեց ստեղծելու դյուրդատնտեսության ավելի ճիշտ մասնազիտացում, քան առաջ եր, մտցնել նոր մեքենայական տեխնիկա, ավելի հողատար խնամք կազմակերպել հողի նկատմամբ, ոտարերկրյա նոր կուլտուրաներ մտցնել, դյուրդատնտեսական նոր հողամասեր յուրացնել (վոլոդման և ճահիճների չորացման հաշիվն):

Հիշատակված աշխարհագրական շրջանները (Կոլխիդա, Կախեթիա, Իմերեթիա) ցույց են տրվում պատի ջարտեզի վրա:

Լրացուցիչ կերպով ուսուցիչը պետք է կարդա կամ պատմի Կոլխիդայի մասին (տես հավելվածը), պատմի յենթարևելա-

զարձային մի շարք կուլտուրաների նշանակության մասին (եվկալիպտներ և այլն), վորպես արդյունաբերական հումք:

Խորդենին (репани) յեթերատու կուլտուրա յե: Նրա յուղը գնում է պարթյունների այլ արդյունաբերություն մեջ: Խորդենու աճեցումը կենտրոնացված է Աբխազիայում (խորդենու մեկ կիլոգրամ յուղն արժե 500 ուրլուց ավելի: ԽՍՀՄ-ն առաջին տեղը զբաղեց ամբողջ աշխարհում, դերազանցելով Ֆրանսիային— խորդենու յուղի արտադրության մեջ):

Ձինական ծառ տունդայի (տունդ-յու) պտուղները տալիս են շուտ չորացող և դիմացկուն յուղ: Նրանք լայն կիրառում են գտել բարձրորակ լաքերի և ներկերի արտադրության մեջ, վորոնք պաշտպանում են մետաղը ժանդից: Այդ լաքերն ու ներկերն ոգտադործվում են ավիացիոն, նավաշինարարական և արդյունաբերական այլ ճյուղերի մեջ:

Յեղրափակման մեջ ուսուցիչը հարցնում է, թե Վրաստանի համար ի՞նչն է համարվում համամիութենական մասնազիտացում և ի՞նչն ունի տեղական, հանրապետական նշանակություն:

Աշակերտներն առաջին կարգին պետք է դասեն լեռնարդյունահանական արդյունաբերությունը և թանդարժեք յենթարևելազարձային կուլտուրաների արտադրությունը, ինչպես և սննդի արդյունաբերությունը (դինեգործություն, պահածոների և թեյի արդյունաբերություն), յերկրորդին՝ մեքենաշինությունը և թեթև արդյունաբերությունը:

Այնուհետև ուսուցիչը նշում է, վոր Վրաստանն ունի համամիութենական կուլտուրային նշանակություն (դիտվում է դասադրել ըբարտեղը):

Ի վերջո, ուսուցիչը նշում է Վրաստանի տնտեսական յերեք հիմնական շրջանները— Սև ծովյան մերձափնյա շրջանը (Կոլխիդայի հետ միասին), Իմերեթիան և Կախեթիան, ու առաջարկում է աշակերտներին ինքնուրույն կերպով տալ այդ շրջաններից յուրաքանչյուրի տնտեսական— աշխարհագրական բնութագրությունը, գլխավոր բնական առանձնահատկություններն ու հարստությունները, արդյունաբերությունը, նրա կապը դյուրդատնտեսության և հանածոների հետ, կապը Վրաստանի այլ շրջանների և ԽՍՀՄ-ի հետ:

Տնային առաջադրանքներ. 1. Սովորել դասադրել համար-
պատասխան բաժինը (նշվում են եջերը):

2. Գծագրել Անդրկովկասի հանրապետութիւնների փոխա-
դարձ կապերը ցույց տալով քարտեզ ԽՍՀՄ-ի ժողովրդական
տնտեսութեան սխեմանում:

Իրա համար ուղիղ գծերով գծագրվում է Անդրկովկասի և
նրա առանձին հանրապետութիւնների սլառերը և սլաքներով
ցույց է տրվում, թե վո՞րտեղից ինչ է արտահանվում կամ
ներմուծվում, հաղորդակցութեան ի՞նչ ճանապարհներով ու մի-
ջոցներով և ո՞ւր է տարվում:

Հաջորդ դասին աշակերտներին մեկին առաջարկվում է գրա-
տախտակի վրա գծել տանը պատրաստած միջըջանային կապե-
րի սխեման, իսկ մյուսներին առաջարկվում է կատարել լրացում-
ներ և ուղղումներ:

Գրականութիւն ուսուցչի համար

1. Լ. Բերիա. Անդրկովկասի Բուլշևիկները սոցիալիզմի հա-
մար մղված պայքարում. «Բուլշևիկ» №11, 1934 թ.:

2. Լ. Բերիա. Ժողովուրդների միասնական ընտանիքը.
«Պրավդա» 7 նոյեմբերի 1937 թ.:

3. Բ. Ոստրովսկի. Խորհրդային յենթարեվադարձային մշա-
կույթները:

4. Վրաստանի 15 տարին:

5. Ն. Իյուշին. Վրացական ԽՍՀ:

6. Ն. Միխայլով. Յերկրի գեմքը փոխվում է:

ՆՅՈՒԹԵՐ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՌՈՒԴԻՈՆ ԿՈՐԿԻՆ

Բոցավառ Կոլխիդան («Պրավդա» 1936 թ. 14 հոկտեմբերի)

Ներկայիս Կոլխիդան ընկած է Սև ծովի ափին և աչքի յե ընկ-
նում մալարիայով ու իր անանցանելի ճահիճներով: Ծահիճներն
ընդերկել են մի հսկա տարածութիւն—225 հազար հեկտար:
«Մեռյալ հող»— այսպես է անվանում ժողովուրդն այս տարա-
ծութիւնը:

Կոլխիդան առատ է անձրևներով: Անձրևները գալիս են և՛
աշնանը, և՛ ամռանը, և՛ դարնանը, և՛ ձմռանը:

Այստեղ, վորոչ տեղերում, տարվա մեջ 119 որ անձրևային է
լինում: Զրեքը հավաքվում են ցածրադիր մասերում և ճահճաց-
նում են հողը: Զուրը չի կարող հոսել դեպի ծովը, վորովհետև
զաշտավայրը ծովից բաժանված է դյուներով: Ծովն ողակվելով
այդպիսի դյուներով, չի ցանկանում ընդունել դարչահոտ ջուրը:

Կոլխիդայի ճահճացմանն ոժանդակում են նաև գետերը:

Այստեղ շատ են մանր գետակները. անհայտ է, թե վո՞րտեղ է
նրանց աղուները, և վո՞րտեղ նրանց գետաբերանը: Ու նրանք ան-
շարժ ընկած են ճահճուտների մեջ: Անձրևների ժամանակ գետերն
ուռչում են, դուրս են գալիս իրենց ափերից, վորողում են շրջա-
կայքը, բայց կրկին հետ չեն դառնում իրենց մայր գետի հունը:

Ծահճոտ հողերն ամբողջովին ներծծված են ջրով: Ծառ նեն-
գավոր են այդ հողերը: Նայում եք նրանց և թվում է ձեզ, թե
այդ հողերն ամուր են, քանի վոր յերեսից ծածկված են կանաչ
խոտով, իսկ թե սխալվեք վտաք գնել նրանց վրա, ճահճուտը ձեզ
ներս կքաշի:

Մտորեցրկրյա ջրերը նույնպես անում են ճահճուտները: Տեղ-
տեղ բավական է վտաքով դուրս գետինը և նա կարճակի խուլ

ճայներ: Ճահճուտը դյուզները շրջապատում է մոծակների ամպերով և մալարիայի բներով:

Ճահճուտների միջին մասերում կան նաև բարձրադիր մասեր: Այդտեղ բնակվում են մարդիկ: Այստեղ ողբ լավ է և ջուրը պիտանի յե խմելու համար: Իսկ մի 100 մետր դրանից հեռու ընկած են ցածրադիր մասեր և այդտեղ թե ողբ և թե ջուրը հոտած են և անդուր: Մի ժամանակ ժողովուրդը մտածում էր. այս վայրերում ապրում է «Ուժմուրիներ» — դա ջերմն է — դողերոցը, Կոլխիդայի չար վողին: Այստեղ ջերմախտով հիվանդանում են բոլորը — մարդիկ, կենդանիները, թռչունները, բույսերը:

Կոլխիդայի ճահիճների չորացման միտքը հղացվել է դեռևս հեղափոխութունից առաջ: Հայտնի հասարակական գործիչ Ն. Նիկոլաձեն Իտալիայից հրավիրեց հիդրոտեխնիկ ժերվեյին, ուսումնասիրելու համար այդ աղետաբեր վայրերի չորացման հարցը: Սակայն հին ուսման ժամանակ այդ ձեռնարկության իրականացմանը խոչընդոտ էր հանդիսանում մասնավոր սեփականատիրութունը: Ճահիճների տեղերը չեյին ցանկանում դիջել իրենց իրավունքներն այդ ճահճոտ վայրերի նկատմամբ, իսկ պետութունն էլ չէր ցանկանում փոփոխության յենթարկել «ծովայինյա» իրավունքը (մի իրավունք, ըստ վորի ծովազրյա բնակիչները մասունեյին այն ասլրանքներից, վոր նրանք նավարկելության ժամանակ ազատում էյին): Այդ պատճառով էլ խորաակվեց ձեռնարկած հանրագուտ գործը:

Միայն Խորհրդային իշխանության ժամանակ ինչպես կարգն է ձեռնարկվեց Կոլխիդայի վերածնմանը: Կազմվեցին ճահիճները չորացնելու սլրաններ և միահամուտ կերպով համառորեն հարձակում սկսվեց «Մեոյալ հողի» վրա եքսկավատորներով, հողաքերիչներով, կատերպիլերներով, ուռֆելերներով:

Ճահիճը չորացնում են ջրանցքներով: Այդ ջրանցքները փորված են հաճախ միմյանցից 200 մետր հեռավորության վրա: Այդ բոլորն ի վերջո միանում են մի մեծ գլխավոր ջրանցքի հետ: Այդ ջրանցքն ունի 43 կիլոմետր յերկարութուն, 12 մետր լայնության և 4 մետր խորութուն: Այդ ջրանցքն անցնում է Կոլխիդայի ամենասարսափելի մասով, Կորատի կոչված վայրով: Այժմ այն-

տեղ չորացված է անացանկի ճահճուտների մի խոշոր հողամաս, ստեղծված է նոր, բերրի հող, լուսավորում է ելեկտրականութունը և հիմնվել է բանվորական ավանը ու կոլխոզային նոր դյուզը:

Ճահիճները չորացնում են նաև ջրով: Այս տեխնիկական պարագոքը կոչվում է «կալմատեցիա»: Բանը նրանում է, վոր Ռիոնը, ինչպես և Կոլխիդայի մնացած բոլոր դետերը, չափազանց հարուստ են տիղմով: Մի տարվա մեջ այդ բերված տիղմը հասնում է 10 միլիոն խորանարդ մետրի: Այդ պատճառով էլ Փոթի քաղաքը, վոր ընկած է Ռիոնի դետաբերանում, հետզհետե հեռանում է ծովից: Ջրի վարարած ժամանակ այս տիղմախառն ջուրը խորհրդային ճարտարապետները շյուղների միջոցով բաց են թողնում ճահիճների վրա: Տիղմը նստում է, ամրացնում է հողը, իսկ ազատված մաքուր ջուրը հոսում է ջրանցքներով:

Վերին արտիճանի հետաքրքիր է ճահիճների չորացումը ուռֆելների միջոցով: Լողացող եքսկավատորը կանգնած է ճահճի մեջ և փորում է հողը: Հատուկ սարքավորումների միջոցով այդ հողն ընկնում է մոտիկ կանգնած բարձի մեջ, վորտեղ անընդհատ թափվող ջրի շնորհիվ հողը շատ ջրիկ ցելս է դառնում: Ջրով բացված այդ հողը խողովակներով ցրում են ճահճի վրա:

Այնտեղ նրա կոշտ մասերը նստում են դետին, պնդացնում են ճահճային հողը, իսկ ջուրը ծծվում է ջրանցքների մեջ: Յեվ ահա դուք կանգնած եք ուղիղ ճահճուտի ափին. հենց վրաք դնեք, իսկույն կորած եք: Սակայն «Կոստոր» շողենավի եքսկավատորը խողովակներով ճահճի վրա բաց թողեց ջրիկ ցելսը: Յեվ ուղղակի ձեր աչքի առաջ ճահիճն անհետանում է. դուք կարող եք արդեն միանգամայն հանդիստ սրտով ման դալ առաջվա այդ ճահճուտների վրա...

Պատահում է, վոր ճահիճը պայթեցնում են դինամիտով: Դա նույնպես չորացման մի միջոց է: Փորում են խոր փոս և դնում նրա մեջ ամոնալ: Հողի հսկայական մասսան թռչում է դեպի յերկինք, ցրիվ է դալիս և վորպես սև անձրև թափվում է ցած: Դրա մոտ փորում են յերկրորդ փոսը և պայթեցնում, ապա յերրորդը և այսպես շարունակ: Դրանից հետո առաջացած փոսերը

միացվում են վորպես մի խոր ջրանցք, դեպի ուր և հոսում են գետնի տակի ջրերը:

Այսպես Կոլխիդայում ծնվում է նոր, խորհրդային հողը: Բայց միայն ճահիճների չորացմամբ չէ, վար Կոլխիդայում գրադվում են մարդիկ:

Նրանք փոխում են իրենց յերկրի աշխարհագրությունը: Ծառ չուտով ներկայիս Փոթիի նավահանգիստը հնարավորություն չի ունենա բուսելու Ֆարքիկա-գործարանային արտադրանքի և ցիտրուսային պտուղների այն հողա քանակությունը, վար կտա նոր Կոլխիդան: Դրա համար ել 7 կիլոմետր հեռու, Ռիոնի համար պատրաստվում է նոր հուն: Գետը կփոխի իր հազարամյա ուղղությունը: Նրա նախկին դետաբերանը կլցնի ծովային ջուրը: և ծովը կմիանա Պալեստամի լճին: Այսպես կստեղծվի ծովային նավահանգիստ: Այդ մեծ աշխատանքն արդեն սկսված է: Ռիոնի նոր հունն արդեն փորված է: Ծուտով դեռը դեպի ծովը կքնթանա նոր ճանապարհով և Փոթիի մոտ ծովը ներս կմտնի ցամաքի խորքը: Դա կչորացնի և կառողջացնի նաև քաղաքը, վորի մասին յերգվում է Ժողովրդական մի հին յերգում.

Մի՞թե կարելի չէ չորացնել Փոթին:

Յեխ ու ազմի մեջ է նա ամբողջովին...

Յեվ իսկապես, անձրևների ժամանակ քաղաքը տառացիորեն լողում է ջրի մեջ: Ռիոնը դուրս է դալիս ավերից և ծածկում է Փոթիի փողոցները: Ռիոնը նոր հունով հոսելուց հետո ջուրն այլևս կանգ չի առնի քաղաքում և Փոթին կվերածվի համատարած ցիտրուսային քաղաք-պարտեզի:

Կոլխիդայի դաշտավայրի վրա լույս է տալիս այսոր ջերմ արեգակը: Նա ցրել է հավիտենական մառախուղը, ջերմացրել է հողի կուրծքը, դուրս է վանդել ընդմիջա «անոթելես» մոծակը: Նոր հողի վրա աճել են նոր բնակավայրեր, այն թավուտներում, վարտեղ դարերով իսկ արեգակի լույսը չէր թափանցում, այժմ ամենայն առատությամբ լույս է տալիս արեգակը և երեկտրակա նախնությունը: Այնտեղ, վորտեղ մի ժամանակ վրոճում էին չախկալները, այժմ լազիոն է լսվում: Կենդանացել է կախարդված

մեռյալ թաղավորությունը և յերջանիկ Սաալինյան դարաշրջանի մարդը կառուցում է այստեղ նոր կյանք, նոր կուլտուրա:

Կոլխիդային նախագծումներով չորացված հողը տեղաբանների միջև կբաշխվի հետևյալ կերպ. ուսմի—100 հազար հեկտար, թեյ— 50 հազար հեկտար, ցիտրուսներ— 20 հազար հեկտար, յեղիպտացորեն—20 հազար հեկտար, բանջարանոցներ— 20 հազար հեկտար և տեխնիկական կուլտուրաներ—15 հազար հեկտար:

Ռումին չինական յեղինջն է: Նրանից պատրաստում են արհեստական մետաքս: Մի տարվա մեջ նա յերեք անգամ բերք է տալիս:

Ցիտրուսներն ունեն մեծ ապագա: Կիտրոնը, մանդարինը, նարինջը դարձել են արդեն սովորական մրգեր: Հրաշալի կերպով է աճում գրեյպֆրուտը— նարնջի և կիտրոնի հերթիչը: Փոթիի խորհունտեսությունում արդեն անկված են գրեյպֆրուտի մի քանի հազար անկիներ:

Չորս տարի առաջ այդ խորհունտեսության տեղում անանցանելի և անխորդարնակ ճահճուտներ էյին: Իսկ այսոր այստեղ փարթամ կերպով ծաղկում է ցիտրուսներից ամենաքնքշալ գրեյպֆրուտը: Կապիտալիստները մեղ վրա թանդ նստեցրին այդ բույսը և յուրաքանչյուր տեղու համար վերցնում էյին 2 ու 50 կվոտկով: Մրաի տրոփյունով էյին անկում փոթեցիներն այդ ստարերկրյա ծառը:

— Սա մեռած հող է, նա անիծված է, նրա մեջ վոչինչ չի բուսնի, —ասում էյին ծերունիները: Բայց գրեյպֆրուտը կապվ: Չորս հազար անկիներից փչացան միայն 70-ը: Յերեք տարվա վրա արդեն յերեացին պտուղներ: Այստարի կհավաքվի 20 հազար հատ այդ հրաշալի պտուղներից: Նրանց վորակը դարմանալի չէ. նրանք ախորժակ են բաց անում, պահպանում են որդանիղձը վարակիչ հիվանդություններից և սակավարյունությունից, բուժում են ջրադուրությունը, յերիկամների, ստամոքսի և աղիքների հիվանդությունները:

Տեխնիկական կուլտուրաների բուժման հիմնական վայրը հանդիսանում է Փոթի քաղաքն իր չրջաններով: Այստեղ, մայր բուժարանում ակլիմատիքացիայի փորձեր են կատարվում:

Տունդա ծառը, քաֆուրի, դրացենի, ուսմի ծառերը, եվկալիպտը, Ֆեյսոյան, Խաւալահան թուզը (վոր տարվա մեջ յերեք անգամ բերք ե տալիս), ազնիվ դափնին— այս բոլորը հավաքված են այստեղ և ուղեգրի յեն սպասում խորհրդային տնկարանները մեկնելու համար:

Հնդկաստանից, Արնաստանից, Ավստրալիայից, Նոր Զելանդիայից, Արևից, Յեյլոնից, Փլորիդայից, Ճապոնիայից, Իտալիայից այստեղ են բերվել անդրծովյան բույսեր: Այդ բոլորը տնկված են խորհրդային հողում, տրված է նրանց խորհրդային անցադիր—փոքրիկ սպիտակ տախտակ, վորի վրա նշանակված է բույսի անունը, ծառուժը և տարիքը: Շատ հետաքրքիր է եվկալիպտը, վոր բերված է Ավստրալիայից և Տասմանիայից: Նա իր հասակը մեկ տարվա մեջ բարձրացնում է 2-3 մետր: Իր հայրենիքում եվկալիպտը հասնում է մինչև 180 մետր բարձրության: Նա ջուր շատ է սիրում: Նրան տնկում են ճահճոտ վայրերում և հենց այդ ծառերն են այդ ճահճոտները չորացնում են: Հետաքրքիր են այն է, վոր այդ բարձր ծառն իսկի սովեր չի տալիս: Նրա տերևները դեպի արևն են թեքվում իրենց կողերով և չեն սրահում արեգակի ճառագայթները: Եվկալիպտը մալալիայի մոծակի մի քանի տեսակ է լինում. անանուխի, վարդապույն, Դիտրոնի մի քանի տեսակ է լինում: անանուխի, վարդապույն, Դիտրոնի սկիպիդարի: Եվկալիպտի այս բոլոր տեսակները շատ թանգարժեք յուղ են տալիս: Նրա ծաղիկները մեղուներն առատ հյութ են ծծում և դրանով պատրաստում հրաշալի մեղր: Այս ծառն առողջացնում է ողբ: Այս տարի Փոթիի շրջանում տնկվեց 400 հազար յերիտասարդ եվկալիպտ: Շուտով նրանք կծածկեն Կոլխիդայի վողջ տերիտորիան:

Վերակենդանանում է մեռյալ հողը: Այն վայրերում, վորտեղ մի ժամանակ ճահճոտներում վխտում էին դորտերն ու ոճերը, այսօր մարդուն բերկրանք է պատճառում ստախանովահան աշխատանքը: Սոցիալիստական Մեծ Հեղափոխությունը հարուստ է տալիս մեռյալ հողին, բուլչեիկյան եներգիան դարձնում է և կղարձնի նրան, այդ յերբեմնի անիծված և անպտուղ վայրը, բարեբեր և պտղատու:

Մի ժամանակ Կոլխիդայի անտառներում, Սև ծովի ափերին, թափառում էին անասնապահները: Ամառը նրանք հեռանում էին դեպի բարձր լեռները, ձմեռն իջնում դաշտավայրերը: ՅՏ տարի սրանից առաջ նրանց մոտ յեկան Բաթումիի բանվորները և խուրջիների մեջ բերին սպիտակ թուռցիկներ:

— Յեղբայրներ, — ասացին նրանք, — դուք տեսնում եք, թե ինչպես անարդար է կառուցված այս աշխարհը: Հողը դանդում է կարվածատերերի ձեռքին, Փարրիկաները՝ կապիտալիստների ձեռքին: Բանվոր ժողովուրդին բաժին են մնացել միայն անտառների տանջանքները: Բաթումիում յեկել է մեկ մոտ բանվորների հարապատ ու անկեղծ ընկերը: Նա տղապրել է այս թուռցիկները. տարածեցեք այս վերին Կոլխիդայում, ողնեցեք խորտակելու այդ անարդար կարգերը:

Դրանք բնի. ՍՏՍԱԻՆԻ ուղարկված մարդիկն էլին: Առաջին թուռցիկները ցրվեցին Կոլխիդայով մեկ: Նրանք մասսաների մեջ տարան Ստալինյան բացավառ խոտերը:

Այժմ այնտեղ, վորտեղ մի ժամանակ այդ թափառաչրջիկները — ըսչվորների բնակավայրն էր հանդիսանում, ծաղկում և կուլեկուրվ անասնապահությունը: Հովիտներում, վորտեղ չըջում էլին ընկ. Ստալինի աշակերտները, ծաղկում և սոցիալիստական կուլտուրան և նոր մարդը դովերդում է յուր նոր, յերջանիկ կյանքը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒՅՑՈՒՆ

	Եջ
Կրկնութիւնը աշխարհագրութեան դասերին	3
Յերկրագնդի կազմութիւնը (V դաս)	14
«Ուկրաինական ԽՍՀ» թեմայի մշակումը (VII դաս.)	44
«Անդրկովկաս» թեմայի կոնսպեկտը (VIII դաս.)	67

Պատ. խմբագիր՝ Բ. Չարչյան
Թարգմ. Ա. Հուզուրյան
Տեխ. խմբ. Ի. Վարդանյան
Սրբագրիչ՝ Գար. Հակոբյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Տեր-Մինասյան



Գրավիտի լիպոս Բ— 3173. Հրատ. 4419.
Պատվեր 51. Տիրած 2500
Թուղթ 62×94. Տպագր. մամ. 6½
Մեկ մամուլում 36480 նիշ. Հեղինակ. մամ. 4²⁄₅
Հանձնված և արտադրության 10 հունվարի, 1938 թ.
Ստորագրված և տպագրության համար 10 փետրվարի, 1938 թ.
Գինը 1ռ. 50կոպ.

ՊԵՏՀՐԱՏԻ 1 ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ, ԼԵՆԻՆԻ 65

«Ազգային գրադարան»



NL0235330

ԳԻՆԸ 1 Ռ. 50 Կ.

205

51.685

Методическая помощь ^Сучителям
ГЕОГРАФИИ
Гив Арм. ССР, Ереван, 1933 г.